5290
5245

Մանանդյան Հ.

Սարկավագին տարեցույցը

1914

ա. տ.

1913

059
Մ-24

45

2010

Հրատարակութիւն Ռ. ՍԱԳԱԵԱՆ

ՇԱՆԹԻԿ

# Սարկաւագին Տարեցոյցը

1914



Տպագրութիւն
Ռ. ՍԱԳԱԵԱՆ
1913

059
Մ-24

Հրատարակութիւն Ռ. ՍԱԳԱԵԱՆ

ՇԱՆԹԻԿ

# ՍԱՐԿԱՒԱԳԻՆ ՏԱՐԵՑՈՅՑԸ

# 1914

*Տարի մ'անցաւ պարապ, հին,*
*Թաղուեցաւ մէջ պարապին.*
*Ողջ հայերը տառապին,*
*Երգելով երգ կարապին. .:*

ՇԱՆԹԻԿ

Տպագրութիւն
Ռ. ՍԱԳԱԵԱՆ
1913

5290

# ՆԱԽԱՄՈՒՏ

## ՍԱՐԿԱՒԱԳԻՆ ՏԱՐԵՑՈՅՑԸ

Տարեցոյցներուն մէջն այս տարափին՝
Մարդիկ գործ չ'ունին, պիտի պարապի՛ն
Մէկ մէկ տարեցոյց գնել ի հարկին,
Որ զուարճանան մանչ, աղջիկ, այր, կի՛ն։

Շատեր շուարած այժմ կը խորհի՛ն.
— «*Կալմոշի՞նն* առնենք թէ այդ *Կիկոյին*,
«Թէ *Արամեանցին* կամ թէ *Թէոդիկ*,
«Ձեր մօտան անցաւ բայց. դուք ա՛լ հոտի՛ք...

Այր, կին, մանչ աղջիկ շուտով հաւաքուին.
Կ'առնեն Տարեցոյցն մեր Սարկաւագին,
Որուն յանգաւոր գրածներն անգի՛ն՝
Կ'երկարէ կեանքը մարդուն իսկ անկին։

9233-62

869-2002

# ՆՈՐ ՏԱՐԻ

ՄԱՆՈՒԿԸ.—

Նոր տարի է, Ամանո՛ր,
Յուսով նայիմ ես անոր
Զի մանուկ եմ զօրաւոր,
Երկարի կեանքս օրէ օր։

ԾԵՐՈՒՆԻՆ.—

Նոր տարի է, Ամանո՛ր,
Տրտում նայիմ ես անոր
Զի դառամ եմ՝ զերդ բեկոր
Փրթի կեանքես ի՛սկ մէկ օր...



ՇԱՆԹԻԿ

# ՍԱՐԿԱՒԱԳԻՆ ՏԱՐԵՑՈՅՑԸ

1914

## ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՔԱՐՈԶԸ

### ՄԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

---

*Գլուխս անցուցին փայլուն, սեւ վեղար.*
*Ըսին, — «Ի՛նչ աղուոր վարդապետ մ՚եղար...*
*«Աստուած կարգովդ քեզ հաստատ պահէ,*
*«Չար սահանքներէ, փորձանքէ, մահէ.*
*«Շատ աղէկ ըրիր վարդապետ եղար...*
*«Իրաւ որ վայլեց դէմքիդ ալ վեղար ..*
*«Աշխարհիկ խաչուած դարձար ա՛լ կղեր.*
*«Բայց ափսոս շրջիս խաղաղներ գիւղեր...*
*«Իրաւ չես կրնար դու մերթ ըլլի մերթ ա՛լ*
*«Սանկ ուրախարան մը կամ թատրոն մ՚երթալ.*
*«Ո՛չ ալ Սիրերս կամ պարահանդէս...*
*«Աղուոր աղջիկներ պիտ՝ անցնես անտես...*

«Բայց ինչ սիրտ ընես այդպէս կարգուիս,
«Տէ՛ս որ ժամ առաջ գերցնես քու միգ.
«Կե՛ր, խմէ՛ աղուոր, պարարէ քու փոր,
«Նայէ որ փարես կեանք մը փառաւոր:
«Կարգըւողները ամէն օր տեսնանք . .
«Ո՞ր տունին մէջ կայ խաղաղ, հանգիստ կեանք:
«Էն խերոյն է միջս, կ'ըսենք կը ճըւանք.
«Վարդապետ ըլլալ քաշուիլ նստիլ վանք.
«Աղջիկներն ալ թո՛ղ ըլլան մայրապետ,
«Հիւանդութեան մանչերն են՝ անզոր, անպետ . . .:
«Մարդըս անգամ մը որ կարգուեցաւ,
«Կ'ունենայ այդպէս հազար ու մէկ ցաւ.
«Դեռ նոր նշանուած՝ կը բռնեն քիթեդ,
«Չեն ձգեր որ մ'որ լայն շունչ մ'առնես գէթ,
«—Հայտէ՛ թեւ թեւի, կ'ըսեն, սանկ երթանք. . .»
«Տեսնես մէկ քայլիդ ծախսեր ես բիւր դանկ...
«Ա՛ս ող է, մատնի, զոյգ մ'ալ ապրշան
«Իմինին տանիմ կ'ըսես քրտնաջան...
«Ետեւէն մէջտեղ կ'ելլէ Սուրբ պահ...
«Ա՛լ հարուս ես նէ պարպէ քու քսակ . . .
«Ա՛ս նշանտուք է, ա՛ս կրօնական,
«Ասի մօմագին, ասի բարապան,
«Ա՛ս ազգային տուրք, Պատրիարքարա՛ն,
«Չես գիտեր բայց ո՛ւր կ'երթայ աս փարան...:
«Կարծես չը բաւեր այսքան հոգ, տերտեր
«Վերջն ալ պէտք է որ պահէ Տէրտէր...
«Ստիպուած ես տալ, մինչեւ վերջը տալ,
«Որ մ'ալ կը տեսնես կռուին հարս ու տալ,



«Կամ շուն ու կատու են հարս ու կեսուր.
«Կրնա՞ս նէ ա՛լ դու ելուր հաշտեցուր...
«Իբր թէ տանք ալ ո՛հ չեն բաւեր . . .
«Տեսնես կինդ յղի՝ կը բռնեն ցաւեր . . .
«Կը վազես դայեակ, բժիշկ կը բերես . . .
«Մէկ մ'ալ տնկուի Տէրտէրն ահերես...
«Տղան չը ծնած՝ կ'ըսէ – ե՞րբ կնքենք,
«Աղուոր անուն մ'ալ ուզէք դնենք մենք...
«Կարգաւ կ'ունենաք ա՛լ զաւակ, թոռնիկ . . .
«Ահա կ'սկսի լացն ու փոթորիկ,
«Բան գործ չունիս նէ լսէ՛ իր լալիք,
«Հագցուր ամէն օր պէպէք, խաղալիք...
«Դարձեալ կ'ունենաս մէկ ուրիշ զաւակ,
«Որ չափխըրն կ'ելլէ կամ շիրք, աւազակ.
«Աղէկն ալ բաղդէդ կը տանին զինուոր,
«Ասդին կը մնան բոլոր տուն տընուոր...:
«Հաս մըն ալ կ'ըսես, կը ծնի աղջիկ,
«Վերջն յուսահատած՝ կ'ըսես «ա՛լ ա՛խ չէ՛ք...»
«Հարսնցու է ալ՝ գլխարկ տեմոսէ...
«Նոր մ'առ ինձ կ'ըսէ ասի աւօրէ.
«Ու կարգաւ կ'ուզէ հոխանց կօշիկ.
«Ամէն նորոյթի կ'ուզէ հագուիլ շիք:
«Էն կարեւորը սակայն մենք մոռցանք.
«Ասոնք չեն բաւեր առ քեզ նոր փորձանք.
«Երբ աղջիկդ այս՝ է քիչ մը աղուոր,
«Ա՛լ ամէն մարդիկ աչք տնկեն անոր:
«Բայց սա՛ չը ճանչնար թէ դէմինն ո՞վ է
«Նայիս կը շարժի ինք ամէն հովէ...

«Կ՚ըսէ —«Հայրի՛կ սա՛ շատ տղայ տեսայ,
«Անիկա ա՛ռ դու ինծի՝ տուն փեսայ.—
«Է՛հ, ուզես չուզես, կը բանաս զոյգ դուռ,
«Դրամ ունիս նէ ա՛լ դիմացի՛ր, տո՛ւր...
«Մինչ անդին ալ քու համեստափայլ կին.
«Ծախսի նոր դուռներ բանայ անագին.
«Որ մ՚ալ պճրտքի մէջ դու սնանկանաս,
«Որուն երեսէն գայ խեղճիդ վնաս.
«Ո՛հ դառնայ կինդ... կին մը անառակ,
«Տուն ալ բամբասութիս մինչ առնէ առակ.
«Ա՛լ կ՚իյնաս կ՚երթաս, Պատրիարքարան,
«Կամ տեղդ կ՚ըլլայ հո՛ն դիմարխանան... :
«Ան կարգուիլը՝ էր մէկ ժամանակ,
«Աւելի շատ է մարդ ապրի մինակ,
«Քանիներ գիտեմ, իբր թէ կարգած,
«Մինչդեռ ռօման է կեանքերնին, փակած.
«Ո՛չ անկեղծ սէր կայ, հիմա, ո՛չ ամօթ,
«Ամուսնութեան մէջ չը մնաց համ, հո՛տ...
«Երանի քեզի որ չունիս ա՛ն հոգ,
«Գլուխդ մինչ տինն, կապրիս դու անհոգ.
«Զուլիս մտածում գաւ երկար բարակ,
«Անմէն օր կ՚ուտես հաւ, հաւկիթ, կարագ.
«Պաշտօնդ կատարես դու արագ արագ,
«Մինչ շրտեղով աղօթք պատարագ.
«Ու ձեռքդ բռնած խաչ ու գաւազան
«Պեճիլաս խօսիս ոճով զանազան
«Կարգ մը անբարիշտ մարդոց բարբարոս
«Տալով դու առատ խրատ ու քարոզ.



«Ու օրհնողներ մերթ փափկասուն, նուրբ,
«Ձեռքդ համբուրելով՝ կոչեն քեզ «Հա՛յր Սուրբ...»
«Վաղն ալ կ՚ընեն քեզ նաեւ ծայրագոյն.
«Ա՛լ կամաց կամաց փոխուի դէմքիդ գոյն...
«Ծաղկեայ փիղոնով կուրծքդ ալ շանչափայլ,
«Կը դառնաս այդուր մէկ դժուարահաճ.
«Կը տեսնես, եթէ կա՞յ շահ կամ աւար,
«Որ մ՚ալ առաջնորդ կ՚երթաս դու գաւառ.
«Քանի մը ամիս մնաս՝ բաւակա՛ն...
«Իսկոյն կ՚ստանաս մէկ վիճակական,
«Վերջն ալ կը դառնաս դու Եպիսկոպոս,
«Որքան ալ ըլլաս տգէտ բարբարոս...
«Գլուխդ դնես աղուոր Ջարաղ-թագ
«Կը փազես կու գաս հոս՝ Պոլիս շիտակ.
«Մինչ կը փայլեցես Ոսկեղջուր Ոսփոր
«Ու կը սպառես քու քանկն ու փոր.
«Այսպէս դու դարձած խիստ փարթես ու փորձ,
«Ա՛լ կ՚ըլլայ մինչ վերջ միայն քու բան գործ.
«Մինչ մեռնել բաղել, կատարել պսակ,
«Մինչեւ լեցնես քու խոշոր քսակ...
«Ա՛լ անկէ վերջը հանգիստ սիրտդ, հոգին,
«Խերը անիծես դու ա՛ս աշխարհքին...

*
* *

Քիչ մըն ալ մտիկ ըրէք իմ քարոզ.
Ամեն օր չ՚ուտուիր կաղանք ու կարոս.
Իրաւ այս խօսքեր շա՛տ ճի՛շտ են, շիտակ,
Բայց ականջի տեղ առնենք ձեռք դիտակ.
Թէ վարդապետին կեանքը շատ մաղէք,
Պէտի բախանցէք վիճակին աղէկ.

Ու այնտ՛ համոզուիք թէ անոր բուն կեանք,
Փուշերով լեցուն է մէկ տառապանք:
Ո՛վ լաւ Ձեզ թէ մարդն եղողն անկին,
Աշխարհի վրայ վարէ կեանք մ'անցին...
Ուր գրուած է որ մարդ մէջ իր կեանքին,
Ամուրի մնայ, փակուի մէջ վանքին...
Պօղոս Առաքեալն հարցնենք նայինք,
Տիմեթիոսին գրողն է բուն ինք...
Ի՛նչ կ'ըսէ կոր ան՝ իր մէջ նամակին,
—«Եպիսկոպոսին նոյն իսկ պէտք է կին...
«Ան որ կարգուք չէ, չունի զաւակ տուն,
«Ընտո՞ր ա՛ն ժամուն տեսուչ կարգես դուն.»
Ու խորհուրդ կուտայ, որ իսկ Սարկաւագ,
Կարգուած ըլլայ, ունենայ զաւակ.
Եւ ի՛նչ կ'ըսէ դեռ, լաւ ըրէք մտիկ,
—«Լաւ է կարգուիք քան այրիք, մըրկիք...»
Աս բանդն ես չեմ, Պօղոս առաքեա՛լ,
Որ տգէտ մը չէր, ա՛յլ լուսաւորեալ.
Զի ունէր գանկ մը ան խի՛ստ հրաշակերտ,
Յիսուսին ալ ան էր ի՛սկ աշակերտ.
Բուն օրէնուսոյց էր ան, ճարտասա՛ն,
Ինչեր դեռ գրած է թէ որ կարդաս ա՛ն.
Սոսկալի մարդ մ'էր, ա՛ն դէմքը խոժոռ,
Չափազանց ալ գէր, քիթը խի՛ստ խոշոր...
Բայց խելք ունէր ա՛ն, խե՛լք գանկին մէջ իր,
Չէր ուզեր որ նա մարդ գործէր ոճիր,
Ուստի Տիմէին կուտար նա պատուէր,
Որ կղեր չուտէ գոհ վանքին հաւեր...:



Տեսա՞ք աշխարհի հաշէն հասկցող,
Լոյս իջնէ վրան, առատ լոյս ու ցող.
Ես խղճի մտօք կ'ըսեմ իրաւոր,
Որ մինակ Պօղոսն էր բուն կրօնաւոր.
Ու կենաց բանին ճշմարիտ քարոզ...
Երանի թէ ան դեռ ողջ ըլլար հո՛ս,
Ո՛րքան ալ ըլլար ան զառամած, ծեր,
Մեր ժամն ու դպրոց շատոնց շտկած էր.
Ան մի՛շտ կը վազէր քաղաքէ քաղաք,
Կը բարձրանէր իր ձայնն, աղաղակ.
Ընկերական ա՛ն հեղափոխական....
— Մեր մէջ ալ այսօր այնպիսի ըսէք կան —
Բայց չ'ունէր ան ո՛չ, Պօմպա, Տիմանիս.
Այլ ջոկ գործածեր իր լեզուն ու միտ.
Իրաւ սկիզբէն ան էր ոճրագործ,
Բայց վերջը դարձաւ մարդ մը մեծագործ:
Մարդ մը միանձնեակ, կ'ըսեմ, առանձին՝
Աչքն առած ամէն վտանգն իր անձին՝
Ամէն խաւի մէջ մտաւ ու ելաւ,
Ուսումնասիրեց մարդուն կեանքը լաւ.
Ծեծ ալ կերաւ ան, թերեւս բիւր անգամ...
Սակայն իր մէջը չը պակսեցաւ կամ.
Մինչեւ վերջ պօռաց, լաւ ու գրեց,
«Ամուսնութեան Սուրբ խորհուրդն է այս մեծ.»
Ըսէ՛ք թերեւս — «ի՛նք է՞ր չամուսնացաւ,»—
Հարկաւ պատճառ մը կամ ունէր մէկ ցաւ,
Կամ յարմար խամէք մ'իրեն դէմ չելաւ...
Ուստի՝ ամուրի մնալ սեպեց լաւ.

Ան ծախու կ'ընէ սակայն, կըսեմ հո՛ս,
Մեր վարդապետներն ու Եպիսկոպոս.
Նոյն իսկ Պատրիարքն ու Կաթողիկոս,
Չեն արժեր իմ քովս այսօր կէս Պօղոս...
Որքան ալ ըլլան խելացի, բանգէտ,
Երբ չեն մտածեր անձերնին իսկ գէթ.
Ու դնեն օրէնք իբր թէ կանո՛ն...
Մինչ իրենք վարեն կեանք մը անկանոն...
Մինչեւ ե՞րբ շարք տեւէ այս վիճակ,
Ատանկ խայտառակ, տափակ ու միջակ,
Ի՞նչ մտայնութիւն է այս ո՛վ Աստուած,
Միթէ պողպատէ՞ ենք մենք հաստուած,
Մինչեւ ե՞րբ ապրի կղերն անկենի...
Ո՛հ... ի՞նչ դառն է մեր այս խիստ դաղակնիք.
Վեղարի մ'համար կնենք մենք արդ ուխտ՝
Ամուրի կ'ապրինք, շրջինք զերդ պանդուխտ...:
Խուց մը քեզ կ'ուտան, կատարեալ մէկ բանտ,
Ջո՛ւր տուող չունիս, երբ պառկիս հիւանդ.
Աչքերդ կը յառես մինչեւ վերջ Երկին,
Որ չէ պարգեւած անձնուէր մէկ կին...
Որպէս զի, կեցած մահիճիդ միշտ քով,
Գէթ մխիթարէ երբեմն իր խօսքով...
Ու ջերմերու մէջ ա՜լ կը զառանցես...
Ո՛հ, յուսահատած եմ նոյն իսկ անձէս...
Մարդ ես, կը տենչես աղուոր աղջիկ, կի՛ն,
Անվերջ սիրտ հոգիդ ա՜լ կը՛ բորբոքին...
Ծուարած առջեւ խղճիդ բողոքին՝,
Օր մ'ալ մատնուած ես դու դժոխքին...,



Այս տառապանքիդ ահա փոխադարձ՝
Թուք ու նախատինք մ'ալ կստանաս վարձ.
Գիտնալով հանդերձ ասի մեր մեծեր,
—Նախապաշարուած, զառամած ու ծեր.—
Մէկ կողմէն դարձեալ կը ջանան թէպէտ,
Ձեռնադրել շատեր կարգաւ Վարդապետ:
— Զեմ կարծեր որ մենք սահմանէն անցանք —
Հայ ժողովուրդին է բայց թո՛ւն յանցանք.
Որ ժամ մը առաջ չը խորհիր դարման,
Մեր հայ կղերին այսքան քէչ անկման:
Բայց իրաւ կ'ըսեմ, երբ օր մ'հայ կղեր,
Ածիլէ իրեն մօրուքն ու պեխեր.
Ու կարգուելու ելնէ անմոլոր,
Տեսնան աղջիկանց բացուի բաղդ բոլոր...:
Իսկ դուք որ այժմ մեծ մեծ բարբարիք,
Ցայնժամ պիտ՝ գործէք Ազգին մեծ բարիք...
Ու մեր տառապեալ հէք հայրենիքին,
Պիտի նուիրէք զաւակներ անգին.
Բայց ո՞ւր խօսիմ... — գիտեմ շատ երգեր,
Մինչ շունչս հատաւ, Ձայնս ելնէ կերկեր...
Շուրջս ալ նայիմ՝ զիս են շրջապատեր,
Միայն իմ խուցիս չոր քարեր, պատե՛ր...:

# ԴԱՐՈՒՍ ԱՍՏՈՒԱԾԸ

## — ԴՐԱՄ —

Աշխարհի վրայ գործողն է միշտ դրամ.
Բարիք թէ չարիք, ոճիր թէ տռամ.
Դրամն է ընող աղքատը՝ հարուստ.
Տգէտը՝ գիտուն, հանճարեղ հեռուստ,
Տգեղը՝ փայլուն, հիւանդն իսկ առողջ,
Դրամն է ծածկող թերութիւնք ամբողջ.
Թէ ունիս դու դրամ, մետաղն այն անարգ,
Դու որ անպատիւ, տան քեզ պատիւ, փառք.
Դրամն է ընող նիհարը միշտ գէր.
Զօրեղ թշնամիդ՝ բարեկամ, ընկեր.
Գիտցիր որ դրամն է բացող աչք կուրին,
Ընողն առապար՝ դժուարին, դիւրին.
Այո՛ դրամն է թագաւոր երկրին.
Դրամով, ա՛հ, տխուր սրտեր կը բերկրին...
Դրամով արդ միայն դառնայ այս աշխարհ,
Դրամն է միշտ ջնջող մարդուս ողբն, աշխար։
Դրամն է միշտ շինող դրամն է ի՛սկ քանդող
Դրամով դու կ'առնես ծանրագին կանղ, օղ...
Դրամն յաւելու մարդուն խելքն, հանճա՛ր...
Դրամով կը դառնայ մարդ դէմք մը անճառ,



Դրամն է բուն յաճախ վիշտի ամոքիչ,
Դրամն է գէթ կեանքին մէջ միակ փրկիչ։
Դրամով կը շինուին ապարանք ու տուն,
Դրամով դու դառնաս յաւէտ մեծատուն.
Դրամով մինչեւ վերջ կ'ըլլան ամէն գիւտ
Դրամով կը շարժին քար, փայտ ամէն նիւթ...
Դրամով առաջ գան, այ՛ո, ամէն ի՛նչ.
Դրամով լո՛կ աշխարհ կ'ըլլայ բնաջի՛նջ,
Առանց իսկ դրամի չի կայ բան բնա՛ւ,
Դրամով կը շարժին շոգեկառքն ու նաւ.
Դարուս աստուածը՝ արդ դրամն ունի՞ս,
Կ'ապրիս ուտելով հաց, բանջար ու միս.
«Դրա՛մ» կը կոչեն գիտունն ու անքա՛ն.
Արդ, ունի՞ս դրամ՝ ունիս ամէն բան։—

Ո՛ն, ունի՞ս դու դրամ. կեանքի այդ բագին,
Կ'առնես օրացոյցն ալ Սարկաւագին։



Մի կարծեր բարի
Որ լաւ բարբառի,
Այլ այն որ կարի
Որսով քեզ բարի...

Մերթ լեզու անուշ
Ծորէ մեղր անուշ.
Ներքեւ անոր հո՛ւր
Պահուած մերթ շամփո՛ւր,

## ԿԻՆԸ

Իմաստունը՝ կիներուն մէջ հազարէն մէկ հատ չէ գտած։ Սարկաւագ կը ձայնակցի այս ճըշմարտութեան։

Մէկ կին հարիւր մարդ կրնայ խաբել, մէկ մարդ՝ մէկ կին չէ՛ կարող խաբել...։

Կնոջ ամենէն տկար կողմը կ'ուզէ՞ք հասկնալ՝ հարցուցէք իրեն թէ քանի տարեկան էք. ճիշդը չըսեր, կարծելով թէ՝ տարիքը պահելով՝ կեանքը կ'երկարի...։

— Կինը ինչո՞ւ ստեղծուած է.

— Մարդուս վիշտերը թեթեւցնելու կամ շատցնելու համար...։

— Ո՞վ է ան որ աշխարհը մէկ օրուան մէջ կրնայ դժողքի կամ դրախտի վերածել.

— Կինը...։

Կին մը ինչո՞ւ կը պճնազարդուի գիտէ՞ք — Ո՛չ, թէ մարդ մը պատրելու կամ դիւթելու՝ այլ իր սեռին հետ գեղեցկութեամբ մրցելու նպատակաւ։

Ամբարտաւանութիւնը և հպարտութիւնը կիներուն քով աւելի շատ կերեւի քան մարդոց։

Սխալ է այն գաղափարը թէ գեղեցիկ սեռը կիներն են. եթէ ճշմարիտ է աս, անոնք արդուզարդերով ու շպարներով ինքզինքնին գեղեցկացնելու հակամէտ չպիտի ըլլային երբէք...։

Կին մը կնոջ համար կը պճնազարդուի, ոչ թէ իր էրկան։

Եթէ կինը չըլլայ՝ Աշխարհ գոյութիւն չունի, պէտք է խոստովանիլ ուրեմն թէ աշխարհավարները՝ կիներն են։



Կինը հրեշտակ է. միեւնոյն ատեն սատան։ Անոր համար արդեօք Ալեքսանդր Փանոսեան երբեմն դժոխք իջեցուցած զայն, երբեմն ալ երկինք բարձրացուցած։

Կնոջ սիրտը առեղծուած է։

Աշխարհի կեանքը աւելի կիները ուսումնասիրած են քան մարդիկ։

Կինը՝ խաբէութիւնն է։

Կնոջ խաղալը՝ սէ՛ր, գեղեցկութիւն, կեանք։

Կին մը կը սիրէ իր ամուսինը՝ յաճախ անոր դրամին համար...

Կնոջ Աստուածը երկուք է։ Ֆիզիքական կարողութիւն ու դրամ...։

Կին մը ուզէ՝ Աստուած կը ծնի, ուզէ՝ Սատան...։

Ի՞նչ բան աւելի առատ կը գտնուի կիներուն քով.

— Երկու բան. Ստախօսութիւն ու բամբասանք։

Կնոջ մը ինչ ըլլալը մինչեւ հասկնալ ուզէք՝ ինքզինքնիդ գերեզման կը գտնէք...

Բնութիւնը կիներուն պեխ ու մօրուք զլացած է լաւ չպարուելու համար։

Լկտի կին մը աւելի ճշմարտախօս է քան բարեկիրթ ճանչցուածը...։

Լուրջ կին մը՝ գոհար մըն է։

Կնոջ մը գեղեցկութիւնը իր պարկեշտութեան մէջ է.

Այր մարդունը՝ իմաստութեան։

Թշուառ է այն կինը որ կ'անբարոյանայ։

Ամենամեծ դժբաղդութիւնը կնոջ համար այն է, երբ գլխէն թել մը մազ ճերմկցած կը տեսնէ...։

Կին մը իր նպատակին հասնելու համար, միջոցը չէ որ կը պակսի իրեն՝ եթէ հարկ ըլլայ նոյն իսկ ոճիր մը գործել։

Ամբարիշտ կին մը շուտով մեղայի կուգայ։

Կնոջ մը գութը երեսունէն վերջ է որ կ'սկսի... բայց դարձեալ իրեն համար խիղճը խաղալիք մըն է։

Կնոջ քով մարդատեաց բառ գոյութիւն չունի, երբ շահ կամ դրամ կայ ծայրը։

869-2002
Գրադարան

Կնոջ համար այր մարդը արտը վարող եզէ մը բնաւ տարբերութիւն չունի, մինչ պիտի աշխատի ան՝ զինքը կերակրելու համար։

Արգահատելի են սակայն կիներն ու տկարամիտները։

Կինը՝ առանց այր մարդու՝ առանց մոլորակի արեգակ մըն է։

Բացի զաւակէ՝ կնոջ ոչ մէկ բան կարելի չէ վստահիլ։ Կնոջ նախանձը ոչ մէկ բանի կը նմանի։

Կինը օձէ աւելի խորագէտ, աղուէսէ աւելի խորամանկ է. դիմեցէք ախեղերական պատմութեան եւ պիտի հաւատաք այս ճշմարտութեան։

Հեռո՛ւ սնամիտ ու սնափառ կիներէ... եթէ նոյնիսկ մայրդ ըլլայ ան։

Երեւելի անձնաւորութիւն մը ըսած է «Կինը իր շրջազգեստին հետ ծնաւ։ Սարկաւագ կ'աւելցնէ այս պարբերութեան վրայ «Իսկ պճնազարդութեան ու շպարներուն ունայնութեան մէջ անմահացաւ»։

Կին մը կարգ մը առաքինութիւններով ու համեստութեամբ կրնայ զարդարուած ըլլալ բայց ոչ անկեղծութեամբ։

Կինը մէկ մտածում ունի զոր գուշակելը դժուար չէ. Ամուսնութիւն...։

Հաւատարիմ կին մ'ունենալ մեծ բախտաւորութիւն է եթէ գտնուի սակայն։

Աշխարհավարներն են կին ու Դրամ, անշուշտ քանդողներն ալ անոնք պիտի ըլլան։

Կինը՝ Անէծուածն է։

Կնոջ հոգեբանութիւնը հասկնալու համար, անկարելի է կին մը խոստովանցնել...

Կին մը որքան փափկակազմ նոյնքան տոկուն է՝ երկունքներու եւ աշխարհի պատահարներուն դիմագրաւելու համար։

Աշխարհի առանցքը՝ կի՛ն...։

Կիներու մէջ նշանաւոր եղած են Շամիրամ, Սաբա Թագուհին, Եսթեր, Ղովտի աղջիկները եւ ուրիշներ։

# ԱՇԽԱՐՀԻ ԿԵԱՆՔ

## ԽՆԴԱ՞ՆՔ ԹԷ ԼԱՆՔ...

Այսօր տեղապահ․ վաղը Պատրիարք,
Քեզ շրջապատեն խումբ մը պատիր արք.
Ըսեն «Ովսաննա՛ օրհնեալ որ եկի՛ր,
Վաղն ալ կ'ըսեն՝ շո՛ւտ, տո՛ւր հրաժարագիր...:

Պօլսոյ մէջ կ'ըլլաս շուտով Սրբազան,
Քարոզդ ալ կ'ուզեն լսել միշտ աս, ա՛ն
Վերջ կ'ըսեն «—Չըլլա՛ր, ա՛լ նստիս Ոսփո՛ր,
«Ե՛լ, գնա՛ գաւառ պարարել քու փոր:

Պերճախօս անուն կրե՛ս Վարդապե՛տ:
Ու մեծ գիտունի խի՛ստ ճարպիկ վարպետ,
Բայց տա՛ս մի խառներ քու ակնոցդ ու քիթ...
Ձեռքիդ գաւազան՝ վերջ տան կոնակիդ:

Երբ մեծ փափաքով կ'ըլլաս Աբեղա՛յ՝
Մ'ըսէր այսօրէն խաբեփայ մ'եղայ...
Քանի ամուրի մնաս մէջ կեանքին՝
Ա՛լ շուտ կ'աղարտի անունդ իսկ անգի՛ն։

Քեզի ալ կ'անցնեն մերթ Տէր Հա՛յր-Տէրտէր—
Վաղն ալ կը տեսնես խաշխշեն թերթեր..
Օրհնա՛ծ տո՛ւր կ'ըսես, մինչեւ վերջը տո՛ւր,
Խե՛ղճ ժողովուրդն ալ կ'ըլլայ անձնատուր։

Դու որ եղած ես ընտիր Տիրացու,
Միշտ ամէն առտու կ'ըլլէ վիրա ձու
Քեզ կը հրապուրէ օր մ'ալ օրհնող,
Բայց չես գիտեր որ փորած է քու հորդ։

Այսօր Պոլսոյ մէջ որքան աղա կան
Գիտցիր որ ամենքն ալ են Թաղական,
Երբ գործունեայ իսկ ընտրէք սակայն,
Գումարութեն դուրս կը գտնէք միայն։

Հարկ չկայ այլեւս պահելու ժամկոչ,
Երբ աղան չկայ, ո՛չ իսկ անոր պոչ.
Բան գործ չունիս նէ՝ ձայնով մեծագոչ,
Կանչէ որ գտնես նախ աղա ժամկոչ։

Գործունեայ մարդը՝ Ազգին Բարապա՛ն,
—Քու շիցի երբե՛ք չէ մարդ պարապ ա՛ն—
Հոգի տայ մեծին ու փոխանորդին.
Անձը կը զոհէ իսկ փոխան որդին...։

Մէկ վարժարանի կարգուիս Տեսուչ.
Գոյնդ երբ կը փոխես կանչեն քեզ վերջ «փուճ»
Կ'առնես ափ մ'ոսկի, բայց յաջորդ տարի
Կ'ըսեն առ նամակդ ա՛լ քու դադարի...



Ա՛ռ վկայագիր մ,եղար Վարժապետ ..
Ոչինչ մէկ բանէ լուր չ'ունիս թէպէտ,
Ձեռքին գումարով մ'իսկ դու բաւարա՛ր՝
Կը նետես անձդ օր մըն ալ գաւա՛ռ։

Երբ տարիքդ առնես՝ կ'ըլլաս Վարժուհի,
Ա՛լ կամաց կամաց անձդ վարժուի...
Քիչ մ'եթէ ճարպիկ, սրտով խոնարհ ե՛ս,
Մէկու մ'հետ «սիրեմ» բայց խոնարհես...

Մի մուր քսեր դու ոմանց, Խմբագի՛ր,
Գիտցիր որ ան ալ ունի խմբակ իր.
Քեզ քաշէ այլեւս քու այդ բիրտ գրիչ,
Փոխարէն կ'իջնէ վերջ գլխուդ, բահ, բրիչ...։

Երեկ գրաշար, այսօր Տպագիր.
Ա՛լ 500նոց շապիկ մը հագիր.
Թէեւ ըլլայ ան պատռտած ու հին,
Խերը անիծեմ ես այս աշխարհին...

Թէ դու ես կարող ընտիր Փաստաբան
Միշտ ոտքդ կուգայ դրամ ու ամէն բան.
Մինչ տուներ քանդես, դարձած երկերես,
Կեանքիդ մինչեւ վերջ գլուխդ քերես...

Երբ ամուրի մնաս դու Տօքթօ՛ր,
Գիտցիր, յաճախորդ ունիս ամեն օր,
Իսկ երբ կարգուիս, ունենաս զաւակ,
Ա՛լ դու ճանճ որսայ նստած շարունակ։

Թէ հեղինակ ես եւ կամ Գրագէտ,
Պէտք է ճիք հագնուած ըլլաս ու զօգէթ
Մօրուքդ այծունկի, պեխերդ սայր ի վեր,
Ա՛ռ, որչափ կ'ուզես, գիտունի հովեր...

Կ'ուզե՞ս դառնալ դու շուտ մէկ Գրավաճառ
Ձրի գիրք առնել սովրէ անպատճառ,
Ու կրկին գինով ծախէ, բռնէ կուտ...
Երբ չունիս դու խղճմտանք ու գութ:

Թէ դու ամուրի մէկ Վաճառական՝
Երկու թոփ պասմա է քեզ բաւական...
Շուտով կը հանես դու անուն համբա՜ւ
Ու գտնես աղջիկ օժիտով անբաւ:

Աչքդ գոցէ բա՛ց՝ բռնէ Դեղագործ.
Թէեւ վկայուած չէ ան ու անփորձ.
Ծախէ քեզ առաս, աղի, լեղի, ջուր
Ու կը պատըկի հարիւրին հարիւր...

Ահաւասիկ Ձեզ մեր աշխարհի կեանք.
Ո՜չ մ'ըսէ՛ք բնա՛ւ՝ արդ «խնդա՞նք թէ լա՛նք...:
Մենք ըսենք նոյնիսկ ո՛չ մի զարմանար...
Կեղծիքով միայն դառնայ այս Աշխարհ...:



## ✻ ՎԵՀԱՓԱՌ ✻

Ահա նոր Մովսէս, ի՛սկ երկնանուէր,
Նորին Օծութիւն Արքազնասուրբ Տէր,
Գէորգ հինգերորդ, Վե՜հ Կաթողիկոս
Տառապեալ Հայուն պաշտպան, բարեխօ՜ս...:

Յաւէտ Անսասան կաց վեհդ ի Մասիս,
Բայց լե՛ր բարեխօ՛ս քիչ մ'ալ իմ մասին
Որոց՝ ի՛սկ յայտնի թերութիւնք աւաղ...
Ո՛հ, միշտ հալածեն անտէր Սարկաւագ...:

# ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՏՕՆԸ

## ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԷՋ

Երուսաղէմի քրիստոնեայ հասարակութեանց - բացի բողոքականներէ — գրեթէ է՛ն գեղեցիկ ու է՛ն խանդավառ օրն է Համբարձման Տօնի օրը, որուն փառայեղ վեհատեսիլը կատարելու համար նոյն օրը, Մայիս ամսուան յատուկ սաղիմեան զով ու զուարթ առաւօտ մը, — որ առեն արդէն լեռ ու ձոր կանաչցած, ծառ ու ծաղիկ փթթած իրենց անուշ բուրումներով կարծես բնութեան Մայր տաճարը կը խնկարկեն, ու միւս կողմէ գարնանագուշակ ծիծեռնակներ իրենց դաշնակաւոր աղու երգերով Մովաբեան լեռներէն նորածագ արեգքին ճառագայթարձակ լուսոյ գալուստը կ'աւետեն — քրիստոնեայ հաւատացեալներու խուռն բազմութիւն մը Երուսաղէմի Ս. Գագաթէն Յովսափաթու Կեդրոնեան Ձորի կեդրոնէն անցնելով՝ հետ ի հետ կը վերելակեն Համբարձման լեռը, որուն այդ երկնապիչ բարձունքէն կ'ընդնշմարուին արեւելեան կողմէն՝ մշտակառոյց Նաբաւը, երկաստճիդ Մովաբու լեռները, օձապտոյտ յորդայորդ Յորդանանը, հրաշունչ Սոդոմն ու Գոմորը, Մեռեալ ծովն ու Երիքովը, և արեւմուտքէն Աստուածորդւոյն գեղջուկ ծննդավայրը, Զարչարանաց քաղաքը, ուր ընդարձակածաւալ մաս մը կը կազմէ Եհովայի գեղապանծ տաճարը։

Ահա այդ բարձունքին վրայ կը գտնուի Քրիստոսի Համբարձման Սրբատեղին, որ ձեւացած է գմբեթեայ բոլորաձեւ փոքրիկ յարկէ մը ու շուրջանակի փլփլկած որմերով քառակուսի բացօդեայ փոքր հրապարակէ մը, որ իր անսեթեւեթ այլ վեհ երեւոյթովը կրօնական—բանաստեղծական խորունկ տպաւորութիւն կը գործէ մարդուս վրայ։

Այս Ս. շրջավայրին մէջ Հայն ու Յոյնը, Լատինը, Ղըպ-



տին ու Ասորին, տօնի նախընթաց օրուընէ, կանխաւ հաստալիկ չուաններով սիրուն տաղաւարներ լարած՝ ներքեւը մոմաջահ չարժական սեղաններով, և ամէնքն ալ միաբանական փոքրամասնութեամբ կրօնական թունդ զգացումներով այլցուն, նոյն գիշերը հոգեբուղխ սաղմոսերգութիւններով ու հսկումներով կը լուսցնեն գրեթէ։

Առտուն, հանդիսաւոր Հրաշափառներու սկզբնաւորութեամբ, դարձեալ նոյն զգացմամբ ու հաւատքով միասին կը սկսին Ս. Պատարագի արարողութիւնները՝ իւրաքանչիւր ազգ իր եկեղեցւոյն առանձնայատուկ սովորութեամբն ու ձեւով։

Ի տես այս Ս. Պատարագներու և արարողութեանց, անկարելի է որ ո՛ և է հանդիսատես մը, գէթ պահ մը իր սրտի խորերէն չ'վերանայ հոգիով, նոյն պահուն հոն բարձրացող հինգ լեզուեան հոգենուագ տաղերուն ու մաղթանքներուն, և միացող բուրվառներուն անուշահոտ խունկի ու կնդրուկի վէտվէտուն ծուխերուն հետ, որոնք կարծես կիսով չափ թանձր մշուշ մը ձեւացուցած կը քօղարկեն Ս. Համբարձման այդ վեհաշուք գագաթը։

Նշանակելի է այս հինգ ազգերու մէջ կատարուած եկեղեցական արարողութեանց մէջ, Հայ Առաքելական Ս. Եկեղեցւոյ եպիսկոպոսական հանդիսաւոր Ս. Պատարագի խորհրդաւոր վեհութիւնը, որուն վրայ սեւեռած է նոյն առեն հայ տարրին հետ հո՛ն խռնուող օտար ազգերու բազմութեան ակնապիշ նայուածքը։

Ս. Պատարագներու աւարտումէն ետքը, Ս. Յակոբեանց միաբանութիւնը իր ամբողջութեամբ, Համբարձման սրբավայրին կից Հայոց սեփական ձիթաստանին մէջ, աւանդական սովորութեան մը համեմատ, արշալոյսին կթուած մաքիներու թարմ ու փրփրադէզ կաթը խմելով, զառիվայր ու զառիվեր զիգզակ երկար ճանապարհով մը, կէսօրուան տաքէն քրտնաթոր՝ կ'ուղղուի դէպի Ս. քաղաքը՝ Երուսաղէմ, օրուան հոգեզմայլ տօնին խորունկ տպաւորութեանը տակ։



Ներքին Օծութիւն

Տ. Տ. ՍԱՀԱԿ ՍՐԲԱԶԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

• Նախկին ուխտաւոր լուսարարապետ Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքին, եւ Տնօրէն Ժողովոյ անդամ. մատենագիր, եկեղեցական դասագրքերու. Պերճախօս բեմբասաց, զգայուն ձայնագէտ եւ Կրօնուսոյց Մանուկեան Սարկաւագի.

# ՄԱՐԴԸ

Մա՛րդը․ բնութեան հրաշալիքներուն այդ հրաշալիքը, երկրագունդին վրայ գտնուող ամէնէն զարգացած զգայուն բանական միէռոպը, գազաններուն առաջինը, բնապէս ստեղծուած դիւրեղծանելի ու քայքայելի հողագանգուած մարմինէ մը, ամէնէն դժբաղդ, ամէնէն արգահատելի էակն է, ինչպէս պաշարուած բնութեան բիւրաղան ու այլազան արհաւիրքներով ու մէն մի քայլափոխին դատապարտուած մաքառելու անոնց դէմ և մահուան դիմագրաւելու... ճակատագրային դառն օրէնքով մը հառաչալից ու տառապալից անբացատրելի և յաւէտ անբաղձալի կեանք մը կնքելով։

Մարդը՝ մէկ կողմէ՝ գիտակից իր զարմանահրաշ գոյաւորումին ու անբացատրելի անէացումին և վախճանին․ միւս կողմէ՝ յաճախ յանդէտս կամ գիտմամբ անձնատուր աշխարհային սին ու ունայն վաղանցուկ փառքի ու պերճանքի․ միշտ կը ձգտի ներքին անորակելի բուռն տենչանքով միշտ դէպի Երջանկացո՛ւմ, անմահացում... բաղձալով միշտ սրտով, մտքով, հոգիով ու մեղսաքարշ մարմինով սաւառնիլ, տեղափոխուիլ անշուշտ այս վայրաքարշ մեծազանգ բնագաւառէն աներեւակայելի անդրաշխարհ մը որ կազմուած ըլլայ անանց հեշտաբոյր կեանքէ՝ միշտ խրախճանութիւններով լեցուն, ու հոն միայն գոյութիւն ունենայ անթարշամ յարատև գարուններ և ուր բուրէ միշտ գեղ, փայլ, սէր և կոչուի ան Դրախտ...։

Մարդը՝ իր այս բնազանցական բաղձանքներով առլցուն՝ աշխարհի գոյութենէն ի վեր կը խորհի, կը գրէ, կը խօսի ու կը գործէ՝ մեծ ու անբացատրելի անդուլ աքնութեամբ,

լոյս կը սփռէ իր չուրջը , կեանք կուտայ ուրիշի մը , քաղաքակրթութեան ու յառաջդիմութեան շաւիղներ կը պատրաստէ ծովու և ցամաքի վրայ՝ նոյն իսկ օդին մէջ ։ Ու այն որ հին է կը քանդէ միշտ. նորը կը շինէ , քաղաքներ կը կանգնէ , ծովերու և ովկիանոսներու ալքերը կը սուզի , մինչև խորը կը թափանձէ , ամէն ինչ ասաթուռ առած՝ լեռ ու ցամաք կը դլէ , կ'անցնի...անլուր հրաշքներ կը գործէ , նորանոր գիւտերով ,— ելեկտրականութեամբ — , այո՛, կը յառաջդիմէ իր գտնուած երկրագունդին վրայ ու անոր հետ մէկտեղ անվերջ կը դառնայ ու կը դառնայ ամէն առաւօտ միեւնոյն արեւը ողջունելով ու երեկոյին կրկին կորսնցնելով զայն խաւարակուռ գիշերներու քօղարումին տակ , միշտ կառչած ինք սակայն , միեւնոյն երկրագունդին ՝ իբրև ամէնէն զգայուն ու զարգացած միքաոպը. կը ծծէ ու կը ծծէ միշտ ամէնէն կենսունակ հիւթը անոր՝ Մայր Երկրին. մինչև գայ , անշուշտ , ժամանակ մը որ այդ յորդայորդ սանկքին հիւթը ցամքի՝ իբրև թոքախտաւորի մը թոքը դարձած . . . ։

Մարդը՝ բնութեան մէջ գործող այդ մեծ միտքը , սակայն, աւա՜ղ, արդէն խաւարող տարիներու ծանրածանր լուծին ներքև տակաւ առ տակաւ կ'սպառի , կը քքի , կը ծիւրի ,կը հալի ու կը մաշի ։ Ո՛ւր գացին պահ մը առաջ իր ունեցած այն վառ երեւակայութիւնը , խորհելակերպը , դատողութիւնը , եռանդը , կամքը , մէկ խօսքով՝ ուժը , հրաշագործելու , տիրապետելու այդ անյագ տենչը. սնափառութիւններ . . .

Տեսէք այդ Մարդը՝ ահա՛ աչքերը խաւարած , դէմքը ակօսած , որ խոպան արտէ մը տարբերութիւն չունի . կառարեալ կմախք մը դարձած. ձեռքերն ու ոտքերը կը դողդոջեն , հէգին ձայնը չելնե՛ր . . . ձայնը կերկեր , չը լսուիր ա՛լ իր մահերգին վերջին վանկն ու շեշտերը , ու առկայծեալ կանթեղի մը պէս կը պլպլայ ու ճրագի մը պէս կը մարի . . ։ Ա՛լ արեւը վերջնականապէս մարը մտած է ու օրը իր թանձրացեալ խաւար ու կուռ գիշերի վերածուած ։ Ահա , այդ մարդը իր աշխարհային տառապանքներուն ու խանձէնքին՝



յաւիտենական հանգիստը գտած է հիմա մշտնջենական խոռունկ քունը քաշելով . . .

Մարդը՝ ահա ստեղծագործող այդ մեծ միտքը՝ որ պահ մը առաջ Արարիչ մը կը կարծէր ինքզինքը , ինք նոր Արարչի մը պէտք ունի այսօր , իր քայքայուած , հիւլէացած ու չքացած մարմինը վերաշինելու ու իր յաւիտենական քունէն արթնցնելու համար ։

# ԼՐԱՏՈՒՆԵՐԸ . . .

Առանց թեւի կամ թռիչքի
Միտքն աշխարհն մէջ թռչի . . .

Կրակ չեն խանդը, արիւն,
Բայց կը կիզեն մեր արիւն:

Իղձն որ հողեն չէ, սակայն,
Ծուխ կը մարի երբեմն այն:

Իսկ խիղճն որ մէջ չէ իրաւ,
Ցանկալի կուրնայ ա՛ն դիւրաւ:





## ԲԱՐՁՐԱՇՆՈՐՀ

Իսկ Բարձրաշնորհ Օրմանեան մեծ Այր,
**ՆԱԽԿԻՆ ՊԱՏՐԻԱՐՔ, ՊԱՏՐԻԱՐՔԱՀԱՅՐ,**
Արտադրող մեծ միտք, իսկապէս տաղանդ,
Սփռող իր շուրջ լո՛յս, յո՛յս. սէ՛ր իսկ դա՛ խանդ։

Սա՛ օրէնսգէտ, հմուտ լեզուագէտ,
Բու՛ն Աստուածաբան, պերճախօս սա՛ գէթ,
Է «ԱԶԳԱՊԱՏՈՒՄ» ու «ՀԱՄԱՊԱՏՈՒՄ»
Իսկ Ազգապարծան անո՛ւն անպատում...։

**ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ**

## ԱՌԵՂԾՈՒԱԾՆԵՐԸ

### — ՈՒ՞Ր Կ'ԵՐԹԱՅ...—

Գիտէ՞ք թէ ո՞ւր կ'երթան կար, ուժ,
Եւ ո՞ւր կիրքեր տոփոտ, անձոյժ.
Իղձն ո՞ւր կ'երթայ երբ կը մարի.
Ո՞ւր խորհուրդներ վատ կամ բարի.
Ցողն ո՞ւր կ'երթայ աչքին նուաղ.
Լոյսն ո՞ւր ճրագին շիջանուտ վաղ.
Հնոցին ո՞ւր ճարճատուն բոց,
Ո՞ւր հիւանդին ցաւերն իսկ հոծ.
Ո՞ւր խինդ, զայրոյթ, վիշտ, քէն ու ոխ,
Դարերն այն ո՞ւր կ'երթան փոփոխ.
Մարդուս հագագն ո՞ւր կ'երթայ ո՛ւր,
Թռչուններուն գեղգեղն համո՞ւր.
Զանգին ձայնն ո՞ւր կ'երթայ թրթռուն,
Մանուկ դէմքին ո՞ւր փայլ, գեղ, գոյն
Բոյրն ո՞ւր կ'երթայ խնկող ծաղկին
Ըսէ՛ք եւ ո՞ւր կ'երթայ հոգին
— Ամբողջ խորքին Առեղծուածներ,
Որոնց մէկն իսկ լուծուած չէ՛ն դեռ...։



ՆՈՐԻՆ ՎՍԵՄՈՒԹԻՒՆ

ԳԱԲՐԻԷԼ ԷՖ. ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

ՆԱԽԿԻՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐՈՒ ՆԱԽԱՐԱՐ

*Փառք, պատիւ Ազգին*
*Հանճար մը անցին,*
*Իմաստութեան տունկ,*
*Գաբրիէլ Նորատունկ:*

# ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ

*Ամէն անգամին երբ լուսնայ Ուրբաթ —*
*Օրը ժողովքին կարծուած Սուրբ ա՛ռ. —*
*Կարգ մը գլուխներ օ՛, շարան, շարան*
*Բազմին Ղալաթիոյ հո՛ն Խորհրդարան:*

*Ժողով պիտ՚ բացուի ժամը երկուքի՛ն,*
*Հազիւ եկած են մէկ երկու հոգին..*
*Դուռ բացուի, գոցուի՝ մինչ վերջ-պարապ ա՛ն—*
*Կ՚ելնէ կը մնայ միայն Բարապան:*

*Ժամը երեքը քանի է անցե՛ր...*
*Դեռ չեն եկած մեր Ազգային անձե՛ր.*
*Թէեւ շատերուն պարապ յատակ էր,*
*Բայց վարեն ազգին բո՛ւն ճակատագիր...*

*Քանի մը հոգի դուրսը միասի՛ն՝*
*Նրբանցքին մէջը կեցած կը խօսին.*
*Ոմանք կը ծխեն, ոմանք ծիծաղին,*
*Ունկնդիրն ազին կը կոտրէ կաղին:*

*Որը սրահին մէջ կարդայ լրագի՛ր,*
*Որը կ՚ստանայ նամակ, հեռագիր...*
*Հանդիսականներ հոծ հետաքրքիր,*
*Կ՚սպասեն երկար, ձեռքերնին հաստ բե՛ր...:*

Ժամեր կը սահին պարապ տեղ ասա՛նկ,
Վերջապէս հնչէ հո՛ն սրահին մեծ զանգ.
Կարգաւ ներս մտնեն դէմքեր նոր ու հին.
Հազիւ տաս հոգի կայ մէջ հո՛ն սրահին...

Նախագահ ներկայ՝ սիրտն, հոգին խռով,
Ատեանը բացուի անուշ «Հայրմերով»,
Բայց հոգ չէ որ այդ պատմական օճախ
Անլուր հայուչով փակուի վերջն յաճախ...։

Դիւան կ'զբաղի մեծ խանդով մ'անքա՛ն
Գործողութիւնով իր ատենական.
Ուստի կարդացուին ժամերով համակ,
Բողո՛ք, հեռագիր, պարկերով նամակ...։

Մէկն ընտրուած է նոր Երեսփոխան՝
Ուրիշ մ'հրաժարի ճիշտ ասոր փոխան.
— Այս վեճին ունի եթէ հակակիր՝
Փութով կ'ընդունուի իր հրաժարագիր...։

Նորն ալ չընտրուիր երթալէն վերջն հին՝
Դատարկ աթոռներ լեցուն մէջ սրահին,
Վերջն ո՞ւր կացութեան սակայն վատթար ա՛ն
Երբ այսպէս պակսի ժողովքի Տառաճ...

Մինչ մեծ հաճոյքով կը լսուին միշտ անդ
Երեսփոխան մ'երբ՝ ճամբո՛րդ, կե՛ղծ հիւա՛նդ.
Կամ գացած ըլլայ նոյն իսկ օդափոխ.
Փոքրամասնութեամբ կ'առնուի չո՛ւտ ո՛խ...։

Մէկը խօսք կ'ուզէ, կ'ելնէ ամբիոն,
Տեսնես, խօսքի տեղ, չանթեր թափէ հո՛ն...
Յանկարծ կ'սկսի փոթորիկն ու ամպ...
Մէկ մ'ալ ձայն մ'ուրիշ լսուի գոռ ու բամբ...։



— Լսէ՛, վար իջիր ատկէ անամօ՛թ,
Եթէ վար չիջնաս կուգանք քուկին մօ՛տ,
Ճառախօսն սակայն տակաւին չանթէ,
Ձեռքէն գայ սրահն իսկ պիտ' քանթէ...

Մէկ կողմէն շատնան աղմուկն ու ժխոր,
Ատենապետը դէմքով միշտ խոժոռ՝
Կը հնչէ ձեռքի զանգակը ուժգին,
Կը պոռայ, օգուտ չընէր բայց կրկին...։

Ի զո՛ւր յորդորներ, խրատ անհամար,
Բուռն կիրքերու վերջ տալու համար՝
Մեր Ատենապետ խոհեմ ու արդա՛ր
Տասը վայրկեանի տայ զինադադար։

Մեր մարդիկները բորբոքած մոլոր
Ոտքի են կանգնած սրահին մէջ բոլոր.
Կազմով որն առողջ և որը տկար
Պահ մը կը վառեն ձեռքերնուն սիկառ։

Կարեւոր դէմքեր կը բացակային,
Մեծամասնութիւն չըկայ տակաւի՛ն.
Լեցուլու համար թիւն օրինական,
Անձ մը կը պակսի դեռ անզուգակա՛ն...

Մինչդեռ շատերն ալ ատմարին մէջ բո՛ւն
Չեն արձանագրած իրենց դեռ անուն.
Կը բացուի ահա պահ մը վերջ Ատեան
Կը սկսի վէճերն յաւիտենակա՛ն...

Ժամը անցած է ճիշտ չորսուկէսն հի՛նգ.
Տեսնես մեծամասն կազմող անդամն ի՛նք՝
Գլուխը սանտրած, պեխեր սայր ի վե՛ր՝
Յաղթապանծ մտնէ մէջ բանակին մեր...

Շատերը կարգաւ նա կը բարեւէ
Դէմք իր գորշագոյն սեւցած արեւէ...
Կուգայ, կը բազմի վրայ աթոռին.
Ներկաներն «ո՞վ է» արդեօք կը խորհին...

Անդիէն կ'ելնէ մէկ խելօք Դաւիթ,
— Ցաւ մ'ալ կ'աւելնայ վրայ քու ցաւիդ —
Ժամերով սա՛ ալ կը հակաճառէ.
Դրդուած միայն ներքին պատճառէ...

Դարձեալ հայուչնե՛ր բանակռիւ ու վէճ...
Ժողով պառակտի կրկին ինք իր մէջ...
Կիրքերու չափը բարձրացած է գէթ.
Ծայրահեղութեան իր գագաթնակէտ...:

Ինքզինքդ անշուշտ կարծես սրճարան...
Փորձուիս վառել ձեռքիդ սիկառան,
Տնկուի մէկ մ'ալ ճարպիկ բարապան
Եասախ է կ'ըսէ չ'ըլլար սանկ բան...:

Սրահ լեցուած է բայց խօսքով անպե՛տ
Ժողովը փակէ շուտ Ատենապե՛տ,
Աղաներն հասնին գէթ վերջի նաւին
Գործ չենք սպասեր ձեզմէ բնաւին..,:

Մինչ կարգ մ'ազգային գործեր կարեւոր՝
Հո՛ն սեղանին վրայ դիզուին օրէ օր՝
Երեսփոխաններ շիք ու փառաւոր,
Ջուրը սանդին մէջ ծեծեն ամէն օր..:



# ԳՈՂԹԱՆ ԵՐԳԻՉԸ

## ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

Հրաշակե՛րտ, խի՛ստ թանկ
Կլոր մեծղի գանկ,
Որուն առջեւ կանք
Առնենք երգահանք:

Սա գողթան երգիչ,
Որուն պէս դեռ քիչ
Դիւթող ու մոքիչ
Ցաւեր ամոքիչ:

Նոյն ինքը անճառ
Տաղանդ մը—հանճա՛ր...
Իրապէս Անչար
Չունի նա բան չար:

Սիրտ մ'հայրենաբախդ,
Ինք միշտ շէն, ուրախ.
Մեղրածոր երախ՝
Յորդէ իսկ սէր, ա՜խ...

Ձայն իր գոռ՝ մերթ բամբ՝
Փարատէ մէգն ամպ.
Մերթ մեղմ թրթռագին՝
Յուզէ իսկ երկին...:

Իր խաղերն ու երգ
Որ ցցեն իսկ հերք,
Են մէկ մէկ ցաւերգ.
Բայց բուժեն ցաւ, վէ՜րք:

Խանդով միշտ դա լիք.
Երգն իր հրաշալիք.
Խաղերուն ալիք.
Են մէկ մէկ լալիք...

Մեծ արուեստագէտ,
Որ հասուց դա գէթ
Հայուն ձայն, շէշտ, կէտ,
Իր գագաթնակէտ.—

Նոյն ինքն կարի
Արի ու բարի.
Երբ նա բարբառի՝
Մարդ իրեն փարի...

Հայերս որ դարձանք
Իր շուրջ զերդ յորձանք,
Իր անուան վարձ ան
Կանգնենք յուշարձան...:

# ԱՆՈՒՐՋ

## ՍԱՐՍԱՓԵԼԻՆԵՐԸ

Երբ խեռ ովկեանը դիտեմ մեկուսի՝
Միտքս ալ անդունդին ալքերը սուզի,
Լոկ երեւոյթով մ'անոր խորքին տակ
Կարծես կը կտրի շունչս բովանդակ:

Երբ մտքովս արծուի կ'զգենում թեւեր,
Կ'ելնեմ հիմալեան հո՜ն լեռներն ի վեր՝
Նետելու հայեացք մ'անդունդներն ի վար,
Վիժելու ահէն՝ դառնամ դիւահար:

Երբ պահ մը սուրամ մարտի դաշտն հեռուն
Ու դիտեմ անթիւ դիակներ գեռուն,
Ո՜հ, կը սարսափիմ ու կ'զգամ սարսուռ,
Կարծելով մխեն ինձ սուր, սայրասուր...

Մինչ երբ կը մտնեմ անտառ մ'ահաբեկ
Կարծեմ մթագնած չորս դիս խաւար մեգ,
Ու գլխուս կ'իջնեն շանթ կայծակ վերէն՝
Իսկոյն սարսափներ զիս կը պաշարեն.

Իսկ երբ կը յիշեմ ժանտաբիւն սա մա՜հ
Բոլոր ջիղերս բուռն կ'ելնեն մի՜շտ ա՜հ.
Մեռնի՜լ... ի՜նչ դառն է վճիռն անողոք
Ըսէ՜ք, ա՜հ, ո՞ւր բառնամ ես բողոք...:

# ԱՌԵՂԾՈՒԱԾԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

## — ԻՆՉՈ՞Ւ —

*Ըսէ՛ք թէ ինչո՞ւ եղած է աշխարհ,*
*Արեւն ու լուսին աստղերն անհամար.*
*Ծովերն, ովկեան ինչո՞ւ ալեկոծ,*
*Ինչո՞ւ կեանք եւ մահ խինդ, ցաւ, ողբ եւ կոծ.*
*Կեանքի տառապանքն ինչո՞ւ խիստ ու բարդ,*
*Ինչո՞ւ կը ծնի ու կը մեռնի մարդ.*
*Ինչո՞ւ թաւալի երկիրն անդադար,*
*Խուսափին օրեր, տարիներ ու դար.*
*Անհո՛ւն, անսահման ինչո՞ւ է Երկին,*
*Ցաճախ միտքն, հոգին ինչո՞ւ փոթորկին.*
*Ինչո՞ւ են գութը, վիշտ, քէն ու զայրոյթ,*
*Մրրիկն ու ամպրոպ, ձիւն, անձրեւ կարկուտ.*
*Մարդ ինչո՞ւ երբեմն տխո՛ւր կամ զուարթ,*
*Ինչո՞ւ կը փթթի ու կը թոշնի վարդ.*
*Երկնքի երեսն ինչո՞ւ մերթ մռայլ,*
*Ինչո՞ւ եղծանի դէմքին գեղն ու փայլ,*
*Սիրտն ինչո՞ւ երբեմն վառի սիրախանձ,*
*Ինչո՞ւ ամէն ինչ խաբուսի՛կ, վաղա՛նց...*
*Տեւական ինչո՞ւ չեն վայելքն ու սէր.*
*Ա՜հ, ինչո՞ւ թռչին երազնե՛ր, յոյսե՛ր...*
*— Առեղծուածային հարցումներն այնքա՛ն*
*Որ միշտ յաւիտեան նոյն պիտի մնան...:*

△
△△



## ԲԱՐՁՐԱՇՆՈՐՀ

Զաւէն Սրբազան, Հայոց Պատրիարք
Հմուտ, վարչագէտ. անբասիր իր վարք,
Նոյնքան հեռատես, խիստ համեստ ու փորձ
Գիտէ նա, որո՞նց հետ ունի նախ գործ...:

# ԱԼ ԺԱՄԱՆԱԿԸ ՀԱՍԱԾ Է ՀԱՅ ԿՂԵՐԸ ԱՄՈՒՍՆԱՑՆԵԼՈՒ

ԿԱՐԾԵՄ ալ ժամանակը հասած է, Հայ կղերը ամուսնացնելու, երբ մանաւանդ գիտունէն ըս-կըսեալ մինչեւ յետին չինակը համոզուած է որ սուրբ մարդ գոյութիւն չունի այսօր աշխարհի վրայ։ Արդէն Աւետարանէն իսկ գիտենք թէ երբ Քրիստոսին «բարի» տիտղոսը կուտային, կշտամբելով կ'ըսէր շողոքորթներուն, բարի՞ն (որ սուրբին իմաստէն իսկ նուազ նշանակութիւն ունի), միայն Աստուած է։ Ա՛լ ուր մնաց այն մարդ էակը, որ բնութեան բիւրազան արհաւիրքներով շրջապատուած իր ամէնքայլափոխին փորձութեան մէջ իյնալու դատապարտուած է։ Ուրեմն ինչպէս կարելի է Սուրբ կոչել զանոնք։

Ամուրի կղերականութիւնը անիմաստ ու յիմարական բան մըն է, որ դարերու ընթացքին մէջ կարողացած է նախապաշարել հէք մարդկութեան միտքն ու գաղափարները։

Աւետարանի վարդապետը, Քրիստոս, որ սկիզբէն ի վեր առաջին Սօցիալիստն է եղած ու պիտի մնայ, առանց արտառոց գաղափարներ մը չէ ներշնչած իր աշակերտներուն։ Ընդհակառակը, անոր աշակերտներէն շատերը ամուսնացած էին։ Եւ ինք՝ Քրիստոս, որ չէր եկած Մովսէսի օրէնքները քակելու, այլ լրացնելու, մէկէ աւելի անգամներ փառաբանած ու ջատագոված է ամուսնութիւնը՝ զայն սուրբ անուանելով։ Ուրեմն ո՞ւրկէ ներմուծուած է Հայերուս մէջ



ամուրիութեան ախտը, որ հազարու մէկ չարիքներու դուռ բացած է եւ սերունդներու փճացման միակ պատճառ։ Այսօր Հայ ազգը նուազելու վրայ է եթէ նկատի առնենք չամուսնացող աշխարհիկներու թիւը միասին։ Հայ ազգը փճացումի ճամբուն մէջն է, որովհետեւ հազարաւոր հայ աղջիկներ դատապարտուած են իրենց պատուհանին առջեւ խամրելու կամ տարբեր կերպով իրենց ապրուստը ճարելու։

Ամուրի կղերականութիւնը մեր մէջ մտած է կաթոլիկներէն, որ յետամնաց բան մըն է հաւատաքննութեան դարերէն մնացած, ուր բանաւոր կղերը իր կիրքերուն հաճոյքներուն գոհացում տալու համար, ապօրէն ամուսնութիւններէն աւելի հաճոյք կը զգար եւ այդ իսկ պատճառաւ բիւրաւոր նախճիրներ գործելու հարկին մէջ կը գտնուէր յաճախ։ Ասոնց մնացորդները կրնան նկատուիլ ամուրի կղերականութեան հետեւողները։

Պօղոս առաքեալ, Քրիստոսի աշակերտներուն մէջ ամէնէն կրօնամոլը ըլլալով հանդերձ, կղերի մասին ըսած է թէ եպիսկոպոս մը՝ ամուսնացեալ պէտք է ըլլայ, աւելցնելով որ Եպիսկոպոս մը եկեղեցւոյ Տեսուչ ըսել է ան որ ամուսնացած չէ, տուն մը կառավարելու եղանակը չի գիտեր, արդ ինչպէս եկեղեցւոյ վերակացու կրնայ կարգուիլ։ Այսպէս կարգաւ եկեղեցական պաշտօնեաներու ամուսնացած ըլլալու խորհուրդը կուտայ, քանի որ ամուսնութիւնը սուրբ է ըստ Եկեղեցւոյ եւ առաջին խորհուրդներէն մէկը։ Ա՛լ ուր կը մնայ եւ չամուսնացող հայ կղերին սրբութիւնը։ Հայ կղերը հակառակ Աւետարանի ոգիին, միշտ հակամէտ ըլլալով փառքի ու պերճանքի, ամուրի աշխարհականներու պէս կըմբոշխնէ աշխարհին հաճոյքները եւ միեւնոյն ատեն կ'ուզէ սուրբ յորջորջուիլ միամիտներէն։

Ամուրիութիւնը բժշկական տեսակէտով վնասակար նկատուելէ առաջ, հակաբնական բան մըն է։ Հասարակութիւնը խաբելէ աւելի անձնախաբութիւն է։ Պարզապէս մարդ ներքինի մ'ըլլալու է՝ բնութեան պահանջներուն դիմադրելու համար կամ երկնաւոր զուարթուն մը։

Մենք նկատի ունենալով հայ կղերին ամուրի կեանքը, անոր ապրելակերպը, ներկայ պահանջումներուն համակերպեցընելու կողմն ենք և հրաւէր կը կարդանք հայ կղերին և հայ մամուլին որ ձեռք ձեռքի տալով՝ բուռն պայքար մղեն հայ կղերը ամուսնացնելու համար, վստահ եմ որ առաջին անգամ ամենէն ճգնաւոր կղերականը պիտի ըլլայ ամուսնացողը։

Օն ուրեմն, ա՛լ ժամանակը հասած է հայ կղերը ամուսնացնելու։

# ՎՇՏՈՒՀԻՆ

## ԵՐԱՆՈՒՀԻ ՁԱԳԱՐԵԱՆ

### ԵՐՈՒՍԱՂԷՄԱՑԻ

*Ժամու զանգն ինչո՞ւ կը զարնէ տխո՜ւր.*
*Ի՞նչ է այն դուրսը աղմուկն ու ժխոր,*
*Մօտի գերեզման որո՞ւ կը փորեն.*
*Ննջեցեալ կա՛յ ինչ, ո՞վ մեռեր նորէն...։*

*Վարդապետ, դպիր, իրար են անցեր,*
*Ետեւէն կարգ մը սգաւոր անձե՛ր.*
*Լալով կարդալով մէկը կը բերեն,*
*Ո՞վ է այն, որո՛ւն ազգականներէն։*

*Հոս ինչո՞ւ կեցած կուլայ Եղիա՛ն,*
*Ջըլլա՞յ հօրաքոյրն է մեռնողը այն...*
*Չէ՛, մըսէք, հիմա խելքիս կուգայ իմ,*
*Երթամ հոն մօտը անգամ մը նայիմ։*



*Ի՛նչ սեւ լուր էր աս որ առի իսկոյն,*
*Յուզուած է սիրտս նետած դէմքիս գոյն,*
*Ծունկերս ու ձեռքերս ալ կը դողդղան,*
*Տեսնո՞ղն ինչ կ'ըսէ, խե՞նդ է աս տղան։*

*Ալ կեցած եմ իր սեւ դագաղին քով՝*
*Աչքերս լեցուն, աղի արցունքով.*
*Ո՛չ, չեմ հաւատար թէ այն է իրա՛ւ*
*Աս բարի կինը, վա՛խ ընտո՞ր մեռաւ...*

*Թոքերը չատոնց կեր առած որդին՝*
*Թաղուած է հոս իր մէկ հատիկ որդին,*
*Մինչ ասոր քովն ալ, մայրիներուն տակ,*
*Փորուած է փոսն իր ցուրտ ու դժնդակ։*

*Խե՛ղճ կին... կսկծէդ քու մէկ զաւկին*
*Աչքդ առատ արցունք, հոգիդ ցաւագին,*
*Միշտ կուգայիր հո՛ս, մարմնովդ տկար,*
*Կուրծքիդ սեղմելու հէք տղուդ ցուրտ քար։*

*Դու կը միայի՛ր քու սրտիդ խորէն,*
*Մոռցած հէ՞ք անձդ, աշխարհ համօրէն,*
*Մինակ զաւկիդ հետ խօսէիր երկար,*
*Բայց ինչ օգուտ որ քարէն ձայն չէր գար։*

*— «Ըսէ՛, Յարութիւն, ա՛խ, ընտո՞ր մեռար.*
*«Արթնցիր, քեզի վարդ եմ բերեր, ա՛ռ...*
*«Ծօ, քանի տարի վրադ կուլամ աս,*
*«Օր մը չըսիր ինձ.— Մի՛ լար քա՛ մամաս...»*

*Ա՛ս էր միշտ խօսքդ ու տեղդ հոս էր,*
*Կարծէս աչքերէդ արիւն կը հոսէր,*
*Ու կը կրկնէիր միշտ լալահառաջ*
*— «Ա՛խ մեռնիմ ալ հոս թաղուիմ ժամ առաջ...»*

*Եկած ես պառկիլ տղուդ քովը, կի՛ն,*
*Վերջապէս հասար քու խենդ փափաքին,*
*Մոռցիր ա՛լ վիշտերդ ու ցաւերդ խի՛ստ*
*Միացիր տղուդ, քնացի՛ր հանգիստ...։*

# ԲԵԹՂԵՀԵՄՑԻ ◎ ◎ ◎ ԳԵՂՈՒՀԻՆ



Ջինջ լաչակին տակ
Դէմքն անբիծ կուսին՝
— Ճիշտ լիալուսին —
Թուի մէկ հրեշտակ ։

Աչկունքն իր մրայօն,
— Զոյգ գոհար անգին —
Մթագնի երկին՝
Հայեացքին մէջ հո՛ն ։

Թէ ներա նայիս՝
Կարծես, սէր գեղուն՝
Հոգիէն գեղուն,
Իբրեւ Անայիս ։

Թշեր վարդագոյն,
Անսնգոյր այտին
Վրայ ճառագայթին,
Լոյս ճաճանչն հոգւոյ...

Զայն ոչ Ռաֆայէլ
Գծել պիտ՛ կրնար,
Ոչ ոսկի քնար
Հոմերին երգել...

Շրթներ ծիրանի,
Իսկ լանջն իր համակ
Ուռած գերդ կոհակ՝
Պիրկ կազմ՛իրանի ։

Չ՚ունի խոպոպիկ՝
Ձմեռ թէ ամառ,
Տքնող մը յամառ.
Ոտքն իր միշտ բոպիկ ։

Այգուն շաղ ու շող՝
Ինքն այգին քօղով.
Ձեռքն ալ մէկ կողով՝
Քաղէ թուզ, խաղող...

Ան միշտ զօտեպինդ.
Ամեն առաւօտ
Սուրբ Մսուրին մօտ,
Հաւատքին մէջ պինդ ։

Մինչ շատերն այրին
Իր գեղովն անճառ,
Սա կը փայլի յար,
Սիրով Սուրբ Այրին.

# ՍԱՐԿԱՒԱԳԻՆ ԱՌԱԿՆԵՐԸ

*Որ ուտէ, բանջար՝*
*Ցաւելու հանճար,*
*Եւ դառնայ անչար*
*Ըլլայ իսկ ա՛ն չար:*

*Որ ունի հանճար,*
*Չէ բնաւ անճար,*
*Այլ վխտուն մ՚անճառ,*
*Լաւ խօսի ան ճառ:*

*Մարդը բանական*
*Չըլլար վանական.*
*Այլ հաւանական*
*Որ անբնակ — ան:*

*Իրաւ կեանք վանքին*
*Խի՛ստ հեշտ ու անգին.*
*Բայց կղերն անկին՝*
*Անարգ մէջ կեանքին:*

*Երբ աղջիկ կամ կին*
*Ներհակ քու կամքին՝*
*Ապրէ՛ դու անկին...*
*Չի կեանք՝ թանկագին*

*Որ անամուսին՝*
*Կեանքն անհամ ու սի՛ն,*
*Ու վրադ խօսին*
*Նման Հոսոսին:*

*Ո՛չ խունկ, անուշ բոյր.*
*Ո՛չ սէր, ո՛չ, համբոյր*
*Չունին, ոչ հրապոյր*
*Երբ սիրտն, հոգին, կո՛յր:*

*Տե՛ս մէկ հեղ անի,*
*Որ իսկ գեղանի...*
*Երբ սէր գեղանի*
*Սրտէն սեղանի.. :*

*Երբ քաղէք ծաղիկ*
*Պահ մը ծիծաղիք...*
*Մինչ թառամ ծաղիկ՝*
*Գա՛լարին աղիկ..:*

*Բանի մը վատ, չար,*
*Եղող բուն պատճառ*
*Շինէ իսկ տաճար՝*
*Մեռնի չարաչար ..*

*Ոճիր թէ տըռամ,*
*Գործողն է բուն դրամ.*
*Ուստի թրթռամ*
*Ես միշտ անդրամ ..*

*Երբէք խինդ խրախճան*
*Չունին վերջ վախճան.*
*Ուտող մարդն անջան*
*Տեսնէ վերջ տանջան..,*

*Ոխէն ու վախէն*
*Սրտեր բաբախէն*
*Օր մ՚ալ իր խաղէն*
*Տեսնես զինք կախեն:*

*Ունի՞ բարի կամ.*
*Նա է բարեկամ,*
*Իսկ այն որ կարկամ՝*
*Զարկ գլխուն քար զամ .:*



ԶՈՒԻՑԵՐԻԱՑԻ

## ՀԱՅԱՍԷՐ ԲԱՐԵՐԱՐՈՒՀԻ

# ՕՐ. ԿԱՊՐԻԷԼ ՆԱՎԻԼ

որ ծնած է 1861 եւ վախճանած 1913 ին:

Բռնակալութեան շրջանին՝ Հայկական ահաւոր ջարդերուն արձագանգը գացած էր ամէնէն աւելի Զուիցերիոյ սքանչելի ու կենսունակ լեռներուն մէջ, ուր Օր. Կապրիէլ Նավիլ առաջինը հանդիսացաւ իր գուրգուրոտ ու խնամոտ բազուկները երկարել հուրէն, սուրէն խուսափող Հայ որբուկներու և որբուհիներու ու վեհանձնութեամբ խնամել ու դաստիարակել զանոնք՝ իբրև ճշմարիտ անձնուէր մայր մը իր ազգակից ու ցեղակից սեռին հիացումին նոյն իսկ նախանձը շարժելու աստիճան:

Օրիորդ Նավիլ կը պատկանի Ժընէվի հին ու հարուստ ազնուական ընտանիքի մը և որ քեռորդուհին է անխոնջ հայասէր Լէօփոլտ Ֆավրի, իսկ եղբօր աղջիկն է Զուիցերիացի անուանի փիլիսոփային՝ Էրնէսթ Նավիլի և Էտուար Նավիլի աշխարհահռչակ Եգիպտաբանին:

Օրիորդ Նավիլ 22 տարեկան սիրավառ հասակին՝ կորսն-



ցուցած ըլլալով իր նշանածը, որուն անկեղծօրէն նուիրած էր իր համակ սէրը՝ կուխտէ չամուսնանալ ու բարեգործութեան նուիրել իր անձը, և մինչև իր մահը 52 տարեկան հասակին մէջ՝ շարունակեց իր յղացած Որբազան գործը: Գրեթէ չէ եղած բարեգործական հաստատութիւն մը, ուր զգալի եղած չըլլայ իր սրտանուէր աջակցութիւնը և մասնակցութիւնը:

Հայկական մեծ եղեռնին ատեն, Օրիորդ Նավիլ, հայ թշուառ որբերու պահապան երկնառաք զուարթունը հանդիսացաւ պարփակելով զանոնք իր գուրգուրոտ բազուկներուն մէջ. և այս զգացումով ու նպատակաւ նոյն միջոցներուն թշուառ Հայերու օգնելու համար կազմակերպուած բարեգործական ընկերութեան գանձապետուհին եղաւ յաճախ մեծ չափով նպաստելով որբանոցներու հաստատման:

Ողբացեալ անմահն Պէրպէրեան երբ Պոլսոյ արիւնոտ դէպքերու բերումով Ժընէվ ապաստանած էր, Օրիորդ Նավիլ անձամբ դիմելով՝ խնդրեց անկէ որ իր հովանաւորութեան տակ գտնուող Հայ պատանիներու հայերէն դասեր աւանդէ, չը մոռնալու համար իրենց մայրենի լեզուն:

Այսպէս, Օրիորդ Նավիլ, մարդասիրական անհուն զգացումով մը տոգորուած. հարազատ մօրմէ մ'աւելի կը սիրէր ու կ'հոգար իր որբուկներն ու անոնցմով կը մխիթարուէր՝ սրտի անհուն գոհութեամբ ու բերկրութեամբ մը ալցուն: Իր հայասիրութիւնն ու որբասիրութիւնն չափ ու սահման չունէր. և սակայն գտնուեցան ապերախտ բաղդախնդիրներ, բացարձակ խաչագողներ որ օգտուելով Օրիորդ Նավիլի յոյժ գթասրտութենէն չարաչար գործածեցին անոր հայասիրութիւնը. և այսպէս Եւրոպայի մէջ անխղճօրէն ու լրբօրէն չահագործեցին անոր հայասէրի զգացումները: Սակայն Օրդ. Նավիլ՝ վեհանձն ու ազնիւ հոգիի տէր երբեք չը տեսնել կեղծեց այդ կարգի ստորին արարքները և շարունակեց իր որբազան գործը փութկոտ անձնուիրութիւնը հայ տառապանքին ու հայ անունին որքան վեհանձնօրէն նոյնքան անշահախնդրօրէն:

Մեր «Սարկաւագի Տարեցոյց»ը պարծանքով կ'արձանագրէ Օրիորդ Կապրիէլ Նաւլիլի պէս Եւրոպացի հայասէր բարերարներու անունը որ հայ տառապանքին խառնեցին իրենց գթութեան ու մարդասիրութեան անուշ ցօղը և այսպէս մէկ կողմէն մխիթարեցին միւս կողմէ ուսման ու գիտութեան քաղցրագոյն կաթը ճամբեցին մեր տառապեալ հայ ազգին թշուառ զաւակներուն ։ Եւ երկնառաք զուարթուններու պէս սրբեցին հայաստանի արցունքները՝ կարգ մը մեծատուններ ու մեծուհիներ չիկնեցնելու աստիճան ։

Օրիորդ Նաւլիլ՝ այդ մեծ բարերարուհին՝ եղական անմոռանալի դէմք մընէ բոլոր զինքը ճանչցողներուն և մեր հայութեան համար, քանի որ ան իսկապէս Երկնային բարութեան կաթիլը մնած՝ այսօր քաղցր անմոռանալի յիշատակի տեղ մը ունի մեր ազգային տարերգութեան և հայ սրտերու մէջ քան մեր կարգ մը փափկասուն և սնափառութեամբ սնքացող հայ մեծուհիներ, որոնք իրենց ճոխութեան ու ազնուականութեան մէջ չուզեցին օրինակ առնել Օրիորդ Կապրիէլ Նաւլիլներ ։

Օն ուրեմն, յարգանք իր բարեգործ հոգիին և պատիւ իր վեհաշուք անունին ։

## ՅԻՇԷ ԶԻՍ

ՓՈԹՐԻԿ ԼՕԺԷՆԻՍ

Արշալոյսին կանուխ կամ ուշ
Երբ կ'արթննաս քունէդ անուշ,
Հայելիին մէջ դէմքդ դիտես,
Յիշէ՛ զիս թէ՝ քովիկդ եմ ես.

Երբ նոր ծագի արեւ պայծառ,
Ձորակիս բուրեն ծաղիկ ու ծառ.
Ամպ մ'ալ ցօղէ գլխուդ վերեւ՝
Յիշէ զիս թէ տամ քեզ բարեւ ։



Օծուած ցօղովն այգուն զուարթ
Պարտէզէ մ'երբ քաղես դու վարդ,
Ու հոտոտես ան սիրալէզ,
Յիշէ զիս թէ՝ կը սիրեմ քեզ:

Պարտէզներուն մէջ իսկ սիրուն
Երբոր լսես թռչուններուն
Մելամաղձոտ, երգն ու վերքեր՝
Յիշէ դու իմ ձայնս կերկեր...

Ձիլիփղարկն, Գարաղանկն
Անուշ հոտերն ալ երբ փչեն,
Ծոյեն այստեղ քու վարդաբո՛յր
Յիշէ թէ ես՝ կ'առնեմ համբոյր:

Խօլ թափով մ'ալ երբ դու ներքին
Դիտես երբեմն ծովն ու երկին,
Ամոքելու քու ցաւն ու վի՛շտ
Գիտցիր որ քեզ կը յիշեմ միշտ:

Խեռ ալիքներն ալ երբ հեռուն
Լսես բաղխին սեպ ժայռերուն,
Աղմկելով միշտ մութ խաւա՛ր
Գիտցիր որ սիրտս յուզուած է յար:

Իսկ գիշերներն որքան որ դո՛ւն
Ըղձաս քունի մէջ կամ արթո՛ւն,
Քեզմէ միայն կը խնդրեմ ես,
Մինչեւ առտու զիս երազե՛ս...:

# ԵՐԱԶ

Խի՜ստ գեղեցիկ էր, սիրուն,
Թուէր մէկ ջինջ զուարթուն,
Ժպիտ ունէր միշտ դէմքին,
Ու հրաւիրէր զիս Երկին:

Աչկունքն էին իր մեղու,
Ձայնն իր թրթռուն ու աղու.
Այտերն իսկ իր սիրաբոյր
Զորս դին սփռէր խո՜ւնկ ու բոյր:

Հարցի ի՞նչ կայ հո՞ն երկին...
Նա չը ձայնեց ինձ կրկին.
Շուտով լռին ու անցաւ
Քովէս թռա՜ւ ու անցա՜ւ:

Մնացի ես սրտախոց...
Թողած էր մէջս կրակ ու բոց...
Եկաւ սարսուռ մը վրաս...
Մինչդեռ տեսածս էր երա՜զ...։

*26/10 Մարտ 1912*
**Գաւիգիւղ**



ԳԵՐԱՊԱՏԻՒ
## ՎԱՂԱՐՇԱԿ Ծ. Վ. ՊՕՂՈՍԵԱՆ
**ՌՕՏՈՍԹՕՑԻ**

*Միաբան Ս. Երուսաղէմի նախկին Կաթողիկոսական տեղապահ Զէյթունի։*

Հայորդի մը որ՝
Թիկնեղ ու խոշոր.
Ազնի՜ւ, եռանդո՜ւն.
Սրտով մի՜շտ արթո՜ւն...։

Ուլնիոյ սա՛ Հայր,
Թնդեց խութ ու ժայռ,
Աչքն առանց անձին
Վտանգն առանձին։

Այժմ իր Տիտղո՛ս
«Զէյթունի Հերո՛ս...»
Դեռ ինք պատանի՝
Իր լոյծ կը տանի...:

Տէ՛ր, սիրտ բաբախէ,
Որն ի բուն «ա՛խ» է,
Մինչ աչքն աղեխա՛րշ...։
Սեւ յօնեղ վաղարշ։

# ՄԽԻԹԱՐԱԿԱՆ

ՕՐ. ԷԼԻԶ ԳԱՐԱԳԱՇԵԱՆԻՆ

Ա՛հ, գիտեմ, իրաւ որ,
Այսօր դու ես վիրաւոր.

Հոգիդ ալ է տրտում.
Թափես արցունք անհատնում։

Մեծ է կորուստդ ա՛ս...,
Ա՛խ, չէ ներիք ո՛րքան լաս.

Բայց ի՛նչ, խեր լաց ու կոծ,
Բանաս հօրդ աչքեր գոց.

Աչքն է գոց ո՛րքան ալ՝
Մեռնիլ չէ ան քնանայ..

Լալովդ ատանկ կարի՝
Թերեւս քունը խանգարի.

Ձգէ՛ որ հանգիստ նա
Հո՛ն իր տեղը քնանայ։

Թո՛ղ անոնք լան մինակ
Որ թշուառ են շարունակ.

Մխիթարուէ դո՛ւն
Հօրդ ատանկ մեռնելուն.

Երանի տուր անոր.
Որ չզգար ալ ցաւ հի՛ն, նոր։

Թերեւս հիմա հոգին
Կը ցնծայ մէջ երնքին...



Լուսերուն մէջ անտեղ
Անմահներուն հետ մէկտեղ...

Ի՛նչ ըսեմ դեռ քեզ, ա՛խ,
Որ սիրտդ բռնես ուրախ.

Չեմ գիտեր ընտոր ես
Հիմա մխիթարեմ քեզ,

Կ'ուզէի երգերով
Հանդարտել սիրտդ խռով,

Եկուր տես քնարս ալ
Փշրուած է, չ'երգեր՝ ա՛լ...:

Մուսաներու քնար
Թո՛ղ զարնեն քեզ երգ, մի լար,

Թո՛ղ Մասիսի հրեշտակ
Մխիթարէ քեզ մինակ.

Թող մայիս պճնազարդ
Ցանէ շուրջդ հազար վարդ.

Գարնան ալ սիւքն անուշ
Փարատէ սրտիդ մշուշ.

Մինչ սոխակին երգ, խաղ
Բռնեն սիրտդ ալ մի՛շտ ուրախ։

*ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՆԱՎԵԱՆ*
*Աւագ Սարկաւագ*

1908
*Խասգիւղ*

# ԹԻԹԵՌՆ ՈՒ ԵՍ

Հազիւ չորսը կայ ժամը գիշերուան:
Խաբուսիկ կեանքը խորհրդանշող
Ու տակաւ մաշող վտիտ մոմիս դէմ
Նստած մէկուսի, լուռ ու անձայն՝
Գտնելու համար մտքիս կայծ ու շող՝
Գրքի մը էջերն ես կը թղթատեմ...:

Ինձ պէս սիրահար՝ կեանքի ու լոյսին,
Կը պարէ շուրջս թիթեռնիկ մ'անխախ,
Որ մերթ կը մօտի վառուած ճրագին
Ա՛ն՝ որուն կեանքն է երազի պէս սին.
Բայց լոյս կը խնդրէ՝ կեանք մը զինչ խաղաղ.
Ու մինչ կը թրթռայ յուսով ցնծագին...

Ես խորասուզուած գրքիս մէջ տակաւ
Զո՛ւր տեղ կը ջանամ որոնել կեանք, լոյս...
Ա՛լ աչքս յառած եմ ճրագիս լոյսին...
Մինչդեռ թիթեռն ալ սա՛ լոյսին փակաւ
Բայց, ափսո՛ս, խեղճը կ'ուզէ այժմ տալ խոյս
Ճիգերով անզօր աշխատանքով սին:

Կեցի՛ր, կեանք շնորհեմ քեզ, սիրուն թիթե՛ռ՝
Դու որ կորոնես քուն հիմա կեա՛նք, լո՛յս,
Կ'շտապեմ ահա ձեռքս ճրագին...
Օ՛հ, կրնաս դու զիս հրճուեցնել դեռ,
Երբ աշխարհն է սի՛ն, կեանքը փաղափո՛յս...
Գնա՛ դու թրթռայ յուսով ցնծագին...



## ՍՐԲՈՒՀԻ ՄԱՅՐԱՊԵՏ
## ՆՇԱՆ ԳԱԼՖԱԵԱՆ

ՀԻՄՆԱԴԻՐ ՄԱՅՐ
ՀԱՄԱՆՈՒՆ ՈՐԲԱՆՈՑԻ ԱՂՋԿԱՆՑ

*ՀԱՍՏԱՏԵԱԼ*
Խասգիւղ 1 Յունվ. 1866

Ծնած է Գարթալ, 1822 փետր. 17ին: Հայրը եղած է Բալուցի՝ Զօրպաճի Նշան աղա Գալֆաեան, արհեստով երկաթագործ-ընդարձակ այգիներու, արտերու և ձիթատաններու տէր: Ունեցած է վեց զաւակ, որոնց անդրանիկն է եղած Սրբուհի, որ մանկութենէն խիստ չքնաղ եղած էր, և որուն համար «Գարթալցի աղուոր մայրապետ» տիտղոսը կը կրէր:

Մայրը ուզած է զինքը ամուսնացնել բայց անօգուտ: Սրբուհի կ'ուխտէ կուսութեան նուիրել իր անձը, 1837ին ժանտախտէ կը բռնուի, և առիթէն օգուտ քաղելով կը գոչէ իր մայրը, և կ'ըսէ «ուխտէ Աստուծոյ որ եթէ մահէս ազատիմ՝ չհակառակիս ուխտիս և անոր նուիրուիմ: Մայրը կ'ուխտէ, որմէ շաբաթ մը վերջ Սրբուհի կ'ապաքինի:

Սրբուհի իր հայրը կորսնցնելէ վերջ՝ նիւթական մեծամեծ զրկանքներու և կորուստներու կը մատնուի, 1840ին կուգայ կը հաստատուի իր հօրեղբօրորդւոյն Նշանեան Աղաթօն Գրիգորի տունը: Այն ատեն հանդիսաւոր ուխտադրութեամբ կը հագնի մայրապետական սուգի վերարկուն:

Նշանաւոր հանդիսացած է իր ձեռագործի գեղարուեստով, որուն շնորհիւ ո՛չ միայն իր ծնողքը կը նայի այլ և փոքրիկ տուն մը կը գնէ։ Այս տան մէջ կը մեռնի 1865ին իր մայրը Թագուհի հանըմ։

1850ին արհեստանոց մը կը բանայ և իր հովանաւորութեան տակ կ'առնէ երկսեռ աղքատիկ աշակերտներ։

Սրբուհի մայրապետ 1868ին Անվէնայի արուեստահանդէսին կը ղրկէ մետաքսեայ ծանրագին կերպասի վրայ արեւելեան ճաշակով բանուած ոսկեթել նրբաճաշակ բարձ մը և վերմակ մը, որոնք գնահատուելով, ձեռագործի առաջին կարգի պատւոյ վկայականը կը ստանայ։

Վեց անգամ յաջորդաբար կայցելէ Եգիպտոս Իպրահիմ և Իսմայիլ փաշաներու խտիվութեան ժամանակ՝ և իր սքանչելի ձեռագործներով իշխանազուն տիկիններու գոհացում կուտայ և կը պատուուի։

1888ին Եուսուֆեան Գէորգ պէյի տիկնոջ հետ կ'ուղեւորի Իտալիա, կ'այցելէ Նափոլի, Հռոմ, Ֆիօռէնցա և Միլան քաղաքները, յաջորդ տարի ուխտի կ'երթայ Երուսաղէմ վերադարձին կը հրաւիրուի Աթէնք, Հելլէն թագուհիին, և պալատական տիկիններու յանձնական ճաշակով մաղէ օյա և այլ ձեռագործ զարդեր պատրաստելու։

1865ի Յունիս ամսոյ սկիզբները, ահուելի քօլերային զործած աւերներուն երեսէն անթիւ որբեր անտէր ու անպաշտպան կը մնան։ Ճիշտ այս միջոցին է որ Կարապետ Վ. Շահնազարեան՝ Արծրունի ՏէրԳէորգ քահանայի քով կը գտնուի (ինչպէս նաև Ներսէս Վարժապետեան քարոզիչ եպիսկոպոս Խասգիւղի) որ խորհուրդ կուտայ որբեր խնամել՝ օրինակ հանդիսացնելով Եւրոպայի «Գթութեան քոյր»երը։

Սրբուհի մայրապետ իր անուսում ու նիւթական անձուկ վիճակին խոստովանելով հանդերձ, կ'ուխտէ իրագործել այդ առաջարկը, և իսկոյն հինգ օրուան մէջ 2–10 տարեկան իրապէս անտէր որբ աղջիկներ կը ժողվէ, չորսը Չըքալըի Թաղը ախոռի մը մէջէն, եօթը Ս. Ստեփաննոս եկեղեցւոյն սանդուխներուն վրայէն և մնացեալները մայրաքաղաքի արուարձաններէն։



Սրբուհի մայրապետ իր ձեռքի աշխատութենէն շահած 200 օսմ. ոսկին սիրայօժար կը ծախսէ այդ որբուհիներուն և կը խնամէ զանոնք, ապա Ներսէս Վարժապետեանի վկայագրով, սկսած է մեծահարուստներէն նպաստ ժողվել և անպէս խնամել։ 1870 Մայիս 2ին իր 20 որբուհիներով շրջապատուած կը դիմէ Բեհասխանէ Սուլթան Ազիզ կայսեր, որ 50 օսմ. ոսկի կը նուիրէ, և օրական եօթուկէս օխա միս և 15 օխա հաց, զոր մինչև ազատութեան սկիզբը կը շարունակուէր։

Այս միջոցին 1871 Սրբուհի գլխաւոր մտածումն է եղած որբանոցը ընդարձակելու համար Տաքէսեան ընդարձակ ապարանքը գնել. որ աճուրդի դրուած էր 950 ոսկի։ Մայրապետ ալ կը մասնակցի աճուրդին, սակայն, գրպանը 110 փարա միայն կը գտնուի։ Հաւատքով տոգորուած մեծ կոյսը՝ ութը օրուան մէջ 650 ոսկի կը հաւաքէ անմիջապէս և կը յանձնէ տան տիրոջ, մնացեալ 300 ոսկիին համար պարտամուրհակ մը կուտայ։ Եւ այսպէս կը հիմնէ 1871 Մարտ 1ին Գալֆաեան որբանոցը 23 որբուհիներով, ուր կը պատսպարուին ու կը խնամուին այսօր 90 որբուհիներ մեծ հոգածութեամբ՝ շնորհիւ մեծահոգի կոյս Սրբուհիին և հոգատարութեամբ Ազգին։

1889ին վախճանելով մեծագործ կոյսը՝ կայսերական հրովարտակի մը համաձայն իր վաստակաբեկ մարմինը ամփոփուած է իր սիրելի որբանոցին կից շրջապատուած մշտադալար ծաղիկներով, անշո՛ւշտ իր մահէն վերջն իսկ մօտիկ ըլլալու համար հոգիով այն որբուհիներուն զորոնք այնքան սիրեց օրինակ հանդիսացնելով իր անձը, կեանքը և անմոռանալի յիշատակը՝ ուխտերուն։

Հանգի՛ստ խունկեալ ճակտիդ Կո՛յս, և յարգանք մաքրափայլ ճակտիդ։

# ՍԻՐԱՀԱՐԷՆ ՄԷԿ ՆԱՄԱԿ

## ՈՐ ԿԸ ԲՈՒՐԷ ՄԷՐ ՀԱՄԱԿ

Հորիզոնէն անդին, հեռուն
Մտասեւեռ ու մոլորուն
Կը խոկայի ես օրերով,
Սիրտս աղետալից ու միշտ խռով:

Ինչո՞ւ արդեօք ինձ համակիր.
Ու նուիրող սիրտն համակ իր
Այսքան երկար կը մնայ լուռ,
Ըսի — «չըլլա՞յ նէ ալ տխուր...»:

Յանկարծ միտքս փոթորկեցաւ...
— «Անշուշտ հիւանդ է ունի ցաւ...
«Գուցէ եղած է տենդահար...
Ա՜հ խորհէի ես դողահար...:

Աշնանային պաղուկ հովեր
Կը թուէին ինձ մահաբեր,
Մինչ նորածագ պայծառ արեւ՝
Այսքան խաւար մ'էր արդարեւ:

Ոչ սոխակին անուշ երգեր,
Թախծոտ սրտիս հրճուանք կ'առթէր.
Ո՜չ իսկ աղու ձայն նուագին
Կրնար դիւթել ա՜հ, իմ հոգին:



Ո՜չ առաւօտ եւ ո՜չ գիշեր
Երբէք բան մը չէի յիշեր...
Այլ ես իմ մէջս կեցած մի՜շտ լուռ
Մտածէի ա՜հ միշտ տխուր...

Մերթ ամպերուն տակ՝ որ խուսին,
Կը դիտէի պայծառ լուսին.
Որ կը ծածկէր դէմքն իր ա՜հ, միշտ
Թերեւս ունէր ինձ պէս նա վիշտ...

Ես երանի տայի անոր,
Որ ամպերուն տակէն մոլոր
Ձեզ կը դիտէ՝ լռին յաճախ,
Բայց չը տար ինձ ա՜ն, լուր մ'աւա՜ղ:

Ա՜հ, լսեցի յանկարծ մէկ օր,
Ձայն մ'որ նման էր ճիշտ մեծ մօր.
Տեսայ վերջ զինք ու մէկ տեսակ
Բռնած ունէր ձեռքը փակ...

Մէջն էր լեցուն դեղին ոսկին
— Հաւատացէ՛ք իմ այս խօսքին,
Հանեց մէջէն հատ մը նոր նոր
Վրան դրոշմած դէմք մը աղուոր:

Ու նուիրեց ինձ այդ ոսկին
Որ ինձ համար չունեցաւ գին.
Չը վայելած բայց ես դեռ ան՝
Բացի աչքս որ էր մէկ երա՜զ...

Բայց երազս էր այնքան քաղցր,
Որ նոյն օր Ձեր նամակն առի.
Կարդացի զայն կրկին կրկին,
Ես զարմացայ այս մեծ հրաշքին:



Ազնուափայլ
ՏԻԿԻՆ ՊՕՂՈՍ ՓԱՇԱ ՆՈՒՊԱՐ



Վսեմաշուք
ՊՕՂՈՍ ՓԱՇԱ ՆՈՒՊԱՐ

# ՈՒՂԵՐՁ
## ԱՌ ՀԱՅՐԵՆԱՆՈՒԷՐ
## ՎՍԵՄԱՇՈՒՔ ՊՕՂՈՍ ՓԱՇԱ ՆՈՒՊԱՐ

*Հին բուրգերու երկրին մէջ, եղար երկրորդ դու Մովսէս,*
*Ըսիր Հայուն տարաբաղդ— «Մինչեւ ե՞րբ հոս սպասես...*
*«Վերադարձիր Հայրենիք, շո՛ւտ Աւետեաց վեհ աշխարհ,*
*«Վերէն կ'իջնէ Մանանան, ա՛լ դադրեցուր ողբդ, աշխար...:*



*Արիւնազանգ խաչն ուսիդ՝ անցար ծովէն այն կարմիր.*
*Ու մոռցուցիր տառապանքն հայուն անբաղդ դեռ թարմ իր.*
*Թափառական հայուն հետ դու ցոյց տուիր իր ուղին.*
*Ու Արարատն երկիրն այն, ուր մեղր ու կաթ կը բղխին:*

*Դարերն այն իսկ քիչ անգամ ծնին Քեզ պէս վեհ մարդ,*
*Զի դու գտար հ՛ն առաջ քուն կորուած դրախտն արդ.*
*Ազատեցիր դժոխքէն հետ տառապող Հայ ոգին,*
*Բազուկներուդ մէջ գրկած՝ տարեցիր զայն կաթողին:*

*Մխիթարիչ դու հրեշտակ վե՛հ Մասիսին արդարեւ*
*Փառքն ու պարծանքն ես Ջամին — վրայ ծագի արդ արեւ,*
*Մինչ պարփակէ հայ ոգին համբաւատենչ թեւիդ տակ*
*Արձագանգէ վեհ անունդ մինչ ազգէ ազգ բովանդակ:*

*Օն մարդկանցներ շղթորքն առաքեմ վե՛ր արտացին;*
*Որ երկարի օրերը Հայրենատենչ քու կեանքին,*
*Իսկ այն Վսեմ անունը ու վեհ սիրտն որ՝ արդարէ.*
*Թո՛ղ Պատմութիւնն Հայ Ազգին ոսկետառով զարդէ:*

**ՍԱՐԿԻՍԱԳ**

*1 Յունվ. 1914*
*Ֆեներ եօլու Գատըգիւղ*

## ԼՈՅՍԻ ՄԷՋ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Ուր օրէնք չկայ հո՛ն խիղճ չկայ։

Այն է ամէնէն իմաստուն մարդը որ գիտէ աշխարհի փորձութիւններուն դիմադրաւել։

Մեծագործ ու անշահախնդիր է այն մարդը, որ իր գրպանը տասնոց մը չունի։

Իսկ հանճարեղ է ան որ պարապ տեղը պարապ թերթերու մեքալիկ չի տար։

Աստուծոյ տաճարը մտնող հայր մը արտասանել գիտցող մը «Տաճար» կարդալու պէտք չունի։

Աշխարհի թագաւորը գիտէ՞ք թէ ո՛վ է— անարգ մետաղ մը դրամը, որ օրէնք, իշխանութիւն կը դնէ կ'անցնի։

Չէք կրնար երկու տէրանց ծառայել, սիրոյ ու փառքի:

Ընդհանրապէս անոնք կը փախչին կղերականութեան, որ փառքի ու անձնասիրութեան ետեւէ են։

Ինքնահաւանը ո՛չ ոքի քով յարգ ու պատիւ ունի։

Ամէն բանի հետամուտ եղողը՝ ո՛չ մէկ նպատակի կը հասնի։

Ամուսնութեան տենչացող մը երբ ոչ մէկին կը հաւնի՝ ագահէ երբեք տարբերութիւն չունի, որովհետեւ ամէնքն ալ կ'ուզէ ունենալ։

Տգէտ մը կրնայ շատ բարձր պաշտօններու հասնիլ. բայց վաղ կամ անագան հանրութիւնը կը թափանցէ անոր տգիտութեան։

Բացարձակ կեղծաւորներն որ միշտ բարձր պաշտօններու կը մնան՝ խնկարկելով ամէնուն. ու այս օրինակները չեն որ պիտի պակսէին նոյն իսկ մեր ազգային շրջանակին մէջ։



Առաքինի մարդիկ միշտ հալածուած են, ճշմարտախօսները խաչուած՝ օրինակ Քրիստոս. և շատեր։

Տգէտներն են որ իրենց սխալները չեն խոստովանիր.

Ան որ կ'զգայ իր թերութիւնը ու կը խոստովանի մեծ մարդ է, իսկ յիմար՝ որ զգալով չխոստովանիր ու կ'ուզէ պարտկել զայն.

Պակասամիտ մարդիկ անքաղաքավար կ'ըլլան:

Անձնապաշտ մարդիկ անասունէ երբեք տարբերութիւն չունին...

Կապիկները աւելի կը սիրուին քան կապկակերպ մարդիկ...։

Ամենամեծ անբարոյականը այն է որ դէմ հանդիման սուտ կը խօսի։

Մարդ մը կրնայ խիստ պերճախօս բարոյականը ըլլալ. բայց ո՛չ ուղղամիտ ու խոստմնապահ։

Մեծ է այն մարդը որ իրմէն մեծին թերութիւնները կը տեսնէ ու քաջասիրտ որ կը ցաղէ։

Սնամիտ մարդիկ գոռոզ ու ամբարտաւան կ'ըլլան։

Ունայնամիտներն են որ շատ անգամ ամէն մարդու չեն հաւնիր։

Զօրաւոր նկարագրի տէր մէկը ամէն բանի կը յաղթէ։

Եթէ զգեստէն պիտի դատենք մէկը Տրայճի ու Թոփճի վաճառատուններու առջև անխօսներ շա՛տ...։

Օղին մարդը կուտայ հողին...

Տգէտներն են որ իրենց թերութիւնները տեսնել չեն ուզեր։

Վատերն անգամ սիրել գիտեն. բայց ամէն սէր միօրինակ չէ։

Ճշմարիտ գեղեցկութիւնը բնութեան մէջ պէտք է փնտռել...։

Երջանկութիւնը եղածով գոհ ըլլալուն մէջն է։

Ամուսնութիւնը ոմանք երջանկութիւն կը նկատեն,

ամմնք դժբախտութիւն, ոչ այս է ոչ ա՛յն, այլ պարզապէս խաղքութիւն։

Մեծ մարդիկ անգամ կը սխալին չա՛տ անգամ.

Աշխարհի վրայ եթէ կայ իրական բան մը, այն ալ մահն է։

Կեանքը՝ տառապանք է.
Կինը՝ խաբկանք,
Ամէն երևոյթ կամ գեղեցկութիւն՝ պատրա՛նք,
Սէրը՝ սրտի հիւանդութիւն,
Դրամը՝ ամէն ի՛նչ
Ամէն ի՛նչ ոչի՛նչ...

# ՍԱՐԿԱՒԱԳԻՆ ԱՌԱԿՆԵՐԸ

Իսկ նա որ փարթամ
Միշտ խորհի տարտամ,
Անունն երբ կարդամ
Վերջ բերանս վար տամ..

Մարդը քաջարի
Նման արջառի...
Որ հակաճառի՝
Յաճախ չարչարի..։

Իսկ այն որ կարի
Բարի ու արի՝
Շուտով խոնարհի
Գլուխը քարի։

Մարդը կամապաշտ,
Ոչ որի հետ հաշտ
Պեխերը լեռ դա՛շտ,
Ձի գլուխն է տա՛շտ. .

Յաճախ որ վա՛տ իժ
Մնայ անպատիժ
Պարպող օղւոյ շիշ
Տեսնես դու մաշիշ։

Իրաւ բարեկիրթ.
Մարդը Թափէ բի՛րտ
Իսկ ան որ անկիրթ.
Թողու իրեն քիրտ..



ՓԻԷՌ ՔԻԵԱՌ ՀՌՉԱԿԱՒՈՐ ՀԱՅԱՍԷՐ

# ՊԷԱԹՐԻՍ

Նրբահասակ, բարեզարդ
Մերթ լուրջ է ինք մերթ զուարթ..
Ոսկի ակնոց իր քթին..
Դէմքին վարդեր մերթ փթթին։

Աչկունք մեղուի իսկ հանգոյն,
Գաղտնիքներու թուխ բոյն,
Մինչ իր ժպիտն ու ծիծաղ.
Ձերդ հուրիզոն մը նուաղ...։

Սիրտն իր փափուկ ա՛հ միշտ տրոփ
Ձայն իր գոռայ զերդ ամպրոպ
Ատամներն իր ադամանդ
Բայց աշխարհ է իրեն բանդ...։

# ՍԱՐԿԱՒԱԳԻՆ

## ԲԱԺԱԿԱՃԱՌԸ

### ԵՐԵԿՈՅԹԻ Մ'ԱՌԹԻՒ

— Արտասանուած է Ս. Յակոբեանց վանքին մէջ —

Դեռ կեանքիս մէջ գրեթէ նոր կը խնկարկեմ բաժակին,
Թո՛ղ ներկաներն որքա՜ն կ'ուզեն վրաս խնդան ու խօսին.
Ցարդ քանի որ ջրի գաւաթ մը խմած եմ ու չեմ գինով
Երկու խօսք ալ ես ըսեմ հոս չափուած մտքիս կարգինով:

Կը խորհիմ այս ճոխ սեղանին շուրջ բազմելնիս ի՞նչ օգուտ,
Երբ մէջերնիս չըլլայ երբեք սէր, միութիւն նաեւ գութ,
Հո՛ս կը բղխին մեր բերներէն քաղցր երգեր այլեւս
Մինչ սրտերնիս խոցոտուած է ուղիղ ճամբէն քալելու:

Հոս է միայն որ մէկ մէկու կեանքին բաժակ կը պարպենք
Վաղն ի՛նչ դուրսը նոյն անձերն ենք սրտով կեղծ ու նենգ,
Գա՛հ մը վերջը՝ կ'անցնին, կ'երթան այս խրախճանքն ու գիշեր
Սակայն այս հացն ու այս գինին վաղը երբեք չե՛նք յիշեր:

Է եղբայրներ, ո՛րքան իրար խաբեցինք ա՛լ կը բաւէ
Մտածեցէք անձերնիս ալ ստեղծուածներ են կաւէ.
Եկէք այլեւս բաժակնուս մէջ քամենք սրտեր մեր անձին
Ու սէր կնքենք, թո՛ղ շողերն երթան մեր վրայ նախանձին:

ՍԱՐԿԱՒԱԳ.

Երուսաղէմ




# ԻՏԱԼԱՑԻ

## ՀԱՅԱՍԷՐ ԳՐԱԳԷՏ

## Պ. ԷՄՄԱՆՈՒԷԼ ՎԻԹՕ

Նախկին Կ. Պոլսոյ Դեսպան
Ծնած 1846ին, մեռած 1901

Համիտեան բռնակալութեան շրջանին (1894) երբ Զէյթուն ապստամբած էր՝ մեծ բռնակալին յոռի վարչութենէն զժգոհ՝ Կ. Պոլսոյ վեց մեծ տէրութեանց դեսպաններու խորհրդովը. Էմմանուէլ Վիթօ իբրեւ երիցագոյնը դեսպաններուն, յանձն առաւ Զէյթունցիներու եւ կառավարութեան միջեւ հաշտութեան պատգամաւորի դերը ստանձնել որ առեն Ալեփու հայասէր դեսպանը՝ իր գիրուկ կազմուածքին ու քիչ մ'ալ յառաջացած տարիքին բերմունքով կ'առնուէր պատկարակով մինչեւ Զէյթուն ուր Տաւրոսի Որդիներուն կողմէ կ'ընդունուէր ամենամեծ խանդավառութեամբ, որովհետեւ Էմմանուէլ Վիթօ իրապէս երկնառաք զուարթունը հանդիսացաւ դժբաղդ Զէյթունցիներուն՝ երբ հուրի սուրի մէջ մնացած իրենց առօրեայ ապրուստին հետ նուազած էր նաեւ մարդկային կեանքի կենսունակ աղը:

Հո՛ն՝ այդ ազնուասիրտ Իտալացի Հայասէրը ըմբոստ Զէյթունցիներուն եւ կառավարութեան միջեւ խաղաղութիւնը

հաստատել ու հաշտութիւնը կնքել վերջ՝ բարեպատեհ ժամը կը նկատէ այդ համբաւաւոր Զէյթունը և տեղական բարքերն ու սովորութիւնները մօտէն ուսումնասիրել, ուստի, քննական պտոյտներ կը կատարէ ու կը մնայ ժողովրդին ամէն խաւերուն ու գրի կ'առնէ այդ անմատչելի սեպ ու ժայռոտ քաղաքին սրտոտ Զաւակներուն պատմութիւնը, զոր իր անձնական ատանին տպարանէն լոյսին յանձնած է, այն ատեն երկու հատորներով, ուր կը ցոլայ Հայուն հին օրերու փառքը և գրագէտ հեղինակին հայասէրի ազնիւ սիրտն ու հոգին...։

Պ. Էմմանուէլ Վիթօ 1889 901 գտնուած է Պէյրութ իտալական հիւպատոսութեան կարևոր պաշտօնով և իր հայասիրութեան իբր ապացոյց՝ իր բնակութիւնը հաստատած էր Պէյրութի Հայոց Ս. Նշան վանքին առընթեր՝ փառաւոր տուն մը գնելով։ Եւ այսպէս ջերմ յարաբերութեան մէջ էր միշտ նոյն ատենուան վանահայր Տեառ Պօլսեցի Տէր Մատթէոս վրդ. Գայրգձեանի և Տարեցոյցիս Սարկաւագին հետ երբ՝ այս վերջինը, իբրև երկսեռ Հայ մանկանց դաստիարակ ուսուցիչ՝ կը պաշտօնավարէր հո՛ն՝ վանքին մէկ անկիւնը գտնուող ծաղկանոցին մէջ։

Սարկաւագ գեղարուեստի սիրահար՝ մի օր լուսանկարելով պատկառելի հայասէրին գլուխը՝ կը նուիրէ իրեն որ շնորհակալութեան քարտով մը զայն պատուելէ վերջ, իր կենդանագիրն ալ կը նուիրէ, ինչպէս կ'երևի տարեցոյցիս մէջ, իր ձեռագիր յիշատակագիրը դրոշմուած վրան։

Պ. Էմմանուէլ Վիթօ մի օր 1900ի, Երուսաղէմ այցելած է ու հոն տասնեակ տարիներէ ի վեր արգելափակ մեծ Աքսորականը տեսնելու անհուն փափաքով ծերունի հիւպատոսը, առաջին պատեհութեան երբ երկաթէ պատրիարքին դէմ հանդիման կը գտնէ ինքզինքը կը յուզուի ու կ'արտասուէ որ բռնակալութիւնը՝ զօրաւոր կամք մը կաշկանդած է։

Վիթօ իր Զէյթունի վրայ գրած իտալերէն երկհատոր գիրքէն նուիրած է այն ատեն հայոց աքսորական պատրիարքին, որ և իր կարգին նուիրած է Ս. Յակոբեանց ընթերցարան գրադարանին։



Երուսաղէմէն վերադարձէն քիչ վերջ էր որ Էմմանուէլ Վիթօ կնքեց իր կեանքը Պէյրութի մէջ։ Մարմինը յատուկ կապարեայ սնտուկի մը մէջ ալքօլով պարփակուած փոխադրուեցաւ Իտալիա, ուրուն յուղարկաւորութիւնը 1–2 ամիս վերջ կատարուելով, արդարև նշանակելի եղաւ հեռաւոր ու մերձաւոր քաղաքներէն Մեծ Տէրութեանց մեծամեծ աւագանիներն ու ներկայացուցիչները ներկայ գտնուելով։

Էմմանուէլ Վիթօ մեծ համբաւ մը ձգած է իտալական գրականութեան մէջ, Սարկաւագի Տարեցոյցն ալ կ'արձանագրէ մեծ հաճոյքով այդ պատուական մեծ անձնաւորութեան մեծափառ Անունը։

# ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ԻՄ ԵՂԲՕՐՈՐԴԻԻՍ

Տե՛ս սա՛ երկնի անհամար,
Միշտ փայլփլուն աստղեր վառ.
Ինչո՞ւ արդեօք խոկան ջուր,
Արեւն ո՞ւրկէ առնէ հուր.
Գիտե՞ս արդեօք լեռ ու ծով
Նիւրող, հիմնող ի՞նչ բան ո՞վ:
Վախ ու զուարթ ո՞ր մէկ մարդ
Այս կեանքին մէջ խիստ ու բարդ.
Արծիւն ի՞նչպէս անվեհեր
Վե՛ր՝ ամպերէն թռչի վեր.
Նորը ինչո՞ւ դառնայ հին.
Երգը ի՞նչ է սոխակին.
Ո՜հ, ի՞նչ բան է ծաղկին բոյր,
Նաեւ մօր մը սիրտն համբոյր:

Խասգիւղ 1902 — ՍԱՐԿԱՒԱԳ

# ՁՕՆ

## ՀԱՄԱԿՐԱՆՔԻ

### Պ. ԳԷՈՐԳ ՊՈԻՊԼԻ

### ԱՍՊԵՏԻ



Համբաւատենչ դու Հայ հանճա՛ր
Խի՛ստ պերճախօս, քերթող մ'անճա՛ռ.
Դու հայութեան փառքն ու պարծա՛ն,
Քե՛զ այս երկտողս զերդ յուշարձան..։

Թո՛ղ լինէի այս պահուս ա՛ն
Գողթան երգիչն եւ կամ Մուսան,
Ձեռքս փանդիռ, ոսկի քնա՛ր,
Ներբողէի Ձեր անունն յար...

Թո՛ղ Մասիսի ձիւնասպիտակ,
Ա՛հ, դառնայի ա՛յն ջինջ հրեշտակ՝
Լուսասպիտակ թեւերուս տակ՝
Պահէի Ձեր փառքն ու պսակ...



Թո՛ղ Պեգասեան սիրուն թռչնակ
Լինէի ես, ա՛հ, շարունակ
Գեղգեղէի գողտրիկ երգեր՝
Ամոքելու Ձեր բիւր վէրքեր...

Թող լինէի գարնան Զեփիւռ՝
Անմահական հաճոյքով բի՛ւր
Շնչէի Ձեր սրտին, ա՛հ, միշտ,
Բացատրելու Ձեր ցաւն ու վի՛շտ,

Թող ըլլայի անթարշամ վարդ,
Բուրումներովն իմ բարդ ի բարդ՝
Խնկէի ես միշտ կաթոգին
Ազգանուէր Ձեր սիրտն, հոգին...

Թող դառնայի հրաբո՛ւն արեւ,
Ու փայլէի միշտ Ձեր վերեւ.
Ճաճանչներովն իմ այն հրավառ
Պահելու Ձեր վեհ անուն վառ։

Արդ, քանի որ չեմ ես քերթող,
Որ հիւսէի Ձեզ մէկ ներբող.
Մնամ ես միշտ Ձեզ համակիր
Ու նուիրող սիրտն համակ իր...

*ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՆՍԱՒԵԱՆ*
*— Աւագ Սարկաւագ —*

*Գատը գիւղ Ֆէնէր Եօլու*
*1913 Յունիս 11*



ՏՊԱՐԱՆԱՊԵՏ

Ռ. ՍԱԳԱԵԱՆ

Երբեմն էր սա՝ կարմիր յոյժ
Զինուորական վիարոյժ
Այսօր մարդ մը տիպար ա՛ն,
Վարէ մէկ մեծ տպարան:

Չունի ո՛չ նա դուլ դադար...
Սնունդն է իր ՏԻՊ. ՈՒ ՏԱՌ
Ունի տասնեակ մը Մամուլ.
Ո՛չ չ'են դառնար օր մ'ամուլ:

Թռնակալին օրով մեծ
Մեծ հրաշք մըր՝ երբ տպեց
Կարմիր գոյնով մր անի,
Պատկերն Ալիշանի..

Քսաներորդ այս դարուն՝
Դէմքերէն մին կարկառուն,
Թիկնեղ պարթեւ գերդ հերոս
Մեր Սագաեան քաջ ինոգոս:



ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱՅԻ ԱՐՁԱՆԸ
Աղեքսանդրիոյ մէջ



ՍԱՐԳԻՍ ՊԷՅ ՊԱԼԵԱՆ
Արքունի ճարտարապետ

## ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

### ՆԵՐԿԱՅ ՀԱՅ ԿՂԵՐԻՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Եթէ ներկայէս քանի մը տասնեակ տարիներ առաջ երթանք ու բաղդատութեան դնենք անցեալ նահապետական դէմքերը մարմնացնող հին Հայ կղերին ու կրօնաւորին խըստակրօն կեանքն ու գործունէութիւնը՝ ներկայ կղերին ապրելակերպին ու կենցաղավարութեան հետ, ինքզինքնիս ահագին անջրպետի մը առջեւ պիտի գտնենք այսօր բնականաբար եւ դժբաղդաբար:

Եկեղեցական պատմութենէն գիտենք արդէն թէ ժամանակին ինչ մաքրակրօն կղերներ ունեցած է Հայ եկեղեցին և ինչ բարերար ազդեցութիւն ունեցած են անոնք իրենց Հայ համայնքին վրայ՝ իրենց լուրջ կեանքով, սրբակեաց վարքովն ու ճգնողական բարքով, կարճ խօսքով, պատկառանքը եղած են անոնք Հայ եկեղեցիին՝ միշտ բարձր բռնելով կղերականութեան անունը և անոր ճակտի սրբութեան դրոշմը և յաջողած են հաւատացեալներու ստուար բազմութիւն մը քաշել տանիլ իրենց ետեւէն, Հայ Եկեղեցւոյ դէմ եղած ահագին հալածանքներու միջոցին իսկ, Արշակունեանց թագաւորութեան կործանումէն մինչև Ռուբինեանց Հարստութեան վերջը, մինչև ԺԸրդ դարու վերջն ալ պիտի կրնամ ըսել:

Անկէ ասդին՝ հայ կղերին ներքին հոգեբանութիւնը ըսկըսած է որոշ գոյներով երեւան գալ և պժգանք ազդել Հայ ժողովրդին՝ խաթարելով անոր միամիտ հաւատքը:

Բացէ՛ք պատմութեան էջերը. պիտի տեսնէք հայ կղերին ու երեցին թերը թէ ի՛նչ եղած է սկիզբէն մինչև մեր օրերը: Ան եղած է դժբաղդաբար, կ'ըսեմ, հակառակ կղերին վեհ պաշտօնին.

Անձնապաշտ.
Եսամոլ.
Ընչաքաղց.
Զօշաքաղ.
Խորամանկ.
Քինախնդիր.
Սնապարծ.
Ծոյլ.
Փառասէր.
Ինքնագով
Նախանձոտ.
Զրպարտիչ.
Դաւաճան.
Մատնիչ.

և դեռ զորն ասեմ և զորն խոստովանիմ:



Եւ այս շնորհներով ու բարեմասնութեամբ փայլող կարգ մը կղերականներ, կոչում ունին, յաճախ, իրենց հոգեպարար քարոզներով հայ ժողովուրդը հրահանգելու և դաստիարակելու, անշուշտ, նկատելով ինքզինքնին մէկ մէկ երկնաւոր զուարթուններ, ունենալով յաճախ աշխարհիկ մարդիկ՝ իրենց խնկարկուներ, որոնք յանուն Հայ ազգին ձեւանալով խըստակրօն ու սրբակեաց՝ իրենց տղմաթաթախ կնճիթը կը խոթեն իրենց խելապատակէն շատ վե՛ր եղող եկեղեցական բարեկարգութեան խնդրոյն մէջ:

Ներկայ Հայ կղերին հոգեբանութեան թափանցելու համար, կարժէ անգամ մը անոր նկարագիրը, նիստն ու կացը, կարճ խօսքով՝ ընդհանուր կենցաղը աչքի առջև ունենալ. որոնց մէջ բնականաբար բացառութիւններ կան: Եւ որոնք մատի վրայ կը հաշուուին:

Հայ կղերին այս հոգեբանութեան միակ պատճառը, մենք կը նկատենք, ընդհանրապէս, ժամանակի ներկայ պահանջումներու հակառակ՝ իր ապօրէն կենցաղավարութիւնը որ մայր է ամէն չարիքներու: Թո՛ղ շատերը յաւակնին. հակառակ Աւետարանի պատուէրին թէ իրենք «Սուրբ» Սրբազան» պէտք է յորջորջուին, կամ երկնաւոր զուարթուններ են. մենք կ'ըսենք ու կը պնդենք թէ սուրբն ու բարին միայն Աստուած է, ինչպէս Աւետարանի մեծ վարդապետն ալ իբր Մարդ-Աստուած յայտարարեց իր աշակերտներուն.— երբ բարի կը յորջորջէին զինքը— թէ բարին միայն Աստուած կրնայ ըլլալ:

Եւ ո՞վ չգիտեր թէ կղերն ալ ժողովուրդին ծոցէն կը ծնի ու իբրև մահկանացու էակ չէ դատապարտուած բնութեան բիւրազան արհաւիրքներուն ու պատահարներուն ենթակայ՝ իր մէն մի քայլափոխին մեղանչելու հակամէտ չէ. քանի որ կղերն ալ իբրև մարդ զգայազիրկ չէ, այլ աւելի զգայո՛ւն իբրև խորհող, մտածող՝ բանական էակ մըն է և անոր սիրտը քարէ կամ պողպատէ շինուած ալ չէ որ չփափաքէ: Ա՛ն՝ որ իբրև մարդ ծնած է ու մարդու պէս գեղեցկին իտէալը իր մէջ չի կրեր, անասունէն ցած է ըստ իս:

Անշուշտ կղերական լուծը վրանին առնողներ միայն կըրնան թափանցած ըլլալ կղերին հոգեբանութեան ներքին խաւերը։ Կղերը՝ զգալով իր լուծին ծանրութիւնը, զոր հեծցուցած են անոր ուսին յետադիմական գաղափարներով տոգորուած միտքեր՝ գիտնալով ու զգալով հանդերձ սակայն անոր անտանելիութիւնը, կ'ուզէ ալ թօթափել այդ բեռը և բնական օրէնքին տրամադրութեան համաձայն ընդգրկել զայն այսօր։ Կղերին հոգեբանութիւնը կը կայանայ հետեւեալ պարագաներու մէջ։ Կղերը վարժուած ըլլալով ամուրիութեան երեսէն թոյլ ու մեղկ մակաբուծական կեանքի մը, կը սիրէ իր ուժերը սպառել և սպաննել ժամերը անգործութեամբ։ Հանրութեան օգտին ծառայելէ աւելի իր անձնական շահերովը զբաղիլ... մուրացկանութեամբ և անխրաւութեամբ դրամ դիզել։ Ամուրի մնալ ուխտած ըլլալով հանդերձ, այլանդակ կեանք մը վարել, և բնական օրէնքներէն ալ չեղիլ անցնիլ շատ անգամ...։

Բաւէն բովանդակ նշանակութեամբ, կեղծիքի մարմնացումներն են անոնք, որոնք շրթունքով ճշմարտութիւն կը քարոզեն։ Այո՛, անոնց համար պիտի կրնանք ըսել. «Զուղտս կլանեն և զմժղուկս քամեն։»։ – Որ ունի ականջս լսելոյ՝ լուիցէ..

ՔԱՐՈՋԻԶ

# ՄԵԾ ՄԱՅՐԻԿԻՆ ԳԱՆԳԱՏԸ

ԲԵՐՈՒՋԻՆ

Ա՜յ վոքկած աղջի՛կ, ի՜նչ կայ փէնճերէն,
Վար իջի՛ր, նայէ՛, չէրի փէնճերէն,
Զեղնէ տէ առնէ տիպը տօղնային,
Նէ՛րս փաշուէ արքըխ. հայխը կը նային...

Բա՛ չեղնէ՞ս տեղէդ, ի՛նչ նստեր ես սուս,
Աս ի՛նչ ծուն էր ֆի էկաւ իմ գլխուս,
Ի՛նչ վոքկած աղջիկ ես եղեր դուն ա՛խ,
Բա՛, նէ՛րս փաշուէ, ա՛ղ պիտ՛ իյնաս ոտխախ...

Տէ՛ս. առտու չեղած՝ եղեր է կէս օր,
Ե՞րբ պտոր վար տաս մութվախը, ընտո՞ր...
Տահա պիտ՛ արբես ճաշ ու չէրչիվէհ,
Տէօր իրիկուն գործ կայ ետեւէն...

Բա՛ տէյէօր ոտնը ի՞նչ կայ փէնճերէն,
Աճապա ո՞վ է գտածդ նորէն...
Զը հասնիս ըլլայ ա՛խ դուն անէրէ՛ս,
Աճապ ո՞վ նորէն գլխէ հաներ ես...։

*
* *

Բա ի՛նչ է կ՛ըսեմ ես ալ Տէր Աստուած,
Կարը մէկ բարաֆ ձգած աս վոքկած
Գիշեր տէյօն յուս, առտուն շափախին,
Այնային դէմէն չըգար ա՛ղ աղին...

Մազերը սանտրած, թէփէն փոնկյան,
Ավունով քսէ դէմքին ալ պօէան...
Աստուծուն օրը տունս է բարեկենդան,
Ա՛լ դուռ դրացին վրաս կը խնդան:

Ի՞նչ ըսեմ, ա՛խ, ան սէպէպ եղողին,
Մարն երբ պառկեցաւ մէջը սեւ հողին.
Մախաղըկս մնաց ինք իր հալվային,
Ես ալ տապկըւիլ մէջը թաւային...

Ի՛նչ ընելս չիյտեմ դարձած շաշկըն հաւ.
— Տանս պէս կինուի իրիկուան փիլաւ —
Ձէնկին չէի քի տընէի դպրոց,
Ձգէ քի ամէն բանը գիտէ գող...

Աչքերը նայէ՛... նետէ չամչըրախ,
Իրեն պէսներըն կը հանէ չըրախ
Ա՜խ, ի՛նչ փօրթալ է, ա՛խ ան ի՛նչ փօրթալ,
Բոլը լեփլեցուն պաստերք, քաղ-փօրթալ:

Ո՞ր մէկը կ'ուզես... աղջի՞կ մի տղան,
Միսիւէն պռնէ մինչեւ մէծ-աղան,
Պիւթիւն ալպիւմին մէջն է անցուցած,
Աճապա ասո՞նք իրեն կուտան հաց...

Տան սուրաթներն ալ պուզի պէս հագուած,
Որին պըյըխը վե՛ր, որը կտրտած...
Ամա կ'ըսեն քի առնիք ալ պիւթիւն,
Բերանին հոտի ռաքի եա՛ թիւթիւն:

Պարէմ բան մ'ըլլան. ի՞նչ է նէ կ'ըսես,
Եա՛ ճէպը ծակ է, եա՛ հոտի նէֆէս.
Եա զիւպպէք մըն է խախուտ, պուտալա,
Հայտէ զօնալըմ կ'ըսեն պու տալա:



Հիմա աս ամէնք թագալիս հանած,
Կ'ըսեն պաշխա նոր գործէ մ'է գտած,
Տա՛տ ուսումնական, ղազէթա գրո՛ղ,
Անունը մոռցայ, ի՛նչ էր աս կռող:

Նէ տէրտէր է ա՛ն, նէ ալ վարդապէտ,
Աչքը բաց բան մ'է կ'ըսեն նոր վարպէտ,
Որ մը անցեր է տուռին առջեւէն,
Աչքն է մնացեր անոր եստեւէն...

Հէյպէտ մէկ մէկու նամակ ալ կուտան,
Ի՞նչ ըսես, աս է հիմակուան մօտան,
Բա վա՛յ իմ մեղքիս... չը խօսիմ վրան,
Մերին օրովը չըկար ասանկ բան.

Ի՛նչ հատտ ունէր քի մէկ աղջիկ զաւակ,
Փէնճիրէն նայէր, եա՛ գրէր նամակ,
Պիւթիւնին հետը օյինի եղէր...
Ո՞ր մարը աճապ առնիք կը կլլէր...

Վախղին մար ըսածը կը կ'ենար վրան,
Էփոցին փասն ալ պահէր տակ դրան,
Զարնէր թէփէին, «Նստէ՛, կ'ըսէր, ա՛նկ...»
Իշտէ մենք օրեր տեսեր ենք ասանկ...

Ամա փոխուած է հիմակ ամէն բան,
Ո՞վ մտիկ կ'ընէ իրեն մար-պապան,
Հատտ ունիս ըսէ չիֆթ մը խօսք վրան,
«Դուն չես խառնուիր ինծի» կը պօռան:

Ախըրպէթ մար ես քա, կ'իմանաս ցաւ,
Ճանկըռութին կայ, տարիքն ալ լեցաւ,
Աչքին չերեւնար թօփա՛լ է, կո՞ւզ է,
Աղջիկ զաւակ է, կարգուիլ կ'ուզէ:

Քեզմէ խեր չիկայ ալ փրկած աղջիկ,
Ըսէ՛ սիրածիդ ա՛լ մեկնել փախչինք,
Վունճուտըս վերնար ժամ առաջ ասդին,
Տէ չը հասնէի ա՛ս չար սատրին։

Իրաւ զոր բան է մեծնել զաւակ,
Մանչ է նէ կ՚ըլլայ գող կամ աւազակ,
Աղջիկը ըսես թափուր մը սա՛նի,
Աստուա՛ծ իմ. աս ի՛նչ օրերու հասանք։

ՍԱՐԿՈՒԱԳ

# ԱՆՏՈՆ ԹԱՐԱԳ

(Իմ հայրենիքի եղանակով.)

ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆԻՆ

Մարդ մը խոշոր, կուզ ու կլոր,
Տակառասիպ ու ղայնափոր.
Գէք ինծ դարձած էր մեծ մերազ.
Ըսին. «Ասն է Անտոն Թարագ»:

«Աչքն ահարկու բերան միշտ զոց.
«Ո՛չ միշտ ունի ան, ոչ մէկ խոց...
«Է՛ն քիչը կայ ինք յիսունինց.
«Սիրտն է, սակայն, սիրոյ հնոց:

«Սա ազգային երեսփոխան.
«Ճիշդ կը կշռէ 100 պատման...
«Բաւական շիք փեսին կաղպար
«Շա՛տ շա՛տ ունի ան գաղափար...



«Երկաթուղւոյ մեծ քօնտիքթօր
«Հայերուն սա կ՚օգնէ բոլոր.
«Նոյնպէս անդամ հայ ակումբին.
Ազգայինձի մը ահագին...:

Բարեւն է իր սիսթեմաթիֆ
Դիտէ խորունկ մաթեմաթիֆ...:
Ծայր աստիճան ֆաղաֆափար...
Տեսութիւնն է բայց՝ անբարբառ:

Ինք հեղինակ տեղափոխման
Լիսէին մեր Կեդրոնական,
Միջավայրէն այնքան աղտոտ.
Մեռելներու խուլ տուաւ հո՛տ

Դասըզիւղի այս թաղական՝
Ունի գործեր խիստ բաւական.
Մտամոլոր կ՚երթայ հեռուն.
Լոկ օգնելու օտարներուն:

Բաղձանք մ՚ունի մարդն այս բանգէ՛տ
Դառնալ աղուոր մէկ փարդասպէ՛տ
Որ համբուրել տայ ձեռք սիրուն
Իրեն սիրտին սիրածներուն...:

Հայտար Փաշա.

ՔՕՆՏԻՔԹՕՐ





Pouvoir faire respecter le droit public si possible dans les limites d'une véritable constitution en y joignant l'assistance gouvernementale facilitant les voies communicatives qui aideront beaucoup à la fleuraison du commerce et de l'industrie, ainsi que sauvegarder les revenus de l'Etat en y introduisant le mécanisme organique de l'Administration moderne. voilà comment pouvant faire face à nos voisins occidentaux releverons de l'abîme où se trouve notre malheureuse Patrie.

H. T. MANAVIAN



# ՀՐԱՆՏ Տ. ՄԱՆԱՎԵԱՆ

## ՆԱԽԿԻՆ ԹԱՂԱՊԵՏԱԿԱՆ ՏՆՕՐԷՆ

*ՄԱՔՐԻԳԻՒՂԻ*

*Որդի՝ հայկաբանութեան ուսուցիչ հանգուցեալ Տիգրան Մանավեանի, ծնած է Կ. Պոլիս, Եէնի գաբու 1882ին ։*

*Հ. Մանավեան, իր նախնական ուսումն առած է Խասգիւղի Ներսէսեան վարժարանին մէջ ։ 1825ի Խասգիւղի ահաւոր ջարդէն իր մօր հետ կը փախի Ալեքսանդրիա՝ մատաղ հասակի մէջ, մէկ երկու տարի տեղւոյն Բօղոսեան վարժարանը յաճախելէ վերջ 1897ին կը դրկուի Զուիցերիա և կը յանձնուի Զուիցերիացի հայասէր Օրիորդ Կապրիէլ Նավիլի հսկողութեան,. և կը յաճախէ նախապէս Զուիցերիոյ մէջ բացուած Պէրպէրեան վարժարանը, երբ Պոլսոյ դէպքերուն բերմունքով, հոն փոխադրուած էր յիշեալ վարժարանը ։ Ապա կը յաճախէ բարձրագոյն Ակադեմիան, ուր գաղ. մատենագրութեան հետ կ'ուսանի ճարտարապետութեան արուեստը ։*

*Հ. Մանավեան փայլուն վկայականներով պսակուած՝ կը վերադառնայ Եգիպտոս՝ իր մայրիկին քով. և քաղաքապետութեան* assainissement*ի* techniuq*ը ճիւղին պաշտօնեայ կը կարգուի ։ Կը շինէ* greco-romain *թանգարանը,* 1903*ին ։*

*Երիտասարդ ճարտարագէտը ապա կը մտնէ Գահիրէի մէջ* Fabricius Pacha*ի հովանաւորութեան տակ Խտիվական պալատներու շինութեամբ կ'զբաղի ։ 1905ին Ալեքսանդրիոյ հանրօգուտ շինութեանց նախարարութեան մասնաճիւղի ճարճարագէտ կը նշանակուի ։*

*Ազատութեան սկիզբները Հրանդ էֆ. Մանավեան իր գործնական փորձառութիւններով կը վերադառնայ իր ծնն-*

դաւայրը Պոլիս ու առաջին առթիւ կը մտնէ Տէֆքէրհանէ, ուր Սէնէտաքի և Մահլիւլաքի ճարտարագէտ կանուանի և ուր՝ իր խորհուրդով առաջին անգամ ըլլալով կը հիմնուի Գիտական Խորհուրդը :

Առաջին առթիւ Պոլսոյ մէջ շինած է Եյուպ Սուլթանի հոյակապ մզկիթի մէջ հանգչող Կաղի Էթհեմ փաշայի գեղակերտ դամբարանը, Իսլամական ճաշակին վրայ անզգալապէս աւելցնելով եւրոպական ճարտարարուեստը :

1912ին Մանավեան Ելեւմտական Նախարարութեան կողմէ կարգուած քննիչ մասնախումբի անդամի հանգամանքով կուղեւորի Լափսաքի :

Անկէ վերադարձին էր որ Հրանդ Մանավեան, 1913ին, քաղաքապետութեան նոր կազմակերպութեան միջոցին Կ. Պոլսոյ մէջ Մաքրի գիւղի առաջին հայ Քաղաքապետական Տնօրէն անուանուեցաւ :

# ԹԱՂԱՊԵՏԱԿԱՆ

## ԳՈՐԾԵՐ ՊԱՏՈՒԱԿԱՆ

Ո՛վ Ճեմիլ փաշա. Ազնի՛ւ, մեծաշո՛ւք,
Գիտեմ. մեծ գործի վրայ էք Արտմաշուք,
Յաճախ զոհելով ձեր հանգիստն ու քուն՝
Անդուլ կաշխատիք, տքնիք օրն ի բուն,
Մոռնալով պահ մ'իսկ, այնքան գերազանձ
Ձեր բոլոր վայելքն, ընտանիքն ու անձ.
Մեծ *օբէռաբէօռ* մ'էք ճարտար բէյէս,
Բայց այսօր Պոլսոյ դո՛ւք *ֆաղաֆայէս*.



Ո՛չ մէկ պաշտօնի չունիք աչք նախանձ.
Ո՛չ ալ կ'ուզէք դուք, դիզել ոսկի գանձ.
Քանի որ արդէն կապած էք ձեր բեռ,
Երբ *ազատութիւն* չ'էր հռչակուած դեռ :
Դուք իբր *ուղղամիտ*, *խիստ վարպետ* ու *փորձ*.
Կըսեմ *մի՛շտ Աստուած պահէ ձեզ անփորձ*.
Ո՛չ, չէ՛ք զլանար թափել ջանք բոլոր,
Բարեզարդելու Պոլիսն օրէ օր,
Լսած էինք ձեր անուն մե՛ ազործ.
Տեսանք նաեւ ձեր անդրանիկ *մէկ գործ*.
Ըսին թէ կարգ մը *անհատակ էջեր*
Մէկ օրուան մէջը, աքսոր էք քշեր.
Իրաւ չէր տեսած Պոլիս ասանկ բան.
Պէտք է որ վանէք մարդիկն ալ անբան,
Որ գործ մը տեսնել չեն գիտեր երբեք –
Պարսիկ իշապան թէեւ արտաքեկ,
Թէեւ շատերն իսկ ձեզ անէծք կարդան
Բայց ազատ շրջին *Ջինկանէն*, վարդա՛ն,
Շատ աղէկ ըրիք. վերցուցիք էշեր...
Ի՛նչ էր քաշածնիս ա՛ն ցորեկ, գիշեր...
Արդ, իշուն գործը՝ տեսնեն կովն ու սայլ,
Բովերնուն կանգնինք ա՛լ միշտ անայլայլ...
*Օթօմօպիլն* ալ՝ բարիք մ'երկնաւոր՝,
Երբեմն չէ թէ հոգ գործէ ոճիր նոր...
Վ.նաս չունի ա՛ն, բաւ է մինակ որ
Դուք ջանաք շտկել Պոլիսն օրէ օր,
Ինչպէս մէկ գործդ ալ տեսանք անցեալ օր.
Ի՛նչ *Մեծ գաղափար*, իրա՛ւ փառաւոր,

Մսավաճառն ու այտոտ *ճիէրճին*
*Լաքէռնաճիի* ձեւով կը շրջին . .
Մինչ նոր օրէնքով, անշուշտ , տարբեր հարց ,
*Տօնտուրմաճին* ալ շրջի ձողաբարձ .
Դու որ պաշտօնիդ սրտով կը փարիս՛ ,
Լսեցի , Պոլիս կընես կոր Բարիզ . . . ;
Այդպէս տուներուն լեցուած կոյուղին
Ըսին ծով կերպայ զտած իր ուղղին . . .
Ամէն մէկ քայլիդ աւելածու կայ .
Զուիցերիայի բո՛ւն , *Աշաֆրանպո՛յ* .
Աստուծոյ համար , մարդիկ եռանդո՛ւն ,
Ձիերու աղբեր կաւլեն օրն ի բո՛ւն ,
Ու ամպանման կ'ելնէ վե՛ր փոշին . . .
Թէեւ չերթար ան նոյն իսկ ձեր *խոշին* . . .
Ճանապարհներն ալ ջրելու համար
Այո՞ գտեր էք ուրիշ մէկ նոր հնար . . .
*Օթօմօպիլներ* բերերէք շըռան . . .
Որ ջրէ մինչեւ մայթերուն իսկ վրան .
Բայց կը գանգատին հիմա կին մարդիկ
Որոնց իսկ ջրուին բանդալօն , վարտիկ . . .
Ու գիշերները ա՛լ ամէն փողոց ,
Կարծես հրդեհի լոյսերուն մէջ հոծ .
Անշո՛ւշտ . . . փողոցներ պէտք չէ խաւարին .
— Հոգ չէ թէ Խասգիւղ մէջն է խաւարին .
Իր փողոցներն ա՛լ անկանոն , անկա՛րգ . . .
— *Վիւքէլա* չիկայ իրա՛ւ նստող կառք . . .
Կարծեմ թէ Պոլսոյ մաս չը կազմեր ա՛ն —
Թէեւ տուրքերը գանձուին լման . . .



Ձեր տեղն ըլլայի , ես քաղաքապետ
Միջոց մ'ալ ասոր կը խորհէի գէտ . . .
Խասգիւղցի կոչուած բո՛ւն աղքատ մարդէն ,
Որ *կողոպտուած* , *փճացած ջարդէն*՝
Պետութեան իսկ որ ունի *տո՛ւրք տալիք*
Չէի պահանջեր *մանղըր, մէթալիք* .
Ամբողջ Խասգիւղը ձգէի անոնց՝
Որ առանց ծախսի շինեն գիւղ , փողոց . . .
*Ուրիշին քանդածն* անոնք թո՛ղ շինեն ,
Եւ այսպէս Խասգիւղ գէթ կը պահուի շէ՛ն . . .
*Պէլէտիէին* ա՛հա մեծ բարիք ·
Ա՛լ *Իսթիֆրազի* վրայ մի՛ բարբառիք . . .

*
* *

Իսկ *մեծ պարտքերը* փակելու համար ,
Կուզամ ընելու արդ խոնարհաբար
Ձեր Վսեմութեան մի նոր առաջարկ ,
Որ ձեր իսկ պիտի բարձրացնէ վարկ . . .
Որով՝ արդիւնքն ալ Ձեր *էմանէթին*՝
Ա՛լ պիտի անցնի աշխարհքէն անդի՛ն ,
Ո՛վ Վսեմաշուք , Ճեմիլ փաշա Դո՛ւք ,
Օրէնք մը դրէք նախ երկրին յատուկ ,
Օրէնք մը ազդու , տուգանք մ'ահագին՝
Նախ , ամէն անոնց որ կ'ապրին անկին ,
Առէ՛ք մեծ տուգանք աղուոր կիներէն
Եւ անոնցմէ որ զանոնք կը սիրեն . . .
Նոյնպէս տուգանքներ մեծ մեծ , ահագին
Ամէն անոնցմէ որոնք բազմակին .
Առէք մեծ տուգանք պնող կիներէն ,
Որ արդուզարդով տուներ կը մարեն .

Տուգանք, միշտ տուգանք առէք միշտ կրկին,
Երբ որ Մայրապետ ըլլալ ուզէ կին՝
Նոյնպէս անոնցմէ որ անգործ, անպէտ՝
Վանքի մէջ փակուին կըլլան Մայրապետ։
Եւ կամ տգեղ են, ունին խոշոր քիթ,
Որով կը կոտրեն ամէն օր հաւկիթ.
Չը մոռնաք այո՛ առնել մեծ տուգանք
Որոնք տունի տեղ կը շինեն լոկ Վանք,
Կամ դպրոցի տեղ բանան խաղատուն,
Ուր կը սնանկանայ միայն մեծատուն.
Տուգանք առէք միշտ դուք այն կիներէն,
Որոնք լոկ աղջիկ զաւակ կը բերեն...
Տուգանք առէք դուք, այո՛, մեծ տուգանք,
Որոնց չափազանց մեծ է գլխին գանկ...
Տուգանք, օ՛ն տուգանք խիստ դրէք այն մարդոց՝
Որոնք երկերես, բնոյթնին ճիշտ օ՛ձ...։
Տուգա՛նք, ա՛լ տուգանք առէք դուք դիւրաւ
Երբ մարդ կեանքին մէջ գործէ անիրաւ...
Տուգանք առէք դուք մինչ վերջ լրջօրէն՝
Հայը թալանող, ջարդող Քիւրտերէն,
Տուգանք առէք մեծ, բայց մի ձգէք ո՛ւշ
Այն իսկ մարդերէն որ խոստմնադրուժ...
Այսպէս միշտ տուգանք առէք օ՛ն դուք միշտ
Անհոգ անձերէն, որոնք չունին վիշտ.
Տուգանք առէք դուք շարունակաբար,
Որ խիղճ, գութ ծախէ իր շահուն համար,
Եւ այսպէս ահա մինչեւ վերջը դուք,
Տուգանք գանձեցէք օրէնքով մ'յատուկ,
Եւ պիտի տեսնէք փաշա դուք իսկ թէ՛
Պոլսոյ փողոցներն շինուին ոսկիէ...։

Խասգիւղ ՇԱՆԹԻԿ



# ՏԻՊԱՐ ՄԱՅՐ

## Քրիստինէ Մայրապետ Փափազեան

ԱՆԴՐԻԱՆՈՒՊՈԼՍԵՑԻ

ՎԵՐԱՀՍԿԻՉ՝

ԳԱԼՖԱՅԵԱՆ ԱԶԳ. ՈՐԲԱՆՈՑԻ

ԽԱՍԳԻՒՂԻ

Ծն. 1853 Օգոս. 15

*Աշակերտած Հռիփսիմեան Վարժարանի. Մանկական հասակէն կուսութեան նուիրուած. 1890 Ազգ. Հիւանդանոցի մէջ պաշտօնավարած. 1902 Սեպտ. 12ին, Օրմանեան Սրբազանի պատրիարքութեան օրով, մասնաւոր կոնդակաւ Գալֆայեան Որբանոցի վերահսկողութեան պաշտօնին կոչուած է զոր կը շարունակէ ցարդ: 190[illegible]ին նուիրահաւաքութեան համար այցելած է է Երուսաղէմ՝ ուր կը գտնուէր մեծ վտարանդին Իզմիրլեան: 1910 դեկտ. 29ին այցելած է Աղեքսանդրիա եւ Գահիրէ եւ Բարթող Փաշայէ նուէր ստացած է ադամանդազարդ խաչ մը եւ ժամացոյց մը՝ Տիկին Երանուհի Բարդողէ: 1913ին ալ Որբանոցի Խնամակալութեան կողմէ ստացած է ի վարձ իր բարւոք եւ անխոնջ պաշտօնավարութեան՝ ոսկի խաչ մը:*

Որ կուսութիւն ուխտեցիր,
Մանկութենէդ անցանցիր.
Նուիրելով սիրտդ, հոգի՛ն,
Անտէր որբին ու հիքին...։

Նուիրելով սիրտդ, հոգի՛ն
Որբուկներուդ կաթոգին.
Կըսեն ոմանք «Ահա նա՛...
«Որ կարժէ քիւր քահանայ։»

Մանկութենէդ անձանձիր,
Խնամես որբեր ցան ու ցիր՝
Պարուրուած մէջ սեւերուն,
Աչքդ Երկինք սեւեռուն։

Անտէր որբին ու հիքին,
Սրբես արցունք դու կրկի՛ն.
Քիրտ ու ջանքերդ ա՛տ արագ,
Կարժեն հազար պատարագ։



# ՏԻԳՐԱՆ ՄԱՆԱՎԵԱՆ

## ՈՐ ՔԱՋ ՀԱՅԿԱԲԱՆ

### ՊՈԼՍԵՑԻ

(Ծնած է Բերա 1841ին եւ մեռած է 1888 դեկ. 17ին եւ ամբոբուած է մարմինը խասգիւղի խնկաբոյր բարձունքը։)

Է՛ր սա՛ գրագէտ, թատերագիր,
Այր հարտասան Անուանակիր.
Մինչ եռանդուն խիստ քննադատ՝
Լեզուով, գրչով իր անընդհատ։

Հայ ուսուցիչ՝ միշտ անուամբ ողջ,
Կրթեց սերունդ մը հայ ամբողջ,
Ջամբելով կաթն ուսման անգին,
Հուսկ յետին շունչն իր կարճ կեանքին։

Իր գործերն են սա՛ *«Գայլ Վահան»*,
— Մինչ սպառած այսօր վա՛հ ան. —
«Մամիկոնեան Վարդան» կարմիր,
*«Պատուհանին մուրհակն»* թարմ իր։

Բայց ամենուն այս փոխադարձ,
Ի՞նչ ստացաւ ազգէն սա՛ վարձ.
Լո՛կ, հալածա՛նք, տառապանք մի՛շտ,
Ու զգեցաւ Սուգ, թաղիծ, վի՛շտ...,

Զգեց ազգին վե՛ց մանչ զաւակ...
Մին ասոնցմէ որ Սարկաւագ՝.
Տարեցոյցով կուգայ իր նո՛ր,
Լրացնել գործն իր բուն հօր։

---

*Մանավեանի կողակիցն է՝ այրի Տիկին Աննա Մանավեան Ալեքսանդրիա, իսկ զաւակները են՝ Միհրճան, Արամ.-մեռած, Յարութիւն Սարկաւագ, Վահրամ-նկարիչ, Հրանդ եւ Մկրտիչ։*

# ԱՌ ԿԱՌԱՎԱՐՆ

*Նշմարեցի՞ր արդեօք կառս եւ անպատում փառ,*
*Որ ճռնչիւն, դոփիւնք շփն. ո՛հ, անդադար,*
*Զի՞ հեռաչափերս, զի՛ չճնաղ այս կառք զարմանալիք.*
*Որ գյուսոյ քերէ ցնցեան ու սիրոյ զկնիք,*
*Անիւքն, կոնքն, արռուակն, գոգն ու սանիք.*
*Իւրաքանչիւր, անհաս խորհուրդ, անճառ գաղտնիք,*
*Ընդ որս ո՛չ ժամանեցին իսկ զուարթունք.*
*Որոց եւ են զենայից խորհն ուսմունք,*
*Լծեալ եւ միշտ յերկոտասան երիվարաց՝*
*Սաղաւարտակ վարգին, սուրան արագընթաց,*
*Մին ձառաղեմ, մին հանդարտիկ, ոմն ուրախ,*
*Ոմն խրոխտ, միւսն խիզախ. այլք խստերախ։*
*Իւրաքանչիւր քերէ յանձին միշտ անվրար,*
*Ըստ անյեղլի կամաց էին զիւրն նպար,*
*Յանկ դեմ եղեալ վարեն զկառն ընդ հուր ընդ բոց.*
*Ընդ ծործորս, ընդ լերինս միշտ հողմակոծ.*
*Ընդ քուրասան, մրրկայոյզ ընդ փոթորիկ.*
*Ընդ ապառս, ընդ դաշս, ընդ ծով ալեծփիկ.*
*Ի փչալից յաւիտենից այս համանոս,*
*Ձկայ առեալ ո՛չ զասպարէզ իւր մահանոս,*

Մերթ տայ ճախր ընդ հողմունս եւ ընդ ամպրոպ,
Մերթ ընդ փոթորիկս մինչ շրինդ յառնել ամպոյ`
Երբեմն օդի, մերթ սայթաքի ընդ զառիվայր.
Գիշեր եւ տիւ դիմէ ընդ հարթ ընդ առապար,
Սրանայ քան զթեւս արծւոյ արաթռիչ.
Շուրջանակի աղաղակ, կոծ, լաց, ողբ եւ ճիչ,
Յո՞ արարշաւ այսպէս կամ ո՞ւր տայցէ նա խոյս,
Ո՛չ հայեցեալ, ո՛չ մի վայրիկ ի թիկունս կոյս.
Իցէ՞ կայան իւր թէ երթայ զերդ տարագիր.
Ո՛վ, ո՛վ կարէր կարդալ զնորին ճակատագիր.
Կառավարն սանձ ի ձեռին եւ խարազան`
Զի՞նչ առնել է. ո՛վ գիտէ կայ ո՞հ ի վարան,
Ժպտուն, խոժոռ, դժխեմ բաղդին մի՞շտ խաղալիկ,
Ո՛չ, չիք հրաման անդրէն դառնալ յետս խաղաղիկ.
Պարտ է չկատել ըստ խիստ հարկին բնութեան.
Այս է յատուկ նկարագիր իւր կամ սահման,
Ձեռն անտես հանգրուանէ հանգրուան,
Յական քթիթ զամենի փոխէ զձեւան,
Մինչեւ կառքն խորտակեսցին ընդ այն ուղին
Զոր սահմանեաց անդարձ վճիռ Գերագունին:
Բիւր երանի՛ Կառավարին վարժ կամ հանճարակ,
Որ ուշ ի կուրծս անձկեալ զիւր խակ վե՛հ հպատակ,
Որ զանձ վարէ ըստ օրինաց անագիւտ.
Զի նա անշուշտ ի կորստենէ փրկի անգոյտ:

ՏԻԳՐԱՆ ՄԱՆՍԱՎԵԱՆ

# ՍԱԳԱԵԱՆ ՏՊԱՐԱՆ

Կուզէ՞ք տառերով լեզուն Տպարան`
Սագաեան կոչուած անձն է տիպար ա՛ն.
Լեզուներու սա՛ ունի յորդ պաշար,
Նաեւ գիրերու տեսակ շար ի շար.
Տառերն հո՛ն` ընտիր զննէք Հայերէն
Տպարանին մէջ նոր տեսակներէն,
Նոյնպէս Թրքերէն տառեր նորանոր,
Ծաղիկ ու զծեր Առնուվօ աղուոր,
Իսկ շիք, նորաձեւ տառով Գաղղիերէն,
Բուն պանքաներու գործեր կը շինեն.
Ետեւէն կուգայ Յունարէն լեզուն.
Նոր բերել տուաւ անտուկով լեզուն.
Հապա լեզուն ա՛ն կաքնավանառին,
Որուն ձեռքէն նոր Էտիրնէն առին:
Լեզուն ալ տպէ Ռուսին կոչուած Չար,
Ասանկ Տպարան մ'արդեօք խնագա՞ր.
Միայն առնէք չէն, ուրիշներ ալ կա՛ն.
Սրպին, Խռվաթին կարճ խօսքով Պալգան:
Ինչպէս նաեւ այն լեզուն բուն Գերման.
Որուն բառերը մէկ մէկ կանգուն կան.
Մոռցանք իրաւ սա՛ քիպար Անգլերէն,
Զոր մարդիկ քթեն խօսիլ կը սիրեն.
Սենիօռ Իսպանին լեզուն չմոռնանք,
Որուն գիրերուն մեր քովն է բուն հանք.
Լեզուն ալ շարէ հրեայ իսկ ազգին,
Սագաեան կոչուած Տպարանն անգին.
Եթէ կ'ուզէք իսկ, ըսեմ շրջօրէն
Տպէ Արաբերէն իսկ Ճաբօներէն.
Իսկ դուք որ կարծէք խիստ սիրուն դաշնակ
Տպագիր նօթա ի՛սկ հո՛ս պիտ գտնաք:
Յաճախորդք անշուշտ պիտի գան նային.
Տպուի լեզուն ալ Ադամ Եւային...:



# ԱՆՄԱՀ

ՏԻԳՐԱՆ ԵՒԼՔԷՆՃԵԱՆ

ՊՈԼՍԵՑԻ

ՀԱՅԵՐԷՆԱԳԷՏ ԼԵԶՈՒԱԳԷՏ

*Գանկ մը ցեղուն. խոհուն, շուրջ,*
*Սփռեց արիւն, խանդ իր շուրջ.*
*Անցաւ ցեղունին հայերէն՝*
*Վիեննայի Հայրերէն . . . :*

*Որքան ինքն էր Ոսկերիչ՝*
*Շարժեց ոսկեդարու գրիչ .*
*Ոսկեբաներն Ազգային.*
*Անցուց մէջէն Բուրային . . . :*

*Սա՛ ցոյց տուաւ արդարեւ,*
*Թէ հայ լեզուին արդ արեւ,*
*Լոկ չը ծագիր Վենետիկ .*
*Այլ Պոլիս ինկ՝ մեր մօտիկ:*

*Ինքն հանճարեղ մեծ գրագէտ՝*
*Աստեան դրաւ մէկ կրակեղ*
*«Կեղծն ու կեղծիք» լուաց բո՛ւն,*
*«Սաղիմական Զոյգեր» ուն:*

## ՍԱՐԳԻՍ ԷՍՄԷՐԵԱՆ



*Փաստաբան, յօդուածագիր Բիւզանդիոնի, Ազգային երեսփոխան, երբեմն Իւսկիւտարի Ս. Խաչ եկեղեցիին և դպրոցին թաղական և հոգաբարձու: Ծնած է Իւսկիւտար Ս. Խաչ, 1855 Հոկ. 9ին: Աշակերտած է Ս. Խաչ վարժարանի ու ճեմարանին, առանց լրացուցած ըլլալու հոն իր նախնական ուսումը՝ իր անոխական հասակէն ինքնահրաւէր հրաժարած է անկէ քիչ մը անառակ ըլլալուն պատճառաւ եւ ապա ինքնազարգացմամբ յառաջած է: Երբ տակաւին Հուգուգի վարժարաններ գոյութիւն չունէր մեր Երկրին մէջ բարձրագոյն դրան մէջ իրաւաբանական դասարան մը հաստատուած էր, ուր կը մանէ Էսմէրեան և 2-3 տարի շարունակելով փաստաբանական մեծ հմտութիւն ձեռք ձգած՝ կը շարունակէ իր պաշտօնը... մինչեւ այսօր: Թխադէմ, չղուտ, ոսկրուտ, երկարահասակ ալեխառն, սրածայր մօրուքով, յամառ այլ ուղղամիտ, արդարասէր ճշմարտաբան ու ազատախօս պատուական անձնաւորութիւն մը, որուն նմաններուն շատ քիչ անգամ մարդ պատեհութիւնը կ'ունենայ հանդիպելու մեր Ազգային շրջանակին մէջ: Մանաւանդ և երբ մարդ պահ մը առիթը կունենայ տանկ ե-*

ղական Թիւերու առջեւ դառնալու, կը խորհի ինքնիրեն թէ՝ հոգիով, սրտով, մտքով, լեզուով ու գործքով մեծ մարդ մը որչափ կը տարբերի կարգ մը մեծ կարծուած այլ կեղծ մարդիկներէն որոնք միայն ուրիշներու երեւնալու, անուն համբաւ հանելու համար ամեն ջանք ու միջոց չեն զլանար :

Էմիքեան Սարգիս չէ եղած երբէք այն կարգ մը մնապարծ ու մնափառ եւ ունայնութիւններով սնքացող անձերէն :

Սա՝ իբրեւ զօրաւոր կամքի ու նկարագրի տէր մէկը, բուկիզբէն մինչեւ հիմա մարմնացուցած է իր պատկառոտ անձին վրայ լուռ ու մունջ անխոնջ աշխատողի, ազգային գործիչի, ուղղամիտ հրապարակագրի, եւ ճշմարիտ ազգասէրի բարեմասնութիւնները :

Սա է կտակակատարը անմահ Ելքէնճեանի, որուն «Զոյգդիւցազունք Երուսաղէմի · — կեղծն ու կեղծիքը սքեմի տակ» խորագրով գրած յօդուածները ժամանակին՝ Երուսաղէմի վանական տարեգրութեանց մէջ ողբացեալ մեծ գրագէտին անաչառ ու անկաշառ անունը պիտի անմահացնեն :

Սա՝ Ղեւոնդ Վրդ. Մաքսուտեանի ծանօթ հաշիւներուն փութով կարգադրութեան իբրպէս նախանձախնդիր անձնաւորութիւն, Արդարութեան դատին իբրեւ պաշտպան՝ յաճախ փայլած է ու կը փայլի Բիւզանդիոնի մէջ, իր անձին պէս ջղուտ յօդուածներով :

Ինք Մաքսուտեան Ղեւոնդի մանուածապատ հաշիւներուն իբրեւ փաստաբանական հաշուեքննիչ յանձնախումբի անդամ, իբրեւ կտակակատար Ելքէնճեանի, եւ իբրեւ Ազգ. Երեսփոխան՝ յաւիտենական Բողոքարկուն է ու պիտի մնայ Վարպետ Ելեւմտագէտին դէմ. ցորչափ այս վերջինը չկարողանայ Երուսաղէմի վանքէն խուսացուցած 11 հազար ոսկիներու բեռան տակէն ելնել :



ՄԱԳՐԱՓԱՅԼ ԿՈՅՍ ՍԱՐԿԱՒԱԳՈՒՀԻ

ՀՌԻՓՍԻՄԷ ԹԱԶԻՐԵԱՆՑ

Միանձնուհի Ս. Ստեփաննոս Անապատի Տփխիսու որ 1894ին այցելեց Նուիրական Քաղաքն Երուսաղէմ, Փրկչական Սրբավայրերուն ուխտ եւ երկրպագութիւն մատուցանելու :

## ՀԱՅ ԿՈՒՍԱՍՏԱՆ(*)

ԿԱՄ

## ՍԱՐԿԱՒԱԳՈՒՀԻՆԵՐՈՒ ՎԱՆՔԸ

## Ս. ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ԱՆԱՊԱՏ

## ՏՓԽԻՍ

*Մելիք Աղաբէկ Պէհպութեանց 1727ին հիմնած է այս վանքը, Տփխիսու Կուրի գետափին վրայ, տեսած ու սքանչացած ըլլալով ժամանակին Նոր Ջուղայի Ս. Կատարինէի կուսաստանը։*

*Նախապէս այս կուսաստանի նորոգ կազմակերպութեան մէջ Վանամայր եղած է Ազնուատոհմ Կոյս Գայիանէ Պէհպութեանց, անապատի հիմնադիր բարերարի դուստրը՝ որ վախճանած է 1860 թուականներուն, շուրջ 80 տարիներ առաջ։ Կը պատմուի որ, Ազնուազարմ Կոյս Գայիանէ, երբ իր չքնաղ գեղեցկութեան համար օտար բռնաւորներու կողմէ ընդդիմութեան բախելով՝ իր կուսութիւնը բռնաբարուիլ ուզուած է, սա իր նժոյգը մտրակելով խուսափած է ձեռքերնուն։*

*) «Սարկաւագի տարեցոյցը» մեծ հաճոյքով կը յիշատակէ նոս յաւէտ ողբացեալ բարեկամին հռչակաւոր կենսագիր եւ քրոնիկագիր Աբրահամ Այվազեան անունը եւ յարգանք կը տածէ անոր գրչին, որու նկարագրած ընդարձակ «Հայ կուսաստանէն» օգտուելով՝ ներկայս կը ներկայացնէ իր ընթերցողներուն — Իսկ լուսանկարը ծեար ձգուած է Երուսաղէմացի Օրդ. Բէմպէ Միքայէլեանէ, որուն նուիրած է Սարկաւագուհին իր կենդանագիրը իբր յաւէրժական յիշատակ։



*Երկրորդ Վանամայրն եղած է Եփիմէ Պէհպութեանց, իսկ այժմու Մայրապետն է Կոյս Կատարինէ որ Աւգութեանց Երկայնաբազուկ Յովսէփ Կաթողիկոսի քեռորդին է։*

*Վանքը 'ի սկզբան կատարեալ ուխտավայրի մը հանգամանքն առած է։ Սակայն այժմ այդ սովորութիւնը արգիլուած ըլլալով, միայն ինքնութիւննին ծանօթ անձնաւորութիւններ եթէ փափաք յայտնեն այցելել կուսաստան՝ Տեղւոյն Առաջնորդին հրամանաւ կարելի է միայն։*

*Ներկայիս մէջ, հոս կընդունուին, չափահաս կոյս աղջիկներ, որոնք իրենց անձը կուսութեան նուիրած միջոցին, իրենց հարսնութեան համար տալիկ օժիտ, հարստութիւն ամէն ինչ միասեղ վանք կը տանին. որով մեծահարուստ վանքերէն մին դարձած է ա՛ն այսօր։*

*Ասոնք ունին իրենց մասնաւոր ժամ օրհնող, Պատարագիչ և Խոստովանահայր Քահանան, զոր Միանձնուհիք իրենք կ'ընտրեն, ու Տեղական առաջնորդը կը հաստատէ զայն։*

*Մինչ մեր հայ օրիորդները ամէն առաւօտ իրենց արդուզարդերով կ'զբաղին. մեր մենաստանի ինքնամուէր կոյս Սարկաւագուհիները աղօթելու կը պատրաստուին, ապա եկեղեցի կիջնեն՝ կարգաւ քաղցրանուագ Սաղմոսերգելու և ժամերգութիւններու մասնակցելու, որմէ վերջ մայրապետը իւրաքանչիւրին զատ զատ գործեր կը հայթայթէ զորս կատարել պարտաւոր են իրենք։ Եկեղեցիէն վերջ սեղանատուն կերթան, ուր սեղանը մայրապետը կօրհնէ, մինչ կոյսերէն մին իր կարգին կը կարդայ Վարք սրբոցը։*

*Սարկաւագուհիներուն պարտականութիւնն է ընդհանրապէս ննջեցեալներու տուները այցելել. սգաւորները մխիթարել, որով մայրապետին հրամանաւ երկու երեք կոյսեր ննջեցեալին վրայ կողբերգեն, սգաւոր կիները եկեղեցի կը հրաւիրեն, հանգստեան շարականներ կը կարդան ու սաղմոս կը քաղեն։*

*Սոյն խստակրօն կոյսերուն վանական օրէնքն ու կանօնն ալ այնքան խիստ է որ Սարկաւագուհի մը առանց Վանամօր գիտութեան՝ ոչ ոքի հետ կրնայ թղթակցիլ. Նոյն իսկ եթէ*

եղած ըլլայ ան իր ծնողքը։ Ուստի Վանամօր բացարձակ իրաւունքն է բոլոր զրկուած ու ստացած նամակները բանալ ու կարդալ ու ասկէ վերջը յանձնել իր հասցէներուն։

Սկիզբները այս կոյսերու թիւը խիստ սահմանափակ է եղած, մինչդեռ ներկայիս մէջ տասնըութի բարձրացած է։

Այժմ սոյն Ս. Ստեփաննոս Անապատ կոչուած կուսաստանին մէջ գտնուող տասնըութ Սարկաւագուհիներուն մէջ նշանակելի են։

1. Կոյս Եպրոսինէ Սարկաւագուհի Աբամէլէքեանց, որ ձեռնադրուած է Սարգիս Արք. Եպսկ. Ջալալեանէն.
2. Կոյս Հռիփսիմէ Սարկաւագուհի Թահիրեանց.
3. Կոյս Աննա Սարկաւագուհի Դօձա-Մինասեանց.
4. Կոյս Սօֆիա Սարկաւագուհի Ամատունի.
5. Կոյս Գայիանէ Սարկաւագուհի Նախնազարեանց.
6. Կոյս Հուստիանէ Սարկաւագուհի Աբէլեան.
7. Կոյս Մանեայ Սարկաւագուհի Մէլիքեանց.
8. Կոյս Շուշան Սարկաւագուհի Խարազեանց.
9. Կոյս Իսկուհի Սարկաւագուհի Էնֆիէճեան.
10. Կոյս Երմոնեա Պէրուզեանց կամ Գարութճեանց։

Ասոնք ալ ձեռնադրուած են Սեդրակեան Արիստակէս Սրբազանէ, ճիշդ 32 տարի առաջ։ Սարկաւագուհիներու քով կը գտնուին վանքին մէջ, ծաղկահասակ Կոյս դպրուհիներ, որոնք անշուշտ Սարկաւագուհի ձեռնադրուած ըլլալու են յարդ, հետեւեալներն են։

Կոյս Կատարինէ Կուլուլեան,
» Հռիփսիմէ Դօնեանց,
» Գայեանէ Ալի Խանեան,
» Եւփիմէ Վարդանեան,
» Նունէ Յովհաննեան,
» Մարիամ Տօլմազեան կամ Թօլմասեան,

Ասոնց վերջինը Կոյս Հռիփսիմէ Թահիրեանցի փոքր կոյսն է (*)

(*) Բոլոր Սարկաւագուհիներն ալ իրենց փոքր կոյսերը կամ աշակերտուհիները ունին:



Կուսաստանի ընդհանուր սպասաւորուհին՝ աւելի ճիշդը տանտիկինն է Կոյս Վառվառէ Ղանալէօղեան-Մկրտիչեան որ իր երեք տարեկան երախայով մտած է Ս. Ստեփաննոսի Անապատ և մեծ յարգանք կը վայելէ Սարկաւագուհիներու և դպրուհիներու կողմէ։

Սոյն Առանձնարանին մէջ, երբ Կոյս Սարկաւագուհիներէն մին հիւանդանայ, փոքր կոյսեր կը խնամեն ու կը հոգան զայն, իսկ եթէ մեռնի՝ մեծ շքով կը թաղուի ան կուսաստանի ծախսով, առանց իր ծնողքին թանկ մը ծախսել տալու։

Կուսաստանի բուն նպատակն է որբ ու անտէր աղջիկներ խնամել, մեծցնել և ի հարկին օժիտով ամուսնացնել։

Սոյն Ստեփանոս Անապատ կոչուած Կուսաստանի Սարկաւագուհիները նշանաւոր հանդիսացած են՝ իրենց վրայ փայլող երկնային գերբնական շնորհներուն հետ՝ ուրիշ կարգ մը առաքինութիւններով, և ճարտարարուեստ ասեղնագործութիւններով։

1862ին, Նոյն Կուսաստանի կոյսերէն Երուսաղէմ ուխտի երթալով՝ կէս դար առաջ՝ Ս. Յակոբեանց վանքին նուիրած են 40 հատ դասրագոյն ոսկեհուռ և 18 կանանչ բրօֆայ ոսկեթել խաչադրոշմ շուրջառներ զորս շինած են Ղորղանեան Սարկաւագուհին և կոյս Կատարինէ։

Նոյնպէս Զմիւռնիոյ եկեղեցւոյն նուիրած են նմանօրինակ գործեր։ Մինչ Երուսաղէմի Ս. Յակոբեանց մայրավանքին և Աստուածածնայ Տաճարին մէջ Ս. պատարագներու արարողութեանց մասնակցելով՝ Ս. Աւետարան կարդալու և վերաբերում ընելու արտօնուած են օրուան պատրիարքին կողմանէ։

Անապատարնակ Սրբասուն կոյսն Հռիփսիմէ Սարկաւագուհի Թահիրեանց 1894ին Կովկասի սարերէն ամէն դժնդակ զոհողութիւններ յանձն առած գացած է Զարչարանքներու քաղաքը Երուսաղէմ, բաւականաչափ նպաստ տանելով իր հետ՝ Ս. Յակոբեանց Վանքի պարտքի բեռը թեթեւցնելու բարենպատակաւ երբ քսանութ հազար ոսկի էր այն ատեն։

Վեհապետեան Յարութիւն Պատր. գնահատելով Կոյս Հռիփսիմէ Սարկաւագուհիին յոյժ գովելի ձեռնարկը, Ս. Հռիփսիմէի կոյսի մասունքը պարփակող խաչ նշանով մը և օրհնութեան կոնդակով մը պատուեց զայն:

Սարկաւագի տարեցոյցը Տիպար Կոյսին կենդանագիրը և անոր կեանքին համառօտ գիծերը ներկայացնելով, ինչպէս նաև իր սեռին պատկանող կուսաստանին հակիրճ նկարագրութիւնը հրատարակելով, կուզէ հաստատել սա՛ ճշմարտութիւնը թէ՝ կոյս մը երջանիկ է յաւէտ վանքին մէջ, երբ սիրով ու հաւատքով փարածէ անոր, քան թէ աշխարհի խառնակ ու վաղանցուկ հաճոյքներուն մէջ իր կեանքը մաշեցնելով՝ տառապալից ու հառաչալից:

Աւելորդ չենք նկատեր այս առթիւ յիշատակել նաև հոս թէ օրիորդ Զապել Տօնելեան «Սիպիլ 1883ին կը մտադրէ Տփխիսի սոյն Ստեփանոսի անապատ Կուսաստանը քաշուիլ և Սարգաւագուհի ձեռնադրուիլ, մինչ Ծերէնց կը գրէ հետեւեալ խիստ ուշագրաւ տողերը:

—«Ո՛չ, օրիորդ, ձեր կոչումը ուրիշ է. դուք փակուելու համար չէք՝ այլ փայլելու համար ընտանեկան յարկի մէջ:

Եւ այն օրէն Սիպիլ կը փայլի ընտանեկան յարկի մէջ, Կոյս Հռիփսիմէ Սարկաւագուհի իր տիպար գեղեցկութեամբ Անապատին Կուսաստանին մէջ:

**ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԲԱՆԱՄԱՆ.**

# ՁՈՒԼԼԸ ՄԻԱԲԱՆԻՆ ՆԱՄԱԿԸ

Տրկ. Վառվառէ Գարագաշեանին
—Քոյր մեծ բանաստեղծ Քամառ Քաթիպայի—
ՍԻՄՖԷՐՕՊՕԼ

Մի կողմից Տեսուչք ոսկի են շորթում,
Միւս կողմից վանքն էլ միշտ պարտք է դիզում,
Եւ լաւ են ուտում լաւ էլ կեանք վարում,
Առանց տանելու գործ մ'իրանց կեանքում:

Զեղծ Տեսուչներից թուով բաւական
Կարծես դարձել է վանքն Արշակաւան,
Բայց զարմանալին ինձ այն է թւում,
Թէ սրանք ի՞նչպէս հոս ապաստանում...:

Գիտենալով Ազգը թէ են զեղծանող
Չիկայ խօ՛ մի մարդ իրանց զոռացող,
Թէ դուք... զարմեր ի՞նչ էք անում անդ,
Շուտով դո՛ւրս վանքից չըրած քար ու քանդ:

Հարցիր ինձ հիմի թէ այժմ վանքում
Ձուլլի միաբանն ի՞նչ բան է անում,
Նա է միշտ տքնում բոլոր Սուրբ Տեղեր
Նա է աշխատում ձրի անձնուէր:

Բայց ի՞նչ է նրա սնունդը, գիտե՞ս,
Պասին չոր փալլա, շուշխա, քարաքէս,
Ոսփսին պուղղուր, փիլաւ է ուտում,
Եւ մէջ ձմառնա, չորթան ու դդում:

Իսկ նրա հագուստ՝ ըսան մի տարի,
Ներկուած կապոյտ մի խենդ ենթարի
Եւ մի զոյգ գուլպայ, ոտքին եմենի,
Վրան ճերմակ շուլ, թաշկինակն էլ մի...

Վանքն ունէ յատուկ իրեն դեղարան,
Ափերով ոսկի վատնում են վրան.
Կայ բժիշկ մի էլ դեղագործ ճիւման,
Բայց չունէ վերջինն իսկ վկայական...

Բայց երբ միաբան մ՚է հիւանդ նրան,
Կը թողնեն շան պէս երեսի վրան...
Նա հիւանդանոց կ՚երթայ թէ կայ փող,
Իսկ ո՛վ որ չունէ՝ կը մտնէ շուտ հող:

Կայ մի էլ դպրոց հոս ժառանգաւոր,
Օ, ֆիլնագիօն մ՚կարծես փառաւոր,
Տեսուչն հո՛ն կայրէ իբրեւ թագաւոր
Մինչ տղաքներն ալ զերդ ստրուկ զինուոր

Իսկ կառավարիչն է փարիսեցի
Որ չէ կարող իսկ քշել էշ ու ձի...
Սա հիմի տղոց դաս է աւանդում,
Մինչ չը գիտէ իսկ ուղիղ ընթերցում:

Մերթ էս դպրոցում կ՚եղնէ տիրացու,
Կածես շանթկոզ մէ քուն նուագածու,
Հո՛ն կածէ դաշնակ որն ի քուն անի,
Դպրոց կը դառնայ Քահձէ Տահքանի:



Ոմանք սիրում են պատանիներին,
Եւ մէջ փայփայում նրանց կիրքերին,
Մէջ տալիս են հո՛ն պատմութիւն, կրօն՝
Մինչ դուրս գալիս են տղայք անկրօ՛ն:

Սրանք ենենքն էլ ենքան առտառոց,
Որք շահագործեն տղայ ու դպրոց՝
Ու վարեն ղոկ կեանք հո՛ն իշխանական՝
Ուտել խմելով գինի պատուական...

Անկից ծոկ, հիմի, մի ջըհուտ էլ նոր
Շաբաթում երկու կամ երեք չորս օր
Ուսուցանում է տղոց ֆրանսերէն.
Եւ մի էլ Արապ տալիս թրքերէն:...:

Շէնքն էլ դպրոցին, օ՛, խի՛ստ փառաւոր,
Էս շէնքը լաւ բայց ի՛նչ օգուտ որ
Ժամոմը չըկայ առող ուղիղ փոխ,
Մինչ վատնըւում են հազար ոսկի փող:

Ահա՛ վիճակը Սուրբ Յակոբ վանքին
Որ սիրտ կրում էք, լսել փափաքիք.
Ա՛յ խեղճ ժողովուրդ, որ փողէք տալիս
Միթէ՞ ես վանքին վրայ չէ՛ք լալիս....

1906



ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԲԱՐԻ ՏԵՂԱՊԱՀԸ

Տ. ԴԱՆԻԷԼ ՍՐԲԶ. ԱՐՔԵՊ. ՅԱԿՈԲԵԱՆ

(ՊՈԼՍԵՑԻ)

# ՎԱՆԱԿԱՆ ԴԷՄՔ ՄԸ

## ՂԵՒՈՆԴ ՎՐԴ. ՄԱԳՍՈՒՏԵԱՆ

Ղեւո՛նդ վարդապետ։

Աւասիկ անուն մը, որ կրնամ ըսել թէ հարիւր հազար անգամ յեղեղուած, միլիոն անգամ լսուած է և չէ մնացած մէկը որ լսած չըլլայ այս հռչակաւոր մարդուն անունը։ Տարակոյս չըկայ թէ տակաւին դարէ դար, սերունդէ սերունդ միշտ պիտի արձագանգէ անոր անունը, ո՛չ թէ անոր համար որ ինք Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքին իբրեւ երեսուն տարուան ելեւմուտէն անուշ՝ մեծամեծ գեղծումներ գործած է, այլ աւելի անոր համար որ, իբրեւ ճարպիկ դիւանագէտ իբրեւ զօրաւոր խորագէտ, կրցած է Կեդր. Վարչութիւն մը, Ազգ. Ժողով մը և հայ մամուլը այսքան տարի իրմով զբաղեցնելէ վերջ՝ անպատիժ մնալ, պաշտօնապէս հաստատուած ըլլալով հանդերձ իր հաշուական գեղծումներն ու ազգավնաս արարքները։

Որչափ անլուծանելի մնան իր մանուածապատ ու առեղծուածային հաշիւները, Ղեւոնդ վրդ. գրեթէ այնքան աւելի անըմբռնելի, անխմանալի և խորհրդաւոր դէմք մը պիտի դառնայ մեր ազգ. տարեգրութեանց մէջ։ Ղեւոնդ վրդ. թէեւ կենդանի մեռեալ, բայց մեռեալ անմահ մընէ արդէն իր գեղծումներով իր ցարդ լռած դաւերով ազգին ու Ս. Յակոբեանց միաբանութեան դէմ։

Մաքսուտեան Ղեւոնդ հրեշտակատիպ, ալեհատ, կարմիր այտերով, մանր աչքերով, յօնքերը թափած միջահասակ այլ բարեձեւ, եկեղեցական տարազով չիք հագուած մարդ

մըն է զոր առաջին անգամ տեսնող մը պիտի չփոխէր Գրիգոր Լուսաւորիչին հետ, անշուշտ խաբուելով անոր փառաւոր ու ալեւոր երկար մօրուքէն։

Այս իսկ պատճառաւ ունի Հայլայֆ դասակարգէն բազմաթիւ համակիրներ ու փառաբանողներ, նոյն իսկ երեսփոխաններէն որ իր անունով Ղեւոնդեան կը յորջորջուին այսօր։ Սա ծնած է Դամասկոս։ Իր հօր անյայտանալէն յետոյ և մկրտութեան ատեն տրուած է իր հօր անունը՝ Մաքսուտ։ Հայրը տեղւոյն կառավարութեան վէզնէտարութեան պաշտօնին մէջ գտնուած միջոցին, որ ատեն Դամասկոսի մեծ դէպքը տեղի կունենայ. —45=50 տարի առաջ — զեղծումներ գործելով կը փախի Կիպրոս կրօնափոխ ըլլալով ու հոն յանկարծմահ կըլլայ։

Բնականաբար այս տխուր միջադէպը աւանդաբար հասած ըլլալու է իր որդւոյն՝ Մաքսուտին ականջը և խորապէս ներգործած անոր նկարագրին վրայ, ինչ որ անշուշտ օրինակելի փառաւոր դաս մը կրնայ դառնալ փոքրիկ Մաքսուտին համար, կեանքի ասպարէզին մէջ հսկայաքայլ յառաջդիմելու իբրեւ միակ միջոց։

Մաքսուտ աղայի մահուամբ իր երեք մանչ զաւակները մեծ մտահոգութիւն կը պատճառեն իրենց մօր, ապրուստի տեսակէտով։ Ուստի այն ատենուան տեղւոյն Վանահայր տեսուչը՝ Յակոբ վրդ. կը ղրկէ փոքրիկ Մագսուտը Երուսաղէմի Ժառանգաւորաց վարժարանը, մօրը վրայէն հոգ մը պակսեցնելու կամ թեթեւցնելու բարեմտութեամբ, առանց կռահելու անշուշտ որ մէկ օր այդ որբուկը կրնար Ազգին գլխուն ամենամեծ փորձանք մը դառնալ իսկապէս...։

Մաքսուտ՝ Եսայի Պատրիարքին օրով, Ժառանգաւորաց վարժարանի մէջ իր նախնական ուսումը առնելէ յետոյ սարկաւագ կը ձեռնադրուի և երկու աստիճանակից սարկաւագներուն հետ (Սսի կաթողիկոս Խապայեան, Վահան վրդ. Յակոբեան) Պոլիս կը ղրկուի Եսայի Պատրիարքի արտօնութեամբ օր մը վանքին ճակատագիրը իրեն յանձնուելու նպատակաւ

Թիւլեան Բաղդալ— Երես. Տօք. Թիւլեանի հայրը –



թուագիտութեան և համարակալութեան դասեր կաւանդէ Մաքսուտեանն՝ Երուսաղէմատան մէջ։ Քիչ ատենէն Մաքսուտեան Սարկաւագ, վարպետ ելեւմտագէտի ու ճարպիկ դիւանագէտի պաշարներով իր ընկերներուն հետ կը վերադառնայ Երուսաղէմ, ուր ձեռք կանցնէ վանքին ամենէն խոշոր պատառը, ելեւմտական գործը, մինչ իր աստիճանակիցները կստանձնեն Ժառ. վարժարանի վերին հսկողութեան հոգը։ Մագսուտեան իր ճարպիկ դիւանագիտութեամբ կը գրաւէ Եսայի պատրիարքի համակրանքը, կանուանուի բռօֆիւռէր տը գուվան առմէնիէն։ Ապա կը ձեռնադրուի վարդապետ, կեանքին մէջ մէկ անգամ պատարագելու խօստումով և այնպէս ալ կուխտէ ձեռնադրութեան միջոցին...

Արդարեւ Մագսուտեան Ղեւոնդ Վրդ. իր անդրանիկ պատարագը Ս. Յակոբեանց Մայր Տաճարին Աւագ Սեղանին վրայ մատուցանելէ յետոյ, իր հանդիսաւոր կերպով ըրած ուխտին հաւատարիմ մնացած է, այն օրէն ի վեր ո՛չ անգամ մըն ալ եկեղեցի ոտք կոխած չունի։

Այս ճարպիկ Սուրիացին վարած է ելեւմտից տեսչութենէ զատ Տնօրէն ժողովոյ ատենապետութիւնը (այսինքն համարատուի և համարատարի կրկնակ պաշտօնները) եղած է Ճարտարապետ, Շինուածապետ, Կալուածոց Տեսուչ, Դիւանագէտ, վարպետ ելեւմտագէտ, կարճ խօսքով վանքին վարիչը, ամենայն ինչը...։

Ահաւասիկ իր գործնէութիւնը։

Քսանը հինգ տարի շարունակաբար ելեւմտից տեսչութեան և Տնօրէն ժողովոյ ատենապետութեան կրկնակ պաշտօնները վարելով ինքնագլուխ հողեր առած ու ծախած է, որով «վեղարաւոր վաճառական»ի մեծ համբաւն ալ կը վայելէ։

Տոկոսաւոր փոխառութիւններ կնքած է և անձնականին շէնքեր կառուցած է։ Վախճանած միաբաններու կալուածներուն եկամուտներ, իւրացուցած է։ Տասներեք տարիէ ի վեր միաբանութեան ու Ազգին քթին խնդալով հաշիւ չէ տուած։

Աղեքսանդրիոյ ընդարձակ գետինը 20 հազար ոսկիի վաճառելով վանքին պարտքը վճարած է։

Քրիքովլի պատմական ու պատուական մէկ ջրարբի գետինը ջնջին գումարով մը ձեռքէ հանած է։

Պարտքով երկու հսկայ օթէլներ կառուցած է Երուսաղէմի մէջ։

Վանքը մինչ պարտքի տակ ձգած է։

Պէյրութի մէջ եղբօրը — Ցակոբին — անունին 1700 ոսկիի քարուկիր տուն մը գնած է։ Լրագիրներէ ոմանք կաշառած է։

Գէորգ Երեցեան այժմ հանգուցեալ – եպիսկոպոսացուցած էր, օր մը պատրիարքացնելու ու անով ամրանալու համար վանքին մէջ։

Հաշուապահանջներու վրայ թուք ու մուր քսած է։

Հաշիւ չը տալու համար ամէն միջոց ի գործ դրած է։

Ժառ. Վարժարանը տիրացուներ միայն հասցնելու աստիճանին մէջ պահած է։ Իզմիրլեանին հակառակած է ու անոր միջոցաւ անուանարկած է զայն մինչև վերջ։

Տգէտ, ապիկար միաբաններ սարկաւագ և վարդապետ ձեռնադրել տուած ու անոնցմով կուսակցութիւն մը կազմած է իր շուրջ։ Մինչև վերջը անոնցմով մաքառելու համար իրմէն հաշիւ պահանջողներուն հետ։

Հաշուապահանջներն Ազգային քննիչները վարձկան մարդիկներու միջոցաւ վտարած է Երուսաղէմէն։

Այս ամենքը գործած է մեծ դիւանագիտութեամբ, անշուշտ վանքէն իւրացուցած 11000 ոսկիներու ուժովը, եւ տակաւին այս ու այն երեսփոխանէն կը խնդրէ որ կամ զինքը արդարացնեն կամ դատապարտեն։ Շիտակը այս ալ բաւական լաւ խորագիտութիւն մըն է, որուն մեղմացնելու, որ տեսակ մը զղջումի հանգամանք ունի ըստ իս։

Ժամանակ մը Մագսուտեանի աջ բազուկն էրերէյեանը, ձախը Վեհապետեան. Ա.ին դատապարտութեամբ ու վերջինին պաշտօնանկութեամբ ու վախճանումով Մագսուտեան Ղեւոնդ դարձած է ճիշդ այն արծիւին, որ ճարպիկ որսորդի մը լաւ նշանառութեան տակ իր երկու թեւերէն գնդակա-



հար՝ կուզէ թեւածել իր նախկին բնակավայրը, փառքի գագաթնակէտը։

Տակաւին կը յուսայ ու կ'սպասէ որ զինքը Պոլսոյ մէջ վար չդնեն։ Պոլսէն աւելի լաւ տե՞ղ պիտի գտնես երջանիկ ապրելու համար, մարդ աստուծոյ, նստեր ես տեղդ նստէ, և դիզած հարստութիւնդ վայելէ։ Բայց բարեկամներդ ալ մի մոռնար։



ԳՈՒՐՊԱՆ ՅՈՒՍԷՓ
Հռչակաւոր որովայնախօս

# ԵՐՈՒՍԱՂԷՄ ԵՐՈՒՍԱՂԷՄ ԵԿԵՑԻ՛Ր ՈՐ ՔԵԶ ԵՍ ԱՒԱՂԵՄ

## — Ի՛ՆՉ ՇԱՀ —

Ի՜նչ շահ թէ Սուրբ Յակոբ վանքն է սիրուն պերճ,
Երբ պատրտի տակ կը հեծէ ան մինչեւ վերջ...:
Մեր Մայր Տաճարն ի՜նչ շահ թէ է փառաւոր,
Երբ քիչեր կան հո՛ն խղճի տէր կրօնաւոր.
Ազգն ի՜նչ շահ թէ հաշիւ կ՛ուզէ Ղեւոնդեն.
Անդին երբ նոր Ղեւոնդներ վանք կը մտեն...
Շատեր ի՜նչ շահ թէ կրեն գլուխնին սեւ վեղար,
Երբ վարժուած են վանքն առնել միշտ յաւար.
Սուրբ տեղեաց մէջ ի՜նչ շահ թէ միշտ պատարագեն.
Իրարու հետ երբ յաւիտեան ոխեն քէն...
Ի՜նչ շահ թէ միշտ ուխտաւորաց տան քարոզ,
Երբ իրենք են դեռ անբարիշ բարբարոս
Վանքին ի՜նչ շահ թէ կայ բժիշկ, դեղարան,
Հիւանդի մ՛երբ չի կայ տանող դեղ, դարման...
Ըսէ՛ք, ի՜նչ շահ թէ կայ ուսման յարկ մ՛անգին,
Երբ օգտակար չըլլար երբէք ա՛ն վանքին...
Ի՜նչ շահ թէ հայ ձեռագիրներ կան ծերուն,
Անոնք երբ միշտ յանձնուած են ցեցերուն
Վանքն ի՜նչ շահ թէ ունի յատուկ տպարան,
Չունի օգուտ երբ հանրութեան համար ա՛ն.
Ազգն ի՜նչ շահ թէ վանքին կուտայ նոր կանոն,



Երբ օրէնքը գործադրողներ չըկան հո՛ն.
Ի՜նչ շահ թէ «Սուրբ...» անուն անոնց մինչ կուտան
Երբ գործքով խել գերազանցած են Յուդան
Գանին վրայ ի՜նչ շահ թէ կայ Պատրիարք
Երբ ինքն է ծեր, շուրջիններն ա՛լ պատիր արք...
Ազգն ի՜նչ շահ թէ կը կարեկցի այս մեծ տան
Երբ ԼԻԱԶՕՐ ԿԱՌԱՎԱՐԻՉ չունի ա՛ն.
Պոլսոյ մէջ ալ ի՜նչ շահ թէ կայ հայ մամուլ.
Երբ օրն ի բո՛ւն կապրի միշտ ա՛ն, ո՛հ, անմուլ...
Սոյն գրուածներն ալ ի՜նչ շահ թէ բոլոր ճիշտ,
Ճշմարտութիւնն երբ հալածուած է ո՛հ միշտ...

1906 Ռումկէ



ՏԻՐԱՅՐ ՎՐԴ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

Թուղթ Օսմանեանական եւ կղերապատմութեան գասագով։

# ՍԱՐԿԱՒԱԳԻՆ ՕՐՕՐԸ

Օրօր ըսեմ ես օրօր
Միաբանաց հին ու նոր,
Անո՛ւշ անո՛ւշ թող նիրհեն,
Մինչ քանդուի վանքն հիմէն ..

Օրօր, օրօր է՛.՛.՛ օրօր..,
Պարտքեր դիզուին օրէ օր,
Միաբանաց քուն տարեր,
Տէրն ողորմի վանքիս, տէ՛ր...

Մինչ վարժարան մը այսօր
Գլուխն առեր կ'երթայ կոր
Անդին հայրեր կը նիրհեն.
Օրօր ըսեմ ես նորէն...:

Ժողովական, խոճարար,
Անվարչագէտ, զեղծարար
Ուզածնուն պէս վանք վարեն
Հայրեր, քնացէ՛ք մեղկօրէն...

Ընթերցարան, տպարան,
Դարձած այւոր սրճարա՛ն
Գրաշարներն այն բոլոր
Վեր վար շրջին լրման օր...



Կայ բժիշկ մ'ալ, դեղագո՛րծ,
Թէեւ վերջինն այս անփորձ.
Միաբաններ շատ անգամ
Ո՛հ, կը մեռնին անխնամ...

Վանքը հիմէն կ'օրօրի...
Վարչութիւնն ալ օր օրի...
Կարծես նիրհէ ասդին արդ,
Ո՛ն օրօր մ'ալ քու վրադ...

Միաբաննե՛ր, ա՛լ հերի՛ք...
Որքան խըռխըռ նիրհեցիք.
Ա՛լ չեմ կարդար Ձեզ օրօր
Վանք՝ վրանիդ փլչի կոր...

Կ'ըլլա՛յ եղեր այսքան ալ
Խորունկ, խորունկ քընանալ.
Բայց ի՛նչ կ'ըսեմ Տէր Աստուած
Քուն չեն ասոնք այլ մեռա՛ծ...:



ԳՐԻԳՈՐ Յ. ՅԱԿՈԲԵԱՆՑ
( Խ Օ Ս Կ Ա Ն Ց )
*Ճարտարարուեստ, փորագրիչ ոսկերչի*

**ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ.**

# ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՈՉ ԹԷ ՄԷԿ ՔՆՆԻՉ...

# ԱՅԼ ՀԱՐԻՒՐՆԵՐՈՎ ՂՐԿԵՆՔ, ԴԱՐՁԵԱԼ ՔԻՉ...

ՕՐՄԱՆԵԱՆ ՍՐԲԱԶԱՆԻՆ

Երուսաղէ՛մ, Երուսաղէ՛մ, անկրոններու վայրն ընտրեալ,
Որ կոտորէր մարգարէներ ու քարկոծէր առաքեալ,
Աստուածորդի մ'իսկ երբ խաչեց չամաչելով նա կրկին,
Ո՛ւր մնաց որ չը հալածէ նոր քննիչներն Հայ Ազգին...։

Այն դարաւոր ու փառաւոր Ս. Յակոբայ վանքն Հայոց,
Ուր սնամէջ ու գեղձանող միաբաններ ա՛յնքան հոծ,
Միշտ վանական, մերթ անձնական խնդիրներուն երեսէն,
Տեսած է տա՛ս տա՛ս քննիչներ ղրկուած միշտ Պոլիսէն...։

Առաջինը որ եղած է նախ Տօքթոռ մը մեր մէջէն,
Մեծատաղանդ, ազգապարծանք բժշկապետ Սերվիչէն.
Վերադարձին նա Բարիզէն՝ Երուսաղէմ գացած՝ հո՛ն,
Մէկ քանիին նուէր տուած անմահական քթախոտ...։

Երկրորդն եղած է Նաայի Պատրիարքին իսկ օրով,
Երբ Ղեւոնդին եղբօրն համար վանքն յուզման մէջ էր խռով...
Զինուորական բժիշկ դարձեալ այն Ասլանեան Ստեփան,
Որ չորս հարիւր կարմիրն առաջ՝ լաւ կեանք վարեց ստէպ ա՛ն...



Երրորդն է այն միշտ ողբացեալ դիւանագէտ մեր Բարթող,
Որ երբ հասաւ Երուսաղէմ, Ղեւոնդն եղաւ իսկոյն դո՛ղ,
Զի նա ունէր վանքին պարտքը ստուգելու լոկ պաշտօն,
Եւ գիտնալ թէ ե՞ր *ՀայրՍուրբներն* մէկ մէկու հետ անհաշտ հո՛ն.

Չորրորդն՝ եղաւ ճարտարագէտ կոչուող Գէորգն այն Ասլա՛ն
Որ թափանցեց Ղեւոնդին սիրտն մէկ օրուան մէջ *ապշ* ա՛ն. .
Նա չսպասեց իր գործակցին —Խաչտուրեանին Կարապետ—
Ըսաւ Պոլսոյ մէջ կը մաքրենք հաշիւն անձին այդ վարպետ։

Հինգերորդը՝ Արիս Ֆէսնեան ու Սրբազան Մանկունի,
Որուն համար կալուածատէր ըսին՝ առջին գանկ ունի,
Կազմեցին հոն հաշուեքննիչ մի մասնախումբ վանական.
Բայց արդիւնքը դեռ չը տեսած *ջայլամներով* հո՛ս ինկան...

Վեցերորդը՝ երեք անձինք, տարբեր բնութիւնք, զատ զատ գանգ
—Յակոբ Աշոտ, Ֆիքրի, Պէկեան— գացին Եաֆա, առին կանգ։
Երուսաղէմ հազիւ հասած՝ գերեզմանին չըրած ուխտ.
Յանկարծ մէկ օր դարձան Պոլիս շալկած միայն պարկ մը թուղթ։

Եօթներորդը՝ մենք կարծեցինք իսկ երկնատուր մի պարգեւ,
Ազգն երբ ղրկեց մի տեղապահ նեցուկ մ'ալ քովն այն Պարգեւ
Բայց շատ չանցաւ վերսկսան դարձեալ վէճեր բաբէ՛, հո՛ն,
Ա՛լ աւելի դարձաւ վանքը կատարեալ մէկ բաբէլոն...

Իսկ ութերորդն ա՛լ աւելի Ազգին որդին եղաւ ցաւ
Վեհապետին վախճանումով վանքին չարխն ալ երբ դարձաւ,
Վերջագնաց պատուիրակը Խոճասարեան ըսին Հայկ
Որ պերճիմաստ իր խօսքերով միայն առթեց մեզ հմայք։

Մինչ իններորդ՝ կրկին Պարգեւ, վաղն ալ ղրկեն ուրիշ նոր,
Այսպէս դարձեալ յաջորդաբար երթան քննիչ ամէն օր,
Բայց վանքն հո՛ն է՝ հին դրութեան մէջ ինչպէս որ է այսօր,
Յորչափ քննիչն այն Ազգային չէ՛ ինքնիշխա՛ն, լիազօր...։

*1913*



## ՎԱԵՄԱՇՈՒՔ

## ՊՕՂՈՍ ՔԷՐԷՍՏԷՃԵԱՆ

Ծնած է 1860 Յունվ. 13ին Խասգիւղ. իր գատախարակութիւնն եւ ուսումնական կրթութիւնն ստացած է նոյն գիւղի Ներսէսեան Վարժարանի մէջ, որուն փայլուն շրջանաւարտներէն մին եղած է։

Պատանեկութեան հասակին մէկ քանի ընկերներուն հետ հիմնած է «Ասիական» օգտաշատ ընկերութիւնը, որ երկար տարիներ կրթական հայ ընկերութեանց զանազան վարժարաններու դասագրքերը ձրիաբար հայթայթած և միեւնոյն ատեն Նուպար Շահնազարեան վարժարանին «Երկրագունդ» հանդէսը վերահրատարակած է։

Վսեմ. Պ. էֆ. Քէրէստէճեան ունեցած է ազգային զանազան պաշտօնավարութիւններ, ինչպէս Խւր ծննդավայրի, և ի վերջոյ Բերայի Թաղական խորհրդոյ և Հոգաբարձ. եւ Ազգ. Ս. Փրկչայ Որբանոցի խնամակալութեան անդամակցութիւնը, Ասիական ընկերութեան ընդհ. և գործադիր ժողովներու ատենապետութիւնը, Արարատեան և ապա Միացեալ Ընկերութեան ընդհ. ժողովներու Ատենապետութիւնը և ինչ որ նշանակելի է և հաղուադէպ՝ զանազան թուականներու մէջ Ազգ. Կեդրոնական վարչութեան Ուսմ. խորհրդոյ Ատենապետութիւնը 18 տարի։

Մինչ գործնական կեանքին մէջ, Քէրէստէճեան էֆ. դեռ նոր շրջանաւարտ Ներսէսեան Վարժարանի, ընդգրկած է փաստաբանական ասպարէզը, լինելով Ս. քարտուղար նըշանաւոր փաստաբան և Հանրային գործերու Նախարարութեան նախկին Իրաւագէտ Խորհրդական Ֆրանսուա Թօօլաթօ պէյի և յետոյ հաջակաւոր փաստաբան Միսիս Ժագ Պարաթիի և հետեւելով միանգամայն Կալաթա-Սէրայի Լիսէին իրաւաբանական ճիւղին և ի վերջոյ Պոլսոյ իրաւաբանութեան համալսարանին դասերուն։

Պօղոս էֆ. Քէրէստէճեան, սոյն պաշտօնավարութեանց միջոցին «Երկրագունդ» հանդէսին մէջ հրատարակած է օրէնսդրութիւն ի Տաճկաստան» իսկ «Cublicateur Ottoman» դատական շաբաթաթերթին «Journal deConstantinople» և «Le Phare du Bosphore» Ֆրանսերէն լրագրաց մէջ թարգմանած է «Մէճէլէ»ի «Բիթապ-իւլ-իգրար» և «Բիթապ-իւ-սուլա» օրենագիրքերն ինչպէս նաև Վճռաբէք եւ Եղենադատ ատեաններուն յոյժ շահեկան և կարեւորագոյն վճռագիրներն։



Ի վերջոյ Արտաքին Գործերու Նախարարութեան Իրաւագէտ Խորհրդականաց օգնական անուանուելով 29 երկար տարիներէ ի վեր ցարդ կը շարունակէ իր այս պաշտօնը։

Միյմամբ՝ Կայսերական զինուորական բժշկութեան վարժարանին մէջ Ֆրանսերէնի ուսուցչութեան կոչուած ըլլալով, 23 տարի անընդհատ վարած է սոյն պաշտօնը մինչև Օսմ. Սահմանադրութեան վերահաստատման թուականը՝ ընծայելով հայրենիքին 2000է աւելի աշակերտներ, որոց մէջ կը գտնուին այժմ զինուորական բարձրաստիճան բժիշկներ։

Իր անտիպ մէկ քանի ընտիր երկերէն զատ ունի «Հանդէս

Սրարչագործութեան Աստուծոյ» և «Մանզարայի Խըլգաթի Ճիհան» անուն Հայերէն և Օսմաներէն տպուած երկերն ։

Իր պետական ծառայութեանց ի գնահատում՝ Պօղոս էֆ․ Քէրէստէճեան աստիճանաբար արժանացած է «Իւլա Սանիսի» պատուաստիճանին․ նոյնպէս Գ․րդ կարգի Օսմանիէ և Մէճիտիէ և օտար մի քանի պատուանշաններուն ։

## ՀՋՕՐԸ ԵՐԲ ԱՆԿԻՆ Է
## ՍԷՐՆ ԻՐ ՄԱՔՈՒՐ ԱՆԳԻՆ Է...

Ա՛հ. ինծ համար, մինակ դուն,
Ես երկնառակ զուարթուն.
Քեզ կը պակսին զոյգ թեւեր,
Որ թռչին վե՛ր դէպի վե՛ր. . ։

Զոյգ մ'աչքերդ պայծառ
Երազներու թոյի բոյն,
Մինչ վարդագոյն քու այտեր՝
Բուրեն համակ գեղ ու սէր։

Վարսեր գլխուդ վետ ի վետ՝
Շքեղ պսակդ է յաւետ,
Երբ զգուշի ինծ նայիս,
Դիցուհի մ'ես — Անայի՛ս։

Մինչ դողային իմ ծեռքէս,
Մարդիկն ամէն խրոխտ ու վէս,
Ես դարձայ ա՛հ գիրին յար
Զոյգ մ'աչքերուդ ջինջ գոհա՛ր...



## ՔՈՒՆԸ
## ԱՐԱՄ Տ. ՄԱՆԱՎԵԱՆ
### ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ

Ճշմարիտ յեղափոխական ։

Ցախուռն յեղափոխական մը, նոյնիսկ յեղափոխականութեան մէջ ։

Սօցիալիստութիւնը առաջին անգամ անկեալ Խասգիւղի մէջ ներմուծողը ։

Օրէնսգիրներու դէմ քննադատ ։

Խրոխտ բրօբականտիստ հասարակական չահերու ։

Թշուառներու պաշտպան ։

Ալեքսանտրիոյ հայ Ազգային ու Ամիրայական քմահաճ Տնօրէնութեանց ջախջախիչը՝ օժանդակութեամբ Երուանդ Օտեանի ։

Յաւխտենական բողոքարկուն ամեն չահատականութեանց և անիրաւութեանց դէմ ։

Լաւ որսորդ ։

Բուռն հակաճառ ։

Կռուո՛ղ ։

Որ Զաւարեանի պէս աղքատ ապրեցաւ և աղքատ մեռաւ, մեծ բանակալին անկումը տեսնելէն վերջ ։

Ինչպէս կեանքը նոյնպէս մահը եղաւ փոթորկալից այլ՝ հանդարտ խղճով իջաւ գերեզման արդարակ ցասմանէ ուռած կուրծքը յաւիտենապէս հանգչելով Խասգիւղի խնկաբոյր բարձունքին վրայ ։



## ՆՇԱՆ ԳԱԼՖԱՅԵԱՆ

### ՊՕԼՍԵՑԻ

Ծնած է 1855ին Իւսկիւտար, Անդրանիկ շրջանաւարտ Պէրպէրեան վարժարանի: Վկայեալ Մոնբէլիէի երկրագործական համալսարանէն, իբր ingénieur agricole:

Նախկին օգնական Տնօրէն Սելանիկի Երկրագործական վարժարանի:

Նախկին Տնօրէն Պրուսայի Երկրագործական վարժարանին Շերամաբուծական կայանին:

Ուսուցիչ Հալգալըի երկրագործական բարձրագոյն վարժարանին:

Օգնական Տնօրէն Գիտական ճիւղին Երկրագործական և առեւտրական նախարարութեան:

Պատուեալ անդամ Ճափոնի Շերամաբուծական ընկերութեան:

Անդամ Ելեւմտից հոգաբարձութեան Ազգ. Կեդրոնական Վարչութեան:

Ատենապետ Վարչական Խորհրդոյ Պէրպէրեան Սանուց Միութեան:

## ԴԱՄԱՍԿԵԱՆ ՔՐՈՆԻԿ

Ո՛վ որ գացած է անգամ մը Դամաս
Տեսած է անշուշտ հո՛ն հայն փոքրամաս.
Ասոնք խառնուն տունէ բաղկացած՝
Տեղական բարքերն են իւրացուցած...

Հայրաթներէն են Նախիջեւան եղբարք,
Որոնք սեպելով իրենց պաշտի՛ւ, փառք,
Եղած են այսօր ցեղով քաղաքական,
Որով շտկած են իրենց ապագան.

Կարժէ որ յիշենք Խաչատուր աղան,
Որուն բերնին մէջ սուտեր կը ղողան.
Թէ հանեն այսօր զինքը կախաղան.
Գոչէ. «Մինչեւ մահս ես եմ քաղաքական»:

Իրեն գործակիցն եղբայր Կարապետ,
Ջեղծումներու մէջ առաջին վարպետ
Ծախելով մոմեր սա՛ մինչ բանկային
Կոկորդին մէջն իր դրամներ հային...

Խնամին ասոնց ղայնափոր Մանուր,
Ապա չիկ Հարէնց Սարգիս, լեզուն սո՛ւր,
Մի՛շտ կը խնկարկէն Խաչօն. արտաքին
Որ կ՚ն առաջին տզրուկը վանքին:

Այսօր Դամաս մէջ որքան աղա կան,
Գիտցի՛ր որ անոնքն ալ են քաղաքական.
Որոնք փխացած խան զիրանարք
Օ՛, խաղք կերերէ իրենց քով Պիզլարգ:

Այս մեր աղաներ կիրակի օրեր.
Ժամ կ'երթան՝ հազիւ մռմռչեն «Հայր մեր...»
Իսկոյն դուրս կ'ելնեն, ուր այլեւս երկար
Մօտի տեղ վառեն ձեռքերնուն սիկառ:

Հո՛ն ժամուն բակը կը շարեն դարան...
Ապա կը մտնեն Առաջնորդան.
Ուր սխալով ժամէն, դպրոցէն
Սանդի մէջ անոնց ջուրը կը ծեծեն...

Սա՛ Յանցի չոչեր, կայ քանի տարի
Որ քաղաքան են առանց դադարի.
Գործերնին միայն բանկայ մօտ ծախել
Ու դրամ կորզեն աչքէն ու ձախէն...

Որ Առաջնորդն որ գացած է Դամաս
Ասոնց երեսէն փախած են վնաս.
Բայց Ս. Աթոռը դարձեալ հայրաբար,
Զիրենք խնամած ու խնամեն յա՛ր...:

Ով դուք քաղաքան ճիպա՛ր աղաներ,
Որքան չէք հաւնիր Ս. Յակոբին մեր՝
Աղօթեցէք դուք անոր յարաժամ,
Որ Ձեզ շինած է այսօր դպրոց ժամ:

Նախ աղօթեցէք բայց Ս. Աթոռին
Որ հոգայ պէտքեր Ձեր թոռան թոռին.
Դրկելով ձեզի զոյգ վարդապետ միշտ,
Թեթեւցնելու Ձեր մեղքերն ու վիշտ:

Միշտ աղօթեցէք ո՛վ դուք ապերախտ,
Նոյնպէս Գաբրիէլին Անուշին դժբաղդ,
Որ յարդանքն տարաւ Ձեզ դպրոց,
Ուստան կար չանքեց Ձեզ եւ Ձեր տղոց:



Իսկ այսօր ձմեռ թէ ուշիք, պահիք էք,
Վահան հայրիկին ալ երկրպագէք,
Որ Ձեզ շինեց նոր առաջնորդարան
Որուն համար ալ շարեցիք դարան...:

Բայց ո՛վ աղաներ դո՛ւք Ձեզի կ'ըսեմ,
Արդեօք կը վայլէ՞ք այդ շէնքին վսեմ.
Միթէ տեղը չէ՞ ըսել արդ արագ,
Թէլ պալըէրգա, օ՛, շիմ շիր բարագ:

Իսկ կարգ մը մարդիկ որ աւելցածու
Դպրոցին եղած են հոգաբարձու
Որոնք դուռնէ դուռ մուրալով սակայն
Տան վարժապետին չեչին ամսական:

Երբ առնէք սակայն անօթի մարին,
Ա՛լ աչք կը տնկեն խեղճին գումարին,
Որոնցմէ մին էր Մելքոնն այն խաչիք
Որուն դէմք տեսնէք, հիւուր կայչիք...

Մինչ Ասուածավախ, մարդիկ ժողան
Պախըրճի Կարօն. խեղճուկ Թումանեան
Երբեմն քաղաքին որ Շամս մէր ա՛ն,
Մեծ աղաներուն ո՛հ, տերսեն մեռան:

**ՑԱՆԳԱՊԱՏՈՒՄ**

# ՄՏԵՐՄԱԿԱՆ ԽՐԱՏԱԿԱՆ

*Մեր Հայն պերճափայլ օրիորդներուն,*
*Որ նազելաշուք, համեստ ու ներհուն,*
*Ու մտասեւեռ սրտով առչորուն,*
*Չեն հանիր եղեր մեղի պէտներուն:*

Ով դու բարեկիրթ, խի՛ստ համեստ ՓԻՄԻ,
Տե՛ս որ գլուխդ չը զարնես վիմի...։

Միշտ նազելաշուք հեռատես ՄԱՐԻ,
Զգո՛ւշ... տաքերուն չեղնէ սիրտդ մարի...։

Ա՛խ չնորհապերճ, լեզուագէտ ՆՈՅԵՄ,
Զանացի՛ր որ միշտ ըլլաս դու խոհեմ...

Բուն գեղեցկութեան տիպար ՀԵՐՄԻՆԷ,

Մի յուսար երբէք դու վարդեր մ'ինէ։

Նոյեան Տապանին աղւոր ԱՂԱՒՆԻ,
Սպասէ որ քեզ մէկը ա՛խ հանի։

Զօն, բարեմիտ, ժրաջան ՆՈՒԱՐԴ,
Ես կը մաղթեմ որ ըլլաս միշտ զուարթ։

Սիգաճեմ եղնիկ անմեղ ՍԻՐԱՐՓԻ,
Ինչո՞ւ ուրիշին կ'ըսես. «Սէր արբի...»։



Ի՛սկ մեծափարթամ, մարմնեղ ՊԵՐՃՈՒՀԻ,
Գիտցի՛ր այս կեանքը օր մը վերջ ունի...։

Ցաւէտ քաղցրերգակ պարկեշտ ՀԱՅԿԱՆՈՒՇ,
Նայէ որ ձայնդ չը մարի անուշ...։

Տաղանդաւոր, փորձ, խոհուն ԱՐԱՔՍԻ,
Արտերու փարո՛ս, լոյսդ չը պակսի...։

Միշտ անքարունակ միամիտ ԶԱՊԷԼ,

Ե՛լ դու աշտարակ չանթերըդ թափել...։

Գաղափարապաշտ քաղցրիկ ԶԱՐՈՒՀԻ
Թո՛ղ ամէն հոլէ սիրտդ չը զարհուրի...։

Ով սուսանամիտ, անդուռ ԱՏՐԻՆԷ,
Հրաժարէ դու ա՛լ վալս ու պարելէ.

Իսկ դու լրջադէմ, ողջամիտ ՍԱԹԻՆ,
Ո՛չ, մի՛ հառաչեր ա՛լ ամէն ատեն։

Երկնային հրեշտակ, անբասիր ԷԼԻԶ,
Ի՞նչպէս սա՛նկ մէկուն ըսիր. «Սիրելի...։

Վշտակոծ փիւնիկ, ուռի ԵՒՓԻՄԷ,
Քահանայի մը դու կանխաւ դիմէ։

Ով իմաստասէր դու բարի ԱԶՆԻՒ,
Ամէնուն հանդէպ կըրէ սիրտ մ'ազնիւ։

Սրտաբեկ տատրակ հրաշունչ ՍԱՆԴՈՒԽՏ,
Բանալ տուր բաղդիդ համար քան թուղթ։

Շնորհներու գանձ չքնաղ ՎԱԼԱՆԴԻ —
Սիրոյ կամուրջէն մ'անցնիր ա՛լ անդին։

Դիւթիչ, հմայիչ, զուարթ ԵՒՏԷՐՊԷ,
Աշխարհիս չորս կողմ կեանքը մէկ կերպ է։

Հանճարեղ, արթուն լայն'խոհ ՊԷԱԹՐԻՍ,
Փիլիսոփայի պէս պէտք է ապրիս...։

Նուրբ, փափկաճաշակ, մեղրամոմ ՇԱՔԷ,
Մեղմ զգուշացիր պաղէ ու տաքէ։

Հրշեռակատիպ ու խնկաբոյր ԱՇԽԷՆ,
Գողթան Երգիչներ թող քեզ սէր բաշխեն...։

Ո՛հ, դեռափթթիթ ծաղիկ ԱՆԹԱՌԱՄ,
Աշխատէ չանձնես էրիկ մը զառամ...։

Զերդ թրթռուն թիթեռ քաղցրախօս ՄԱՑՏԱ,
Անցեալ երազով թո՛ղ հոգիդ խայտա՛յ։

Ծրճուան ճպուռ ո՛վ անվիշտ ԲԵՐԿՐԻԿ,
Անվերջ յոյսերով դուք ալ միշտ բերկրեք·

Վե՜հ բարեբաստիկ, անխորշում ՄԱՐԹԱ,
Նստէ օրն ի բուն քու բաղդդ կարթա։

Պերճ սալոնական փայլուն ՇՆՈՐՀԻԿ,
Դուք ալ ձեր վերջը մնաւ մի խորհիք։

Կաթնաթոյր պարիկ, գիտուն ԵՊՐԱՔՍԷ,
Ձիւնաթոյր ձեռքերդ դէմքիդ վրայ քսէ։

Ծիծեռնակի պէս խօսուն ԵՐԱՆԻԿ,
Յաճախ գոց պահէ քու այդ բերանիկ։

Պուպրիկի նման գողտրիկ ՎԵՀԱՆՈՒՇ,
Մեղք են ատամներդ, չը կոտրես հա՞ նուշ...։

Միշտ հեզահամբոյր նռնուշիկ ՆԵՄԶՈՒՐ,
Մ'ըսեր ուղածս կը փնտռեմ զուր...։

Դեղձան մազերով, մեղուակն ՍԻՐՎԱՐԴ,
Նայէ չը թօշնի դէմքիդ բոսոր վարդ...։

Ջինջ, համեստունակ սեւակն ԱՆԺԷԼ,
Սալոնի տըղով սիրտդ մի՛ մաշել...։

Պերճափայլ, խանդոտ, անխոնջ ԱՆԳԻՆԷ,
Խընայէ անձիդ, կեանքը անգին է...։

Մինչ դու փափկասուն սիրուն ԱՆԱՅԻՍ,
Բաւ է ա՛լ որքան շատերու նայիս...։

Անկեղծ, հրատոչոր, տարփատենչ ՀՈՌՈՓ,
Մի յուսահատիր դու սրտաբըրոփ...։



Խի՛ստ հրապուրիչ եւ սիրավառ ԲԵՐՈՒՁ,
Աշխատէ զանկդ լեցընես դերուս...։

Վայելչագեղ ու լուսափայլ ԼՈՒՍԻԿ,
Դու միշտ զործդ տես ա՛լ սուսիկ փուսիկ...։

Իգական սեռին ո՛վ պարծանք ԹԱԳՈՒԿ,
Աշխատէ կազմես շուտ բոյն մը տաքուկ։

Գթութեան աղբիւր պարկեշտ ԷՕԺԷՆԻ,
Գտի՛ր ա՛լ հատ մը սրտիդ արժանի...։

Իսկապէս փայլուն, շողշողուն ԱՍՏՂԻԿ,
Մի նստիք հոլեն որ չելնէք պողիք...։

Սիրահալ աղջիկ, յուսահատ ՊԱՅԾԱՌ,
Հրաշուն արեւէն քիչիկ մը կայծ ա՛ռ...։

Իսկ դու փառատենչ իսկապէս ՍՈՒԼԹԱՆ,
Զըլլայ որ մարդիկ օր մ'ալ քիչ կուլ տան...

Անթառամ ծաղիկ դալար ԲՐԱԲԻՌՆ,
Գնա՛ բժիշկին սիրտդ սթափէ հոն...։

Լուրջ, համբաւատենչ փոքրիկ ՍՐՄԻՆԷ,
Ամէն սիրտ չինուած չէ՛ մէկ մարմինէ...։

Նազելաչուք դու ձիւնաթոյր ՇՈՒՇԱՆ,
Զը ճանչցած մէկուդ մ'ըսեր, «ապուշ, ANE...»։

Պերճ ուսումնատենչ, իսկ անգին ԳՈՀԱՐ,
Կ'ըսեմ քեզ, եղի՛ր վիճակէդ գոհ յար...։

Ու մեծահաւատ, բարեպաշտ ԵՍԹԵՐ,
Գիշերէ գիշեր երգէ. «Սուրբ ես, Տէր.. ։

Սալօրինիին տակ մարող դու ՌՕԶ,
Սիրէ քու հետդ կուռող սեւ ԽՕՌՈՁ։

# ԹՐՔԱՍԷՐ ԲԻԷՌ ԼՈԹԻ



## ՍԱՐԿԱՒԱԳԻՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԲԱՑ ՆԱՄԱԿԸ

### Ուղղուած Բիէռ Լօթիի

*Ազնիւ Պարո՛ն.*

*Մեծ հաճոյքով կարդացի մեր ազգային թերթերուն մէջ Օսմ. Ազգ. պաշտպանութեան մարմնոյն կողմէ իբր շնորհակալութիւն ձեր Թուրքիոյ դատը պաշտպանած ըլլալուն առթիւ ձեզ եղած այն պատուաբեր և գնահատելի առաջարկը, որով կուզուի Օսմանեան Մայրաքաղաքին մէջ ձեր անունին նուիրուելիք փողոցով ձեր արդէն իսկ աշխարհածանօթ անունը անգամ մ՚եւս յաւերժացնել անշուշտ:*

*Արդ, Ազնիւ Պարո՛ն, քանի որ դուք ճանչցուած էք արդէն իրապէս բարեկամ Թուրքիոյ և փափաքող անոր ճըշմարիտ յառաջդիմութեան ու բարեզարգութեան, որոց համար ես ալ՝ իբրև Օսմանցի Հայ ի սրտէ ցանկացող ու լիաշուրթն մաղթողներէն եմ մին, ներեցէ՛ք համարձակութեանս որ գամ ներկայ բաց նամակովս խոնարհաբար առաջարկել ձեր ազնուութեան որ Կ. Պոլսոյ մէջ ձեր պատուական անունին նուիրուելիք փառաւոր ու շքեղ փողոց մը ընտրելէ աւելի*



*նախամեծար համարիք Օսմանեան բնակչութեան չքնաղին՝ աւելի ճիշդը՝ Պոլսոյ այն անուշ ջուրերուն զոհ եղած ու այսօր շուրջ տասներեք տարի բոլորովին երեսի վրայ լքուած գիւղ մը — Խասգիւղը — ընտրել, որ Բիէռ Լօթի անունը կրէր գէթ, քանի որ Օսմ. Վեհապետներու օրով Պոլսոյ Մայրաքաղաքին մէջ ամենէն փայլուն չքնաղը բոլորող այդ երբեմնի Խասգիւղը, որ օրրանը կամ վառարանը եղած էր երբեմն Օսմանեան հայրենիքին մեծամեծ ծառայութիւններ մատուցանող կարկառուն հայ դէմքերու, այսօր բոլորովին անշքացած, բարձի թողի եղած վիճակի մէջ կը գտնուի դըժբաղդաբար:*

*Ուստի, Ազնիւ Պարո՛ն, վստահ եմ որ ձեր անունը նուիրելով այդ պատմական գիւղին՝ Օսմանեան տարեգրութեանց մէջ անջնջելի յիշատակ մը թողլէ զատ, ձեր անունին հմայքով՝ մեռած գիւղի մըն ալ վերակենդանութեան պատճառ պիտի հանդիսանաք:*



Հրատարակուած «Հեռաձայն»ի մէջ, Ա. Տարի Թիւ 14—1395 Երեքշաբթի 5/18 Փետր. 1913:

# Թովմաս Աճէմեան

Դէմք մը կայտառ, կլորիկ գիրուկ,
Միջահասակ, սեփսեւ մօրուք.
Զուարթերես. սակաւ ինչ բուխ,
Ճակատ բոլոր, լեցուն մէկ գլուխ։

Դեռ տարիքն իր երեսուն հինգ,
Քաջահըմուտ հայկաբան մ'ինք.
Պէրպէրեանին բազմող աթոռ,
Կեդրոնական պորտի ատոր...։

Իբր ուսուցիչ — յոյժ վատնող քիրտ —
Ունի սաներ ոչ նուազ կիրթ.
Պարզ անունին լոկ համակ իր.
Որոնք իրեն միշտ համակիր։

Սա բնականէն խի՛ստ պերճախօս,
Կրնայ դասեր տալ, իսկ քարոզ.
— Չը նկատուիր եթէ ամօթ —
Վարդապետաց իսկ յաւակնոտ...։

Ո՜հ, սա՛ այնքան ազնիւ բարի,
Որուն շուտով մարդ կը փարի.
Քաղցրալեզու մ'ինք, մեղրակաթ,
Տոկուն կամքի տէր զերդ երկաթ։



Ձայնն իր մերթ խրոխտ եւ մեր դողդոջ,
Այո՛ն՝ այո՛, իսկ ոչն՝ ո՛չ...
Տոփուն սիրտ մը լայն կուրծքին տակ,
Հոգեբան ինք, հանրագիտակ...

Ամուրի մ'էր երբ տակաւին,
Կրէր իր մէջ անչափ *աւիւն*...
Գեղեցկահիւս բան արտադրիչ,
Խիստ քիչ անգամ շարժէ իր գրիչ։

Փակուած գտնես զենք տա՛ս անգամ,
Մէջ իր խուցին յօժարակամ.
Խորասուզուած հո՛ն առանձին,
Մէջ գիրքերուն ու իր անձին։

Երբ Հորիզոնն մտքին աղօտ,
Քաշէ առատ լաւ գթախոտ.
Որուն տուփն ալ գործ նամբօնցուող,
Մասունքի պէս միշտ կրէ իր ծոց։

Մինչ ինք ներկայն խորհող մէկ բնոյթ,
Կապրի խաղաղ. անվիշտ անփոյթ.
Հեռու փառքէ անսեթեւեթ,
Խորհրդածող մը ետեւետ։

# ԳԱՏԸ-ԳԻՒՂՑԻ ՕՐԻՈՐԴԸ

Գլխուդ մազէն խի՛ստ շատ աղջիկ...,
Անոնց քով ո՛հ, բնաւ վախ չի՛ք.
Մէկ մասն է միշտ ազատամիտ,
Որ զարգացեալ, որ պարզամիտ...։

Նախ՝ *հայլայֆ*ին բուն դասակարգ,
Շատ քիչ անգամ կը նստի կառք.
Գլխէն բռնէ մինչեւ կօշիկ,
Գիտէ հագուիլ միշտ քայլել շիք...։

Հագուստ, գլխարկ երբ Տէմօտէ,
Իսկոյն փոխէ, զի ամօթ է.
Տունին մէջ իսկ նա միշտ *զօզէթ*,
Չունի բարեւ փոքրերու հետ...

Սիրէ խօսիլ, սա՛ Գաղղիերէն,
Կը հառաչէ սրտին խորէն ..
Յաճախ տեսնէ գիշերն երա՛զ...
Նստած կուտէ հօրը մերաս...։

Մերթ հաւակնոտ, ինք մերթ յարմառ,
Կղզի կերթայ ամէն ամառ՝
Հագուստին հետ՝ փոխելու օդ,
Անուշաբոյր քսուելով հոտ ..։



Գիրգ մատներովն իր ներդաշնակ,
Յաճախ կածէ ան լաւ դաշնակ.
Մերթ կը զարնէ ի՛սկ *մանտօլին*,
Կ'երգէ ցաւերն Անատօլին...։

Սընունդն է իր *պօլքա* ու պար,
Դէմքին տալով համեստ շըպատ.
Կերթայ թատրոն ու *սինեմա*,
Կանչէ աղուոր «*Զամա՛*...» «*Մամա՛*...»։

Օրը օրին կարդայ լրագի՛ր,
Շատ քիչ *Ռօման* արկածայի՛ր...
Իր հօրիզօնն երբ աղօթէ՝
Նա ջերմագին ա՛լ կ'աղօթէ...

* * *

Մէկ դասակարգն ալ՝ որ միջակ,
Գիշեր ցորեկ քաշէ վիճակ.
Ու միշտ գոչէ «Սուրբ թագաւոր,
«Ա՛խ խըսմէթ մը ինձ բաղտաւո՛ր...»։

Պէտք չէ խօսիք, ո՛չ իր մասին,
Աղօթագիրքն է միասին...
Միշտ կսպասէ ան օրէ օ՛ր...
Ու իր սէրին կարդայ օրօ՛ր...։

Ըլլայ առողջ ինք կամ տըկար,
Ան օրն ի բուն կը կարէ կար.
Իր տունին մէջ, ուրիշին քով,
Ան գոհ սրտով ու հաճոյքով։

Որը՝ գիրուկ... որը՝ նիհար...
Նորոյթներու ինք սիրահար,
Նա կ'որոնէ, իզո՛ւր, ո՛հ, յար.
Մաշած սրտին մէկ գանձ գոհար...։

Մեկն օրօրուի յոյսերով սի՛ն,
Որը կուզէ լաւ ամուսին.
Որը մանչ մը շիք սալօնի,
Հոգ չէ թէ նա ո՛հ խելք չունի՛։

Պատուհանին տակ՝ մօրը քով,
Որն ալ սիրէ մարդ մօրուքով.
— Զէ վարդապետ ան ո՛չ տէրտէր,
Որ յոլ քարդէ իրեն *տէրտէր*:

Բնոյթն է իր մերթ յեղյեղուկ,
Կը գործածէ ամէն հնեղուկ.
Միշտ սնապարծ իւր սիրամոլ,
Մէկը գտած չէ դեռ ամոլ...։

Ամառները ամէն իրկուն,
Մինչ կէս գիշեր ծախսած իր քուն,
Դաշտ-գիւղցի մեր հայ աղջիկ.
Կը թռչրտի, իբրեւ չղջիկ...։

Պտոյտի տեղն է իր յաւէտ,
*Ծոտա-պուրնին* ա՛ն օդաւէտ.
Մերթ *Դուշ-տիլի*, *Ուզուն-Չայիր*,
Բայց հո՛ն իրենց, ո՛չ, մի՛ նայիր...։

Կան առնից մէջ լաւ դերասան,
Որոնք դիւթեն ո՛հ դեռ աս ա՛ն...
Ու թեւ թեւի միշտ ժուռ կուգան...
Իրենց լապտեր՝ միշտ լուսընկան։

Իսկ երբ անձնիք մէկ փողոցէն,
Սիրվարդ աչքեր ձեզ կը խոցեն՝
Կըսես «այս ի՛նչ կրակ ու բոց է՛ն,
«Ա՛հ, շուտ-փախչիմ այս հրնոցէն...։»



# ՃԱՐՏԱՐ ՆԿԱՐԻՉԸ

*Վըրձինով նուրբ քու խիստ ճարտար,*
*Մաքուր գծէ՛ մէկ մէկ նըկար,*
*Անըրջակա՛ն, անհորիզո՛ն...*
*Անդրաշխարհ մը պատկերող հո՛ն.*
*Հրափայլ ցոլակ, անվերջ արեւ,*
*Նորոգ կեանք մը հո՛ն արդարեւ.*
*Բայցեւ բացուած նաեւ երկին*
*Անվերջ ցնծուն հո՛ն մեր հոգին,*
*Անտէ՛ղ միմիայն խինդ երգ ու սէր*
*Վարդ ու շուշան անթարշամ յար,*
*Մահն ալ դժխեմ անկէ հեռո՛ւն*
*Երկրի վրայ ձե՛րկ, մոլորո՛ւն...*
*Անմահութեան տեսքովն ան գէթ,*
*Նկարած, զըզուն գծուած յաւէտ:*

ԱԴԱՄԱՆԴԱԿՈՒՌ ԿՈԹՈՂԸ

Սահակ Մեսրոպեան հայ նշանագրերու 1500 ամեակին առթիւ
Պոլսահայ Ոսկերչաց կողմէ նուիրուած Ս. Էջմիածնի Թանգարանին:



Սոյն լուսանկարը առնուած է ՇԱՆԹ հանդէսէն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԿՈԹՈՂԻՆ
413 — 1513 — 1913

Ոսկի մատին Մեսրոպայ,
Հանճարեղին Սահակայ.
Այս Յիշատակ Ոսկեծոյլ,
Ջոր Ոսկերչաց կազմեաց հոյլ:

# ՀԱՅՈՒՆ ՄԵԾ ՓԱՌՔԸ

## ՍԱՀԱԿ ՄԵՍՐՈՊԵԱՆ ՏԱՌԵՐՈՒ

### 1500 ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻՒ

Արտասանուած խաղճեղի Ս. Ստեփաննոս եկեղեցիին մէջ

Որբագնասնեղծ Տաճարին կամարին տակ այս վսեմ,
Մենք՝ Հայերըս որ այսօր խռնուած ենք արդ կըսեմ.
Յուսով լուսով առլցուն, բերկրապատար խնդագին,
Պարծանքով մը կը տօնենք. ամենամեծ Փառքն Ազգին:

Աշխարհ լսէ՛ թէ Հայն ալ բազմաչարչար, վիրաւոր,
Ազգ մըն է վեհ, Մեծափառ, Գոյութիւնն ալ դարաւոր,
Արհաւիրքէ արհաւիրք. հալածանք, հալածանք,
Օտարներու լուծին տակ պահած է ան իր պարծանք:

Թամայն հայուն այդ մեծ փառք լսէ՛ այսօր հայ ոգի՛,
Նըշանագրին գիւտն է ան, որով Մեր միտ բորբոքի.
Թախծանապէս Տօնեցէ՛ք հայ Տառերուն այս հանդէս,
Լոյսի, լոյսի մշակներն ալ ո՜հ մ՚առնե՜ր ղո՛ւք անտես...:

Կիսակործան բագիններ՝ խաչաղրոշմուած հայուն հէ՛ք.
Անկրկնելի դարերու մէջ հայն չ՚ունէր տառ մ՚երբէք.
Ուսուցիչն ու աշակերտ Աւազանին ու նստոր,
Սուրբ գիրք գրէր ու կարդար՝ լոկ տառերով խորթ, օտար:

Աղօթք, մաղթանք. Սրտագին. խնկանուէր պատարագ.
Կ՚երգէր առաքէր ա՛ն Երկինք՝ աղճատ լեզուով արտակարգ.
Խուժէր Հայը տարաբաղդ խաւարին մէջ անդանոր,
Եւ օտարին լեզուին մէջ տեսնէր աղէտ նորանոր:

Ո՛հա՛ յաւէտ խնկելի Զոյգ մ՚Երկնատուր բո՛ւն պարգեւ,
Երան Մեսրոպն ու Սահակ Մեծ Հայրապետն այն Պարթեւ—
Թունդ զգացմամբ տոգորուած,՝ մեծ հաւատքով առլըցուն,
Յօրացուցին նոր տառով մեր Հայրենի վեհ լեզուն:

Ազատեցին օտարին ծեռքէն աստ՛նք Ազգն հայոց,
Անխոնջ, անվերջ աշխատութեամբ, անհարազատ լեզուէ հո՛ծ,
Իմացական ոգիով շամբեցին մեզ կաթն Ուսման,
Ընթացածեղծ նոր տառերով Իշխաններու խսկ այնքա՛ն:

Գերաշխարհիկ հոգինե՛ր, հայութեան ղուք փառքն յաւէտ,
Նախարարող հայ լեզուին, ղուք մշակներ խնկաւէտ.
Խիւսած տաղըս իմ անուամբ ընդելուզուած սրտագին,
Նախանձոն Ձեր Անունին եւ Յոքնեան Մեծ Փառքին:

# ՅԱՐՈՒԹԻՒՆ Գ. ՄԸՐՄԸՐԵԱՆ

Այր մը պարթեւ՝ լայն ճակատ.
Գլուխ մեծղի ու ճաղատ.
Մօրուս երկար — գիսախռիւ —
Հայեացք խոհուն, շա՛տ ազնիւ։

Իմաստասէր սա՛, գրագէտ.
Ոսկելեզուին հրագէտ,
Ամբողջ տաղանդ ինքն, հանճա՛ր.
Բնութեամբ երկչոտ ու անչար։

Մարմնով առոյգ ինքն՝ որով՝
Լեզուն գրիչն ալ խիստ կորով,
Իսկ ձայնն ազդու, զերդ փանդիռ.
Մինչ վէճի մէջ ջղագրգիռ։

Վարքն մաքուր զերդ Սոկրատ,
Գութն իր սրտին մէջ առատ.
Բերնէն ելած չէ բան չար,
Կերածն է իր միշտ բանջար։

Մերթ *ճնճղուկն,* մօսիւէ,
Բայց աւելի Պօսիւէ.
Երբ կը խօսի սա մի ճառ,
Գիտուններու իսկ կաճառ։



Բարետոհմիկ անձն այս՝ զիրգ,
Կը վերծանէ յոյժ Ս. Գիրք.
Բայց սպառել մելան թուղթ,
Կարծես է իր միակ ուխտ։

Ցից ձեւ մ'ունի քալելու,
Նըշանաբանն ալէլու.
Կաղօթէ եւ անբարբառ,
Հոգւոյն խորէն գրաբառ....։

Որքան որ ինք բարեպաշտ,
Նոյնքան մըն ալ բընապաշտ.
Սիրահար լուրթ երկնքին,
Մինչ գեղեցկին միշտ կրկին....։

Յաճախ խոկ մը մանաւանդ,
Հոգին քաղձոտ ու հիւանդ.
Ձերդ յուսահատ սրտաբեկ
Չէ հաշտ մահուան հետ երբէք։

Իտէալն է իր մէջ կեանքին,
Մընալ մինչեւ վերջ անկին.
Թերեւս մտնէ վանք օր մ'ալ,
Դառնայ կղեր մը *նորմալ*։



# ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՆԵՐԸ

## — ՈՒՐՈՒԱԳԾԵՐ —

Ակնոցը քիթին,
Հայ բարլամէնթին
Մերթ վարիչ գիրուկ,
Ազարեան Մանուկ:

Երկրորդ ղեկավար,
Ու ամբոխավար,
Շնորհք Երկնատուր,
Հրանդ Ասատուր:

Ամէն օր հո՛ն հո՛ս
Ցամառ պերճախօս,
Անմարսելի հապ,
Գրիգոր Զոհրապ.

Կորուկ անաչառ,
Դատող չարաչար
Երկնաւոր պարգեւ,
Փափազեան Պարգեւ:

Բարեձեւ մեծ - անձ,
Դիզող ոսկւոյ գանձ.
Մեծապես հերոս,
Հալաճեան Պետրոս:

Միթինկներուն հո՛ն,
Խօսուն կիկերոն,
Վէճերու որդին,
Շահրիկեան Արթին:

Խօսքերն իր առատ,
Ու բարեխըրատ,
Առթող միշտ հըմայք
Խօճասարեան Հայկ:

Նրբակազմ մէկ մարդ
Բայց «Ազատամարտ»
Սիրտ չինուած ռումբէն
Զարդարեան Ռուբէն...

Դանկին մէջ, միշտ ամպ
Ձայնն իր գոռ ու բամբ,
Անխոնջ քննադատ
Հայկազն Միհրդատ.

Գրիչ մը խի՛ստ յամառ
Որ ձմեռ ամառ
Ցայտէ հուր, վառօդ
Այն է մեր Երոս.



Թիկնեղ ու խոշոր,
Դէմքը միշտ խոժոռ,
Գոռացող ներսէս,
Օհանեան Ներսէս:

Կար մէկ ժամանակ,
Զունէր «Ժամանակ»...
Ու ծակ էր քսակ...
Գօչունեան Միսաք.

Սիրտ մը քար ու քանդ
Մըտած «քանդէ քանդ»,
Շնորհքն իր բիւր հատ!!!
Սա Սմբատ Բիւրատ:

Ղեւոնդ, Դէորդին
Ջիղըն ու հոգին
Լարուած մեքենան,
Նոյն Ներսէս Թիւլեան:

Ճըրճըռուն ճըպուռ,
Ղեւոնդեան մը կուռ
Ու խաւար գաւիթ,
Մովսէսեան Դաւիթ:

Դէմք սիրո՛ւն, մօրուօք
Ինք՝ հըրաբորբոք
Դաշնակցութեան դիք՝
Դերձակեան Օննիկ:

Փառատենչ մէկ անձ,
«Ծուռնալներ»ու գանձ
—Լոյսի մէջ պաւկիս—
Էսմէրեան Սարգիս:

Հրաշակերտ մէկ գանկ
—Բառերու մեծ հանք—
Լեփլեցուն խելք հոն
Կիւրճի՛ ա՛ն Մելոն:

Ինք պուէտ հաստուած՝
Ցանգերու աստուած՝
Սրտերու փարոս՝
Ալեքսանդր Փանոս:

Երեսն անխինդ իր,
Ծեծող միշտ խնդիր,
Լեզուն իր ասպար,
Որստակես Գասպար:



Անխոնջ բանասէր
Միշտ վառ սրտին սէր,
Պարզէ մերթ դրօշակ
Ալպօյեա Արշակ...:

Մեծ բալթօն վըրան՝
Դարուս Ամիրան,
Սիրող ստամնաթան,
Մեր Մարկոս Նաթան։

Տաղանդաւո՛ր, փո՛րձ
Ջըղուտ երկրագործ
Ատող դա՛ խաւար,
Տօքթօր Տաղաւար...։

Դէմք մը չոփ չոր պա՛ռ,
Ճիշտ Աւագ ուրբաթ,
Մէպուս հայ Ազգին ?
Տէմիր Գարեգին...։

Միտք մը «սաւառնակ».
Օդերուն խառնակ
Յաճախ հարբուխ ա՛ն՝
Ծանօթ Երուխան...։

Սիոնի պատգամ
Սա՛ անվըհատ կամ
Խղճամիտ Մասօն
Պէկեան Հայկազուն։

Մեծագո՛րծ!!! հանճա՛ր!!!
Լըպարավաճառ,
Լեզուն իր խրթին
Ճիհանկիւլ Արփին,

Ծամթած մէկ «Հնչակ»
«Կոհակ» մ՚իր վիճակ,
Բաղխի աջ, ահեակ.
Արամեանց Հմայեակ։

Դատարկ թնդանօթ
Ցնցող միշտ ա՛ն օդ
Մեծ դահլիճին անդ,
Պէյազեան Երուանդ։

Նախահայրն Ադամ,
— Վարչութեան Անդամ —
Մինչ հոգ մըտքին խորք
Ալանեան Գէորգ...։

Հայ մարդ մ՚առաջին
— Հատակով միջին
«Երկրորդ» ձայն թէնօռ
Թերզեան Տօքթօռ.

Հայաթեան Տիպար,
Խիստ քաղցրալարբառ.
Գործն իր խուռներամ,
Թորգոմեան Վահրամ...։

Նահապետական,
Թիփ մը պատուական.
Թէ ո՛վ խորհիս ա՛ն,
Երուանդ Խորասան։

Գլուխ մը հասո՛ւն,
Ինք ջըղուտ խօսուն.
Ամուրի, վա՛հ, ա՛ն,
Թէքէեան Վահան...։

Պըռըռցած յօնքեր,
Անկաշառ պանքէր,
«Հաշիւ»ի ռէփօն.
Սահաթճեան Լեւո՛ն...։



Առատ իրեր գեր,
Բայց ձայնը կերկեր.
Խօսքն իր ո՛չ բունուկ,
Վռամշապու Մանուկ...։

Բուն իրաւագէտ,
Ծերուկ բայց կոգէթ,
Դատող սալիմ ա՛ն,
Գարեան Սեփան...



Փաստաբան նիհա՛ր՝
Վանքի հոգերուն,
Խնդրով չարչարի.
Ան Յակոբ Պահրի...

Խօսող միշտ սա՛ ճառ,
Փրփրուն մէկ աճառ.
Միտքն ու միտ խըռով,
Հմայեակ Խօսրով...

Երբեմն սրտով «Շա՞նթ»
Շինած սրտին խանդ...
Դարձած բէլէֆօն,
Սեդրոսեան Լեւոն...։

Ինք կոնտ ու կլոր,
Կարկառուն մէկ փոր,
Քալող միշտ արագ.
Այն Անտօն Թարագ։

Գանկ մը մեծ, ճաղատ,
— Տեսա՞ք յաճա՛խ ատ —
Կաղզուրիչ հայ ա՛ն,
Վա՛հ, Օննիկ Զայեան։

Լաւ յուսանըկար,
Պեխերն իր երկար.
Առոյգ ձիգ իրան,
Երկանեան Տիրան։

Ինք գեղեցիկ մարդ
Ժողովքին իսկ զարդ.
Դէմքին բուսած վարդ.
Գարակէօզ Եդուարդ։

Սուրբ մը բարեխօս,
Արք-Եպիսկոպոս.
Թէ ո՞վ ան խորհիս,
Ծերուկ Գրիգորիս։

Ճըշմարիտ համբաւ,
Մատենագիր լաւ.
Ոսկեդարն յիշէ.
Դուրեան Եղիշէ։

Իսկ Կայիափա,
Երբեմն Տեղապահ.
Որ չատ թանկ ունի,
Վահրամ Մանկունի։

Բարենորոգման,
Անխոնջ ախոյեան.
Խօսուն գիրք սարեակ,
Դիմաքս Հմայեակ...։

Սիրան հոգին անդին՝
Նետած մէջ փոնքին,
Տքնող մ'անվհատ.
Գազազեան Սմբատ...։

Դէմք մը լուսազարդ,
Դեռ երիտասարդ.
Էր փոխանորդ գօ՛նդ,
Այն Դուրեան Ղեւոնդ։

Մէկ խի՜ստ աւաղ անձ,
Փոթորիկ վաղանց,
Ցայտող մերթ կայլակ.
Գրիգորիս Պալագ...։

Մարդ լիակատար,
Ճաղատ իր կատար.
Հեռատե՛ս... վարպե՛տ,
Գնել Վարդապետ ?։

Մաքսուտեանի սան,
Ազուար դերասան.
Սիգաճեմ եղնիկ,
Պապաեան Եղնիկ։

Զայն մը բիրտ ուժեղ,
Ճիշտ «Վահաէգի չեխ».
Բարթող միշտ տէրտէր,
Էֆսէրնեան Տէրտէր։

Պարկե՛շտ, բարեկիրթ,
Տքնող թափող քիրթ.
Եւ արդարադատ.
Այն է Տէր Տրդատ։

Յաճախ անձն հոգին,
Նետած մէջ կրակին.
Շարժած սուր սուրին,
Այն Սարգիս սուրին։

Վարչութեան ազդու,
Էր տեղեկատու.
Ինք կարճուկ մարտիկ,
Որ Ոսկան Մարտիկ։

Թիփ մը փառաւոր,
Որ տաղանդաւոր.
Ունի դիրք գերամ,
Հայանեան Արամ։

Միշտ Այրիախնամ,
Զրսեր կը վախնամ.
Գործէ «անթոշակ»
Սահապալեան Ժագ։

Աշխարհաշրջիկ,
Կղեր մ'իրպէս չիք...
Ծանօթ չատերուն,
Մաղաքիա Տէրուն...։



Քահանայ մ'աւագ,
Ճշմարտին զաւակ.
Տիպար Սուքի ա՛ս,
Ճանչցի՛ր՝ Սուքիաս...։

Փայլուն ոսկերիչ,
Բարձր հոգւոյն թըռիչ.
Ինք զուարթագին,
Սարաֆ Արքագի՛ն.

Մէկը Տնօրէն,
Գործէ լրջօրէն.
Տայ երախայրիկ,
Աբրահամ Հայրիկ...։

Կարիճ մը, հայդուկ,
Գոռացող «վա՛յ դուք...»
Ինք միշտ զուարթ կէս,
Ու ծանօթ Վարդգէս...։

Դէմք մը թունաթափ,
— Իսկ ազդու նա՛ տապ —
Վեզարի վայել.
Աճեմեան Միքայել...։

Մօրուք մը կարմիր,
Դեռ այտեր թարմ՝ իր.
Որ չկայէ խաբել,
Երեցեան Աբել...։

Եռանդն իր հսուն,
Ցնցած մերթ Սասուն.
Երբեմն ամուր ա՛ռ,
Հնչակեան Մուրատ...։

Սաղիմեան Տրիբուն,
Նախաքննիչ բուն.
Անվկանդ Վահան,
Սուրէնեան Վահան։

Հրապարակագիր,
Խրուպտ հագագն իր.
Դէմքով անդրի ա՛ս,
Երուանդ Անդրէաս։

Մարդ մը բաւական,
Սեւ՝ եթովպակա՛ն...
Շիրին մ'արդարեւ,
Որ Թագւոր Արեւ...։

Մարմնեղ ու պարթեւ,
Հոգին իր թեթեւ.
Կարդայ միշտ քրօնիկ,
Տէրունեան Օննիկ։

Ինքը երկրաչափ.
Քայլերն համաչափ,
Խիստ ճարտար քարտաշ.
Յովսեփեան Արտաշ։

Զինուոր դեղագործ,
Դաշնակցական փորձ,
Գիտնալ թէ հաճիք՝
Հմայեակ Լանիկ։

Սա ալ հարո՛ւստ, ջո՛ջ,
Զայնն իր մեծագոչ...
Որ կամաչէ լալ,
Գրիգոր Ճելալ...։

Մաքսուտեան ա՛ն,
Դատաւո՛ր, պաշտպա՛ն
Կարծեցեալ փրկիչ...
Յարութիւն Մոսէիչ...։

Լուսթեան օւկան,
— Խորհի մինչ դրական —
Թաւութեան նոխազ՝
Տօֆրօն ա՛յն Մայխաս...։

Հաւ յանձնակատար,
Ջունի դուլ դադար.
Նիրհէ իր մուսան,
— Զարեհ Խօսրսան —։

Փափկասուն. քնքո՛ւշ...
Ճարտար վիրաբոյժ.
Ճակատ քրտնաթո՛ր...
Նաղուպեան Տօֆքոր։

Գեղջուկ բայց անչա՛ր,
Դատուած չարաչար...
Ուսին խաչ ունի,
Յուսիկ Բաչունի.

Խոհուն միտք մը լո՛ւրջ,
Մալիէր մուրճ...
Որ սրտեր սրտփէ,
Պէրպէրեան Սրո՛վբէ...։

Իր խօսքին նմոյշ,
Մինչև վերջը «մո՛ւշ...»
Հափ գերդ եղեամ.
Կարապետ Գեղամ։

Հատակ մը՝ նոճի՛,
Տխպար մ'ինք ջոջի...
— Խեղճեր սուճն երթա՛ն —
Սա՛ Կիւմիւշ Կերտան։

Որ նորապսակ,
Լեցուն իր քսակ՝
Միջադեղջ ջոջի՛կ.
Սրվանեան Խաչիկ։

Երբեմն Պեռնդեան,
Երբեմն «հակա...» ա՛ն.
Ողմայոյց բերա՛ն,
Շիրինեան Միհրան։

Հայ գիտուն մը որ,
Խակայ ամէն օր.
Խօսի սրտաբուխ,
Պօյանեան Յակոբ։

Թունդ Ազգայնաքի,
Մերթ փափաքիչի.
Դաշնակից... փլատում,
Այն Սերեան Հերում։

Հօտին նուիրուած
Կերն իր՝ աղ ու հաց...
Խորհի մինչ խորէն,
Այն խիկ Տէ՛ր Խորէն...։

Ինք թիկնեղ, գի՛րուկ.
Սև, կարճուկ մօրուք,
Բարեգործ ա՛հ, ա՛ն...
Եսայեան Վահան։

ՍԱՐԿԱՒԱԳԻՆ ՔԱՐՈԶԸ

# ՄԵԾ ԳԱՂՏՆԻՔԸ

Պ. ՖՐԷՏԷՐԻԿ ՄՈՒՐԱՏԻՆ

Թէ իրապէս կայ հանդերձեալ նոր կեանք մ'ա՛ն,
Անվերջ, անսուգ, առանց ցաւի, ի՛սկ անմահ,
Յաւերժական, մինչ անխախտան ու անհո՛ւն,
— Կարճ իմաստով Արքայութիւն իր անուն,
Որուն միայն սիրտ հասնին Սուրբն, Արդար,
Կամ որ պահեն Տասնաբանեան անվրդար,
Կամ այն որ կրէ սիրտ մը մաքուր ու անբիծ,
Հագած է կամ մինչ իր հոգին սուգ, թախիծ
Թերեւս նոյն ինքն իսկ շուարէր սիրտ՝ Աստուած,
Թէ ի՞նչ բանի համար այդ կեանքն է հաստուած,
Քանի սիրած՝ հո՛ս, Արեւին լոյսին տակ՝
Սուտն ու պատրանք, կեղծն ու կեղծիք բովանդակ,
Խեռն ու նախանձ, ատելութիւն, քէն ու ոխ.
Խարդաւանանք, դաւադրութիւն տուն քանդող.
Մի՛շտ թշնամանք, մի՛շտ մատնութիւն ու նախր.
Մահասարուտ դամբաններուն իսկ կընձիռ...։
Թագակիրներ ու իշխաններ համօրէն՝
Մերթ առաքուր առած իրենց խիղճն, օրէն,
Յաճախ անյագ շահու փառքի համար ցոլ
Ազգեր մատնեն հուրին, սուրին անողոք...
Դատաւորներ, փաստաբաններ անզգամ,
Վարեն դատեր իսկ անիրաւ շա՛տ անգամ...

Մինչ բարեգործ հնչակուած կարգ մ'արարած,
Առաքինի կեղծ անունով շրջապատուած,
Մինչ կը ձգտին փառքի համար ջոկ անբաւ,
Թողուլ յաւէտ երկրի վրայ մե՛ծ համբաւ.
Այն մարդկային ամբողջ զանգուածն իրական
Տառապողն ու աշխատող որքան կան,
Հաւատացեալ, թէ անկրօն թէ կռապաշտ,
Մինչ իրարու հետ ոխերիմ ու անհաշտ...
Հարուստն․ աղքատ․ գիտուն, տգէտն ու ռամիկ...
Քաղաքակիրթ ճանչցուած մարդն աշխարհիկ,
Ըլլայ նոյն իսկ ա՛ն երկրացի թէ օտար,
Լումայափոխ, պաշտօնատարն ու նոտար,
Վաճառական, արհեստաւոր ու մշակ,
Անխղճութեան ճարեն իրենց հաց, բաժակ
Ճշմարտութեան անունով ալ ամէն օր
Բիւր նախճիրներ գործէ նոյն իսկ կրօնաւոր...
Թէ ձեռք առնենք Արդարութեան իսկ նժար,
Թերեւս գտնենք մէկ արդար իսկ խիստ դժուար.
Միլիոններով մարդիկ այսօր նենգ ու գող,
Միլիոններով կան սրիկայ, արբեցող,
Բիւրաւորներ մեղքերու մէջ տուայտին,
Բիւրաւորներ իրենց ճամբէն կը զայթին...
Առնենք, ամէնքն, մահկանացու հողեղէն,
Տարուբերին ամէն տեսակ հողմերէն...
Ուրեմն ըսենք աշխարհն ամբողջ մեղսակիր.
Բիւր մեղքերով ծանրաբեռնուած է երկիր,
Ո՞վ արդեօք ո՞վ, արդար, ըսէք, ո՞ր այն մարդ
Ալեծածան այս կեանքին մէջ խիստ ու բարդ.
Ո՛ն ցոյց տո՛ւր ինձ զէթ անբասիր մէկ մարդ դո՛ւն,
Որ նկատուի իսկ երկնաւոր զուարթուն,
Կրէ՛ ճակտին սուրբ դրոշմը երկնային,
Խիղճն ու միտքն ալ արդարութեան մի՛շտ նային...
Եթէ դատենք մարդիկն ամբողջ խստօրէն
Անխիղճներն են բուն առաջին Անօրէն



Որոնք կամքէ անկախ գործեն ապօրէն
Տալով անդարձ մահուան վճիռ ջրբօրէն...
Ուրեմն ըսենք, աշխարհն ամբողջ դժոխք բորբոք
Արքայութի՛ւն՝ մտացածին բառ մը ջոկ...
Սակայն երբոր մեր ձեռք առնենք եւ կ'ըսեմ,
Ա՛յն Մեծ Մատեանն Օրէնսդրին իսկ վսեմ
Որմէ բղխին Արդարութիւն ու օրէն
Ճշմարիտ լոյս, անխաբ յոյս, սէր համօրէն,
Հո՛ն կը գտնենք հիացումով մը վերին
Սա՛ հատուածը՝ զարմանահրաշ ու խորին..
«Օթեւաններ՝ հօրս տունին մէջ շա՛տ կան»
Ահա՛ խոստում այն Նոր կեանքին գերբնական,
Որ որքան որ ներկուռ, անհա՛ս, խորիմաստ.
Նոյնքան կրնայ խօսիլ խղճին իսկ անաստ...
Մարդ որ ծնած է մեռնելու մի օր զէթ
Ի՛նչ, ա՛հ, ըսէ՛ք, անէանա՞յ պիտ' յաւէտ...
Ա՛ն որ գիտէ խորհիլ, դատել ու կ'ըզգայ.
Արդեօ՞ք յաւէտ պիտի դառնայ անզգայ...
Ծաղկի բոյրի նման ցնդի՞ պիտ հոգին,
Որ վերանայ, յաճա՛խ մինչեւ վե՛ր, երկի՛ն,
Հո՛ն՝ ուր անթիւ ու անհամար աստղեր կան,
Եւ որ ամէնքն օրէնքով մը կը դառնան...
Թերեւս են իսկ, անոնց մէջ միշտ, հո՛ն, անտեղ,
Այն ակնարկուած օթեւաններն փառաւեղ...:
Թերեւս մարդիկ ալ որքան որ չար, անկարգ
Որքան իրենց ապականած վարքն ու բարք
Հո՛ն ունենան իրենց յատուկ դասակարգ,
Վայելելու երանաւէտ այդ նոր փա՛ռք,
Ունին եթէ ճշմարիտ յոյս, հաւատք, սէր,
Հասնելու այն անանց կեանքին անըստուեր
Զղջումով ալ եթէ գտած են ներում
Իրենց անթիւ ու անհամար մեղքերուն,
Իսկ մերժուածն այդ երկնային նոր կեանքին—
Որ աշխարհի համար գաղտնիք մը անմեկին,

*Անշուշտ դժուար նոյնքան հարցումն ալ կնճռոտ*
*Մարդ կը մնայ միշտ իր մէջը վարանոտ ...:*

***ՅԱՐՈՒԹԻՒՆ Տ. ՄԱՆԱՎԵԱՆ***
**— ՍԱՐԿԱՒԱԳ —**

Եաֆա 8 Նոյեմ. 1911

# Մեր Թերթերը

*Մէկ «Ազատամարտ»*
*Չըկայ դէմը մարդ*
*Նա չոկ բարբառի,*
*Խրատներ բարի...*

*Վերջ «Բիւզանդիոն»*
*Լայն-միտ մարդ մը հոն*
*Խառնէ Թայմըզ-Թան*
*Եփէ իր չոր թան...*

*Մինչ «Աւետաբե՛ր»*
*Միշտ շաբաթաբեր*
*Քարոզներովն հի՛ն...*
*Նիրհէ գլխովին...:*

*Ապա «Ժամանակ»*
*Չունի ժամանակ,*
*Ժողուէ մէքթաղիֆ,*
*Փակէ իր տաղիֆ...*

*Մինչ մեր «Մանզումէ»ն*
*Սրտի յուզումէն,*
*Ո՛հ դժբախտաբար*
*Է կաթուածահար...*

*Իսկ անդին «Կոհակ»*
*Բաղխի ալ անհետ*
*Չունի կեանք մը չաւ*
*Խառնէ իր փիլաւ...*

*Աստուծոյ «Տանար»*
*Հանող ի վաճառ,*
*Ծածկամիտ մի այր,*
*Որ կոչուի Չայրմայր:*

*Իսկ ծանօթ «Կավռօշ»*
*Միշտ պարզած իր դրօշ*
*Օրն ի բուն փողոց,*
*Արակէ հուր ու բոց...*

*Ակընցի «Կիկօ»*
*Կը հագուի շիք օ՛...*
*Մինչ կանգուն մը քի՛թ...*
*Կոտրէ միշտ հաւկի՛թ...*

*Յորչորչուողն իսկ «Շանթ»*
*Մարած արտին խանդ,*
*Ունի մի մանուշ,*
*Որ դառնայ անուշ...*



ՏԻԳՐԱՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ
Ազգ. Երեսփոխան
Եւ քաղաքապետական ժողովի
անդամ



ՎՍԵՄ. ՎԱՀԱՆ ՓԷՅ ԵՍԱՅԵԱՆ
Ազգ. Երեսփոխան



ՄԵԼՔԻՍԵԴԵԿ Վ. ՄՈՒՐԱՏԵԱՆՑ
*Աշխարհական տարազով Զուրիխի մէջ*
*—ՆՈՒԻՐԱԿ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ—*
որ իբրեւ Երուսաղէմի միաբան Եսայի Պատրիարքի արտօնութեամբ այցելած է Եւրոպական զանազան քաղաքներ

# ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆԸ

## — ԱՇՏԱՆԱԿԻ ՈՐԴԻՆ —

### *ՀԱՅՐ ՈՒ ՈՐԴԻՆ*

*Հայրը.*

— Իմ աղուոր տղաս երբ երթաս Բարիզ
Նայէ որ մինչ վերջ ուսմանդ փարիս.
Զըլլայ որ նայիս դու կարգ մը տղոց.
Որ գիշեր ցորեկ կը շրջին փողոց.
Լոկ կը յաճախեն Սինեմա թատրոն.
Ու տարիներով մինչ վերջ մնան հո՛ն...
Գիտցի՛ր Բարիզէն երբ հոս, ապա գաս.
Դու պիտի կազմես իմին ապագաս...։

*Տղան.*

— Դու անհոգ եղիր Սիրելի Հայրիկ,
Ինձ մի մտածէք, սրտով ա՛լ մայրիկ.
Ես պիտի կարդամ հո՛ն ցորեկ գիշեր,
Դասերուս առնեմ պիտի լաւ նիշեր,
Դառնալու համար օր մյաջորդ իմ հօր
Մատով ցոյց պիտ տան աշխարհ ինձ բոլոր...
Թէ Աշտանակի սա՛ է որդին բուն
Թերեւս զարմանաս նոյն իսկ օր մը դո՛ւն։

*
* *



Բաժանման ժամը կը հնչէ ուժգին
Ուրախ է որդին բայց Աշտանակին,
Որ Բարիզ կերթայ, բնականաբար
Նոր համալսարան մտնելու համար
Ու կիյնայ ճամբայ քայլերով մոլոր,
Ողջերթի կերթան ազգականք բոլոր...
Կը ողջագուրուին այսպէս հայր որդին
Որոնց *աչքերէն* արցունք իսկ յորդին...

Կանցնին տարիներ բայց արագ արագ,
—Հարկ չըկայ ըսել ալ երկար բարակ—
Օր մըն ալ յանկարծ տեսնես մեր միւսին
*Շիք բարիզ*իէն բարդիւսին ուսին՝
Գլուխը պօմատէ զլխարկ մ'աչքն ակնոց՝
Ձեռքը գաւազան, *կանդ*եր իսկ-ձեռնոց.
Պոլիս է եկած գիրցած բաւական
Գրպանը դրած *մեծ վկայական*...։

Հայրը լսելով գալուստն իր տղուն՝
Բարիզէն ասանկ վկայուած գիտուն՝
Ընդ առաջ կերթայ՝ շիտակ շոքենաւ
Կես գիշերին մօտ, թէեւ օդ խոնաւ.
Վերէն կը փայլի ընդ աղոտ լուսին
Հայրն՝ որդին գ-ած՝ մեկտեղ կը խօսին.
— «Հա՛յր կըսէ տղան, մէջն ալ Բարիզին
«Ճիշտ ասոր նման կայ հատ մը լուսին»։

— «Հէ՛յ վա՛խ կը գոչէ հայրը, այլայլա՛ծ.
«Որ քեզ կերցուցի ճի՛շտ հարիւր փութ հաց»...։

# ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՆԵՐԸ

## — ՈՒՐՈՒԱԳԾԵՐ —

Բ.

Ճիշտ Նոյ Նահապետ
Պատկառոտ մ՚հ-գէթ ,
Ինք խոստակրօն կէս ,
Տէր Արիստակէս . . .

Բերա ձայնով հոսհ՛ոս
Համարձակախօս
Պայթի ստէպ ա՛ն
Թէլեան Ստեփա՛ն . . . :

Մէկ առոյգ ծերուկ
Շէք մազն ու մօրուք
Ազնուոր մարդ մ՚ը , աս
Ալասեան Աղաս . . . :

Էջմիածնական
Պատգամախօս ա՛ն ,
Գրագէտ սարա՛ֆ ,
Որ Չիֆթէ Սարաֆ:

Բրոֆէսէօր հմո՛ւտ ,
Դէմքով գորշ ու մութ
Խոկայ մտամփոփ
Աբրահամ Յակոբ . . . :

Մէկն ալ որ անխօս՝
Տիպար Զաքէոս ,
Կչռէ քա՛ն քաշ
Սա Տիգրան Նաճա՛ր :

Մէկ ժիմարարո՛յժ
Որ տառապի յոյժ ,
Իր նման ա՛հ չիք
Պօղոսեան Խաչիկ . . .

Մ՚աքսատնեանի ա՛ն ,
Պաշտպան փաստաբան . . .
Ու ըծախնդի՛ր . . .
Սա՛ Սիմոն Խնդիր . . .

Կեա՛նք մը խըլխըլուկ . . .
Դարձած հանելո՛ւկ . . .
Դեռ ինք մոլեռա՛նդ . . .
Պօզանի Բիւզա՛նդ . . . :

Իսկ կարգ մ՚ալ անձեր
Սահմանէն անցե՛ր
Փայլին իրաւամբ
Բացակայութեամբ :

Ահա մեր ժողով ,
Բայց գործ տեսնողն ո՞վ . . .
Երբ գան միասին
Միայն կը խօսին . . :

# Կ՚ՈՒԶԷ՞Ք ՃԱՆՉՆԱԼ ՄԱՐԴ
# Օ՛Ն ՍՈՐՈՒԵՑԷ՛Ք ԱՐԴ

— Դիմագիտութիւն —

Քիթ

Քիթը մեծ կարի՝
Ցոյց տայ անձ բարի .
Փոքրիկը ահա՛
Նենգ ու խաբեբայ

Տափակը քիչ բաց՝
Մարդ մէ ցոփակեաց :
Արծուենգն՝ հեստ՝
Մտացի համեստ . . .

Ռունգն

Ռնգունքը կարմիր
Ու գոյը՝ մարդ ժիր .
Իսկ այն որ կըլոր
Երկչոտ ամէն օր . . .

Մինչդեռ լայն ռունգն այդ
Ցոյց տայ մարդ զուարթ . . .
Ռունգն կլորն ու նեղ
Խենդ մարդ մը ահեղ . . .

### Բերան

Բերան լայն մարդուն՝
Քաջ յանդուգն արթուն՝
Բերան մեծ բացն յա՛ր՝
Մեծախօ՛ս, տխմար.
Փոքրիկը՝ փութ փութ՝
Անխիղճ ու անգութ...

### Շրթունք

Շրթունքը փոքրիկ՝
Ճարտասան՝ մուրիկ.
Շրթունքն երբ փափուք՝
Այլասէր պապուկ
Թանձր ու փոքրը խի՛ստ՝
Խենդ, ցոփ մ'անհանգիստ...
Վերի շրթունքն կեռ՝
Չար՝ բի՛րտ, շատակեր

### Վիզ

Երկայն վիզն ունող՝
Անբարոյ է գո՛ղ...
Վիզ փափուքն ու նեղ՝
Երկչոտ, ո՛չ ուժեղ.
Երկայն հաստը յար՝
Կատաղի, յամառ.
Վիզ միջակն ու յաղթ՝
Անմեղ ու անբաղդ.
Վիզ հաստ ու պարարտ՝
Բի՛րտ, ադէտ ծոյլ մարդ,



Վիզ կարծր ու գերբուկ՝
Լիրբ ու ցոփ մարդուկ
Վիզ՝ խիստ կարճն իսկ, վա՜հ,
Ան խորհրդապահ.
Կոր վիզն ալ տե՛ս, ա՜հ՝
Ցոյց տայ մարդ մ'ագահ.
Վիզը աջ հակած՝
Ազուէս մ'անկասկած.
Դէպի ձախ հակած՝
Բո՛ւ, մարդատեա՛ց.

### Ստամոքս

Ստամոքս խոշո՛ր՝
Մարդն է՝ պատուաւոր.
Լայն յորդ, լի՛ք, մազոտ՝
Քաջ բարի սրտոտ...:
Փոքր ստամոքսը՝ գէ՛թ,
Անգութ մխող, դէ՛տ...

### Կուրծք

Կուրծքը լայն կարի՝
Սրտամիտ, արի՛ :
Կուրծքը սակայն նեղ՝
Փափկակազմ անմեղ.
Կուրծքը որ միջակ՝
Լաւ մարդու վիճակ.

### Կռնակ

Կռնակ՝ կուզն ու կոր՝
կծծի կամակոր.

Ձեռքեր

*Ձեռքերն հաստ ու կարճ՝*
*Զօրեղ գերդ մէկ արջ։*

Բազուկ

*Բազուկներ երկար՝*
*Ցանդուղն, ունող կար։*
*Կարճուկ բազուկներ՝*
*մարդ մը բդասէ՞ր...։*

Մատներ

*Մատներ՝ կարճ, յոյր, ան՛ս,*
*Երկչո՛տ, հեռատե՛ս։*
*Մատնե՛ր նուրբ երկար՝*
*Ճարտարարուեստ յար։*
*Մատներ խի՛տ բարակ՝*
*Կծծի. անառակ...*
*Մատներ փոքրիկ, նուրբ՝*
*Կրող սիրտ մը սուրբ*

Ոտք

*Ոտքերը՝ մսոտ՝*
*Զօրեղ ու կրքոտ։*
*Ոտք փոքրիկ թեթեւ՝*
*Խի՛ստ փառքի ետեւ,*

Միջահասակ

*Հասակ մը միջակ*
*Համեստ, լաւ վիճակ։*



Գաճաճ

*Մարդն այն որ գաճաճ՝*
*Նենգ, լիրբ վայրահաչ...*

Երկայնահասակ

*Մարդն երկայնահասակ*
*Ծոյլ ու անճարակ։*

## ՆՈՒԷՐԻ ՀԱՄԱՐ

*Ազնիւ ազգայինք Կաղանդի գիշեր*
*Արդեօք նուէր մը դուք տալ չէ՞ք յիշեր...*
*Ձեր ազգականին մեկ բարեկամին*
*Որոնք նուէր մը ստանալ կամին...*

*Ձմեռը Ձեր դեմ առած փառաւան՝*
*Գաբամաճեան Ձեր մօտ Բառարան՝*
*Ռուսաններու սա՛ կեն լաւ կարկանդակ*
*Սալիհէ հանըմ կարժէ որ կարդաք:*

*Այն Այտիւդ Համիդ կոչուած Շէրլօք Հոլմս*
*Զոր կարդացողը դառնայ փարպես Կոմս*
*Կամ Հազարումէկ Գիշերներ աղուոր*
*Ձիպս' ձանձրանաք կարդալ ամեն օր:*

*Իսկ անգլիերենէ ընտիր հայերէն*
*Փոքրիկ բառարան նոր մեկօսներէն*
*Վարժապետեանի կը գտնէք միայն*
*Սազաեան կոչուած մեծ Տպարան:*

# ՅՈՒՆՎԱՐ

գքամներու ուրախանանալու օրը ։
Փառք Աստուծոյ... շնորհիւ Դիւցազն Միհրդատ Հայկազնի Ազգային Գաղափարքարանի վերաշինութիւնն ալ աւարտեցաւ ։ Հայ Ազգը պէտք է իրաւամբ պարծենայ որ նոր Գաղափարքարանին հետ նոր Գաղափարք մ'ալ ունի այսօր, անշուշտ ներքին կազմակերպական դրութիւնն ալ պիտի նորոգուի ։

Այս հաշուով ուրեմն պիտի ունենանք նաև նոր Փոխանորդ, նոր Ազգ. Ժողով. նոր աթոռներ, նոր զանգակ, (որովհետև Ընդհ. Ժողովի զանգակն ալ ճաթած է.) նոր Վարչութիւն, նոր Կրօնական Ժողով, նոր Տնտեսական Խորհուրդ, նոր Ուսումնական Խորհուրդ, նոր Դատաստանական Խորհուրդ ։ Այս առթիւ եթէ մեր նախապաշարեալ գլուխներն ալ նորոգելու ըլլանք քէչ չըլլար կարծեմ, թերևս այս պատճառաւ ՀայԱզգին ճակատագիրն ալ նորոգուած կ'ըլլայ ։

Նոր Գաղափարքարանի մէջ նորաձևութեան համաձայն շինուած են, Սալտադան, սեղանատուն, պաղնիկ, որպէս զի Գաղափարք հայրը չստիպուի ո՛և է պատճառաւ բացակայել ։

Բայց չկրցանք սուգել թէ արդեօք ննջարան, ու խոհանոց ալ շինուած են հո՞ն... որպէս զի Երուսաղեմատա՛ն պիտեճեին վրայ աւելորդ ծախս մ'ալ չբացուի ։



# ՓԵՏՐՈՒԱՐ

Բուք, փոթորիկ, որոտում ու փայլատակում ։ Թուրքիոյ չորս կողմէն սաւառնակի ձայներ ։

Կը լսենք թէ հիւսիսային ճերմակ արջ իջած է Հայաստանի սահմանները, ուր Թուրքիոյ ժողովուրդը ահ ու սարսափի մատնուած է ։ Կառավարութեան ուշադրութիւնը կը հրաւիրենք այս առթիւ այդ ճերմակ արջերը վանելու և ժողովուրթեան կեանքը ապահովելու համար ։

Մեր Էմվար Կրէյ նոր Հովմացոյց մը հնարած է որ ամէն դիւանագէտի քմահաճոյքներուն կրնայ պատշաճիլ ։

Հայաստանի բարենորոգմանց ծրագիրը վերջացած ըլլալով՝ դիւանագէտներու աչքը հոն սեւեռած է թէ արդեօք իրենց ալ բաժին մը պիտի ըլլա՞յ մեծ պաշտօնի մը կոչուելով. բայց Հայը Ներքին Գործերու Նախարարէն զատ ո՛չ ոքի կը վստահի այդ պաշտօնը իբրև Հայասէրի ։

- «Թուրքերուն մէջէն ալ հայասէր կըլլա՞» եղեր, պիտի հարցնէք ինծ թերևս ։

— Աւասիկ հատ մը, այն ալ Թալէաթ Պէյը կը պատասխանենք առանց քաշուելու ։

Զը մոռնանք ըսել որ քաղաքակալութեան երեսէն փճացած քար ու քանդ եղած Խասգիւղն ալ բարենորոգելու համար, աւելի ճիշդը վերաշինելու համար նոր ծրագիր մը պատրաստուելու վրայ կը խորհուի այս միջոցիս ։ Անշուշտ նախ փողոցները պիտի լուսավառուին, որպէս զի նախապէս տուները մնող հաւ գողցող անձերը ճանչցուին ։

Օրինակի մ'ալ կը պատրաստուի՝ գողերու և դատարկաշրջիկներու գործ հայթայթելու համար ։

# ՄԱՐՏ

Օդերու Ցարուռա,
Դէմքերու Ցարուռա,
Կարմիր, ճերմակ, կապո՛յտ, սեւ՛ ։

Քահանաներու ռավայիծի օրը, մեռեալ, կնո՛ւնք, մինչ Պատրիարքարանի եկամուտները նուազած՝ պաշտօնեաներու ամսականները չելնէր . . . ։

Գառնիկ Հայկեան խռժռած՝ հապռէ նամակ կը խմբագրէ Տէր Տրդատ Քահանայ Նշանտուքի տոմարը՝ տունը պահած է մեծ պահքէն վերջ մէջտեղ հանելու համար ։

Գաւառներէն հեռագիրներ կը տեղան, Քիւրտերու հարստահարութեան, առեւանգութեան մասին ։

«Ազատամարտ» կը փակուի . . . օրը օրին Հայաստանի մէջ գործուած խժդժութիւնները հեռագիրները նամակները հրատարակելուն համար, տեղը Մեղու կը հրատարակուի որ կը խայթէ ու կը մեռնի ։

Շանթը կը յաջորդէ մրրիկին, փայլատակում ամէն կողմ ։

Դէպքերը չեն դադրիր. տեղ տեղ պզտիկ սովորական ոճրագործութիւններ կը պատահին ։

Բարեգործական ընկերութեան (Հայերու խաղաղէյա սանտըղին) տակաւին նպաստ ժողովելու վրայ է ։

Ամէն կողմ սղութիւն. ամենէն աժանը դարձեալ փութռան է ։

Ձմռան մէջտեղն ենք Շահրիկեան այդ սրտոտ մարդը կը թողայ, Միհրդատ Հայկազն ամէն բանի կը դիմանայ, կը հպարտանայ և օրական 40 ռումբ կարձակէ . . . Ձմռան հողմերուն դէմ ։

Ջիւն ու բուք, Երուսաղէմի փոխանորդին արգելք կ'ըլլան Եալովայ օդափոխութեան երթալու ու ագարակի խնդիրը կարգադրելու ։



# ԱՊՐԻԼ

Սարբերաներու յատկացուած է այս ամիսը ներկայ դարուն մէջ ո՛վ որ խաբերայ չէ՝ Սարկաւագին պէս անօթի կը մնայ . . . ։

Սուտ խօսիլը սովորութեան կարգ անցած է այլեւս, որուն օրինակը Սըր Էտվար Կրէյ ամէն օր ցոյց կուտայ արդէն ։

Հիմա քաղաքագէտներն ալ սուտ կը խօսին, իսկ եկեղեցականները «Մեղայ ամենասուրբ»ի մէջ գտնուած մեղքերը գործած չըլլալով հանդերձ՝ ամէն օր պարտաւոր են եկեղեցւոյ մէջ Աստուծոյ սեղանին առջև արտասանելու ։ Սա ալ առաքինութիւն մըն է անշուշտ ։

Է՞ն ճշմարտախօսը Սարկաւագին Տարեցոյցն է նորէն որ ամէն մոլութիւնները ձաղկելու պաշտօն ունի ։

Զգուշացէ՛ք զրպարտիչներէ՛ն . . . չաղակրա՛տ կրօնաւորներէն ու անոնց զրաբանութիւններէն ։

Ապրիլ ամսոյ մէջ տեղի պիտի ունենան կարգ մը ճըշմարտութիւններ ։ Հայաստանի մէջ բարենորոգումներ ։

Ազգային գործերու վերջնական լուծում ։

Երուսաղէմի վանքին հիմնական բարեկարգութիւն ։ Կըղերներու ամուսնութիւն. Քահանայից վերամուսնութիւն, Թերթերու ուղամտութիւն . . . ։

Այս ամիսը քաղաքակրթութեան պէս փոփոխամիտ է ։

# ՄԱՅԻՍ

Զուարճալի ամիսներէն մէկը: Այս ամսոյն մէջ է որ կամաց կամաց հագուստները կը պակսին շատերու վրայէ:

Ամէն կողմ գեղ, փայլ, սէր...:

Ամէն կողմ կը բուրէ անմահութիւն գերբնական:

Անկարելի է որ մարդ չը գիւթուի բնութեան հրաշալիքներուն ի տես:

Ծաղկաւէտ պարտէզներ կը տեսնես... տիկիններու եւ օրիորդներու գլխարկներու վրայ՝ իսկ անոնց անուշաբոյր հոտերը կը շնչես իրենց թաշկինակներէն:

Արեւը իր փայլը կորսուած է շառագոյն դէմքերու առջեւ:

Շատեր օդափոխութեան կերթան, գիւղագնացութիւններ կը շարունակուին:

Սրբազան Պատրիարքն ալ Գնալը կերթայ բայց անոնք որ անկարող են այդ մեծ ճամբորդութիւնը կատարելու կը նախանձին ու կը քննադատեն Նորին Ամենապատուութիւնը. իբր թէ արքայութիւն գացած ըլլալու չափ նշանակութիւն մը ունեցած ըլլար կղզիագնացութիւնը:

Նորելուկ գրական դէմքերու նորաձեւ Ռէքլամները տեղի պիտի ունենան յառաջիկայ կիրակի ժամը 6ին ընկեր Կարօյին պիւռօյին մէջ, որպէս զի բուն գրագէտներն ու գրագիտուհիները անչքանան:

Երուսաղէմի մէկ քանի միաբաններ Ազգային քննիչ մը կը ծեծեն ու անպատիժ կը մնան:

Էրիկ կնկան մէջ կռիւներ ծայր կուտան, զուարճութեանց երեւէն աւելորդ ծախսեր ընելնուն համար:

Աննման աղջիկներ՝ Սարկաւագին Տարեցոյցով կը զբաղին... «Արդեօք զիս կ'առնէ»...:



# ՅՈՒՆԻՍ

Տաքերը կ'սկսին:

Ազգին խնդիրները կը շատնան: Գատր գիւղ, Խասգիւղ, Գումգաբու, Թոփգաբու քանի մը կնաթողութիւններ կը պատահին:

Մեծ ծեծկրուք Ազգ. երեսփոխանական ժողովին մէջ,

Ատենապետը ի կարգ կը հրաւիրէ երեսփոխանները... ձեռքի խոշոր զանգակով; բայց մտիկ ընող չըկայ. վէճերը կը շատնան:

Շահրիկեան. — Չի կարելի է...:

Ճիհանկիւլեան. — Դուն ո՛վ ես:

Համայեակ Արամեանց. — Սօցիալ Տէմօգրատական դրութեամբ լուծել կարելի է այդ խնդիրը:

Միհրդատ Հայկազն. — Ամենքնիդ ալ խալթ էք կերեր:

Ներսէս Օհաննեան. — Խօլուշն ենք ուր ենք աղբար:

Կիւրճեան. — Ասանկ խօսքով կռիւ չըլլար, մէկ մէկու գլուխ պատռելու են որ կռիւ ըսածդ հասկցուի:

Զաք, փաք. իրար կը պլլուին. Նախագահը ժողովը կը փակէ. Ազգին գործերը ինքնին կը լուծուին...:

Տիրքէթի շոգենաւները ալեկոծութեան կը բռնուին լոտոսի պատճառաւ. կիներ, օրիորդներ կը փսխեն:

Շատախօս կիները լոտոսի ժամանակ շոգենաւ նստելու են քիչ խօսելու համար:

Բայց յղի կիներ լոտոսի պէտք չունին փախելու համար:

# ՅՈՒԼԻՍ

1. — Ջերմաչափը 40...

2. — Կիներ, օրիորդներ կը մարին տաքէն, կրօնաւորներ կը նեղուին պահքէն։

3. — Պալքան․ Տէրութիւնք, դաշնագրութիւն մը կը կնքեն եղբայրութիւնը և խաղաղութիւնը պահպանելու համար։ Երուսաղէմի միաբաններն ալ կուխտեն յաւիտեան վարքը խռովութեան մէջ պահելու։

4. — Նեղոս կսկսի յորդիլ ու կաղդէ մինչև Երուսաղէմ։

5. — Եափայի ծովը միշտ կալեկոծի, Եղմի վանքն ալ անդին...։

6. — Այս ամսուան մէջ Երուսաղէմ ղրկուող Ազգային քննիչներ հաճի կըլլան... ծեծ ուտելով միաբաններէն... Ազգային ժողովն ալ ասդին կը ծիծաղէ։

7. — Դաւիթ Տէր Մովսէսեան կեդրոնի խմբակցութեան պետը, Ղևոնդեաններու լիդրը կը ջատագովէ միաբաններու քաջագործութիւնը այն նկատումով թէ օր մ՚ալ երբ ինք Երուսաղէմ քննիչ ղրկուելու ըլլայ ծեծ չուտելու համար [illegible]

Գիւղագնացութեան գացող օրիորդներ, մանաւորապէս Գնալըի մէջ՝ ռոման կարդալով օրը կիկուն կընեն։

Տարիքոտ օրիորդներ պատուհաններու տակ նստած անցեալին վրայ կը մտածեն, ոմանք ալ... կ՚երազեն։

Պապաեան վարդապետ Բերայի թաղական աղա Խնդիր Սիմոնէն և Արամ Հալաճեանէն Եպիսկոպոսական վկայագիր մը ձեռք կը ձգէ ու Իsարէի Մեճլիսէն վաւերացնել կուտայ, Կրօնական Ժողովի նախանձը շարժելու ատրիճան։

Տիգրան Տօղրամաճեան 1500 ամեակ մ՚ալ կը փափաքի տեսնել, իբրև տպագրիչ հայ տպագրութեան վրայ 1500 էջէ բաղկացեալ գրաւոր նոր ճառ մը արտասանելու համար։



# ՕԳՈՍՏՈՍ

Ամէն տեղ կրակ կտրած է... տէ՛սք։ Ազգային ժողովի սրահին մէջ ջերմաչափ մը կը գտնուի տաքցած գանկերուն զօրութիւնը իմացուելու համար։

Արդիւնքը հետևեալն է, Ռոմիւր աստի. 0.էն վեր։

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Հայկ Խօճասարեանի | գանկը | ½ |
| 2. | Հմայեակ Արամեանց | » | 1 |
| 3. | Սմբատ Բիւրատ | » | 1½ |
| 4. | Ներսէս Օհանեան | » | 2 |
| 5. | Միհրդատ Հայկազն | » | 10 |
| 6. | Դաւիթ Տ. Մովսէսեան | » | 15 |
| 7. | Շահրիկեան | » | 20 |
| 8. | Փաշաեան | » | 0 |
| 9. | Ծիհանկիւլեան | » | 41 |
| 10. | Դուրեան Սրբազան | » | 0.էն վար |

Ամրիկա տեղահատերու արտագրէչ ու սպառիչ մարդկութեան ամենամեծ ծառայութիւն մատուցող ողբացեալ Օննիկ պէյ Զայեանի մահուան տարեդարձն է այսօր. ի նշան երախտագիտութեան բոլոր հայ երիտասարդները սուգ կը բռնեն։

Սրբազան Կաթողիկոսը Թրքահայոց կոնդակ մը կը գրէ հայ գրականութեան Յոբելեանը չքեղ տօնելու համար։

Թօլայեան Կավռօշ կը հրատարակէ ապրելու համար։

Մեսրոպ վրդ. Նշանեան ոգեհարցութեան գիրք մը կը հրատարակէ։

Քանի մը վարդապետներ իրենց բարւոք պաշտօնավարութեան համար էջմիածին կը մեկնին՝ քանի մը վարդապետներ ալ Պոլսոյ մէջ մատուցած ծառայութեան համար կը ղրկուին...

# ՍԵՊՏԵՄԲԵՐ

ուեւտուրը սկսած է:

Ուսումնական Խորհուրդը հրաժարած ըլլալով՝ նոր Ուսումնական Խորհուրդը կազմած է հետեւեալներէն.

| | |
|---|---|
| Վահրամ Մարգարեան | Ատենապետ |
| Սմբատ Դաւիթեան | Փոխ ատենապետ |
| Պալենց | Ատենադպիր |
| Էսկեան | Փոխ ատենադպիր |
| Գըլըճեան | |

Տեսուչ, ուսուցիչ, ուսուցչուհի, մանկապարտիզպանուհի հարկ է դիմեն ասկէ վերջ վերոյիշեալ մասնախմբին, իրենց Ուսուցչական վկայականները առնելու համար: Հասցէ՝ Մէրճան փողոց, Զագմագճըլար եւ Խորասանճեան Խան...

Գաւառներէն առատ խնդրանք կայ... վարժուհիներու. դիմել Սագաեան տպարան..

Իւնիօն ապահովագրական ընկերութիւնը ահագին վնաս մը կ'ենթարկուի, Ներսէսեան տպարանի հրկիզման պատճառաւ:

Սահմանադրութիւնը հսկայաքայլ կը յառաջդիմէ Պոլսոյ մէջ, մէկը շոգենաւ ողջերթի երթալ կ'ուզէ՝ անցագիր կը հարցուի:

Ցուրտերը սկսան...:

Հրապարակի վրայ գործերը դադրած են, բացի ամուսնութենէ:

Նաւեր կ'երթեւեկեն, պատերազմի խաղաղութիւն բերող չըկայ:

Նշանած 45-50նոց Հայ օրիորդներու կը յանձնարարենք Բերայի Մուխթար Կարապետը, որ՝ դիւրութիւններ կրնայ ընծայել տարիքնին պզտիկցնելու համար:



# ՀՈԿՏԵՄԲԵՐ

Ցուրտն ու անձրեւ կը սկսին գիւղացիներուն որ պարպեն կղզիները, Պէօյիւքտէրէ, Սարըեարը, Ալէմտաղին:

Օդափոխութեան գացողներէն շատեր նիհարցած են չարերուն ալ օդը, ջուրը նպաստած մես կապած են:

Տրդատ եպիսկոպոս Պալեան, ազգին ամէնէն զարգացեալ(.°), ամէնէն հմուտ(.°), ամէնէն հարուստ(.°) (խօսքով), ամէնէն պերճախօս(.°). ազգասէր, բարեսէր, ընտանեսէր, առողջ և սրբակեաց(°) բարձրաստիճան եկեղեցականը՝ Ազգային ու Կրօնական բոլոր գործերէն ձեռնթափ, քաշուած է Իզմիր Մանիսա, եւ այժմ կը զբաղի խնամ կարեւոր գործերով. իր փայլերու գոլիքսիոնը լեցնելով. ափսո՛ս որ Ազգը զրկուած է ասանկ գործունեայ անզուգական եկեղեցականի մը ներկայութենէն:

Քանի մը Կեսարացի աղաներ կը ջանան Պալեան եպս.ը անպատճառ Երուսաղէմի պատրիարքական աթոռի վրայ տեսնել. փառահաւաքութեան ձիրքեր տեսնելով անոր վրայ:

Երուսաղէմի միաբանութիւնը 6 հատ պատրիարք կ'ուզէ տեսնել Աթոռին վրայ: Ազգը դեռ արժանաւորը փնտռելու վրայ է, Ազգը եթէ խելք ունի, Մանուէլեան սարկաւագը կ'ընտրէ պատրիարք՝ վերէն վար մաքրելու համար վանքը:

# ՆՈՅԵՄԲԵՐ

Գործերու խառնակութիւն այս ամսուան մէջ։

Գրավաճառները պանիր հացով իրիկուն կ'ընեն... վարժապետներն ալ ֆասուլեա բլագիով։ Ամէնէն շատ անցնող գործն է հրապարակի վրայ, խոհարարութիւն ու լրագրավաճառութիւն։ Ազգային երեսփոխան Ճէհանկիւլեան Նպարավաճառի խանութ մը բացած է ի Մագրիգիւղ։ Ուրբաթ օրերը գոց է. կրնաք գտնել զինքը միայն Ազգ. Երեսփոխանական Ժողովին մէջ։

Եպիսկոպոսանալու համար հարկ չկայ այլեւս Առաջնորդութեան երթալ, մէճլիսի իտարէէն վկայական մը կը բաւէ։

Պալեան Տրդատ Սրբազան, իրեն միակ սկզբունք ըրած է չարերու հետ միանալ՝ բարիները ջախջախելու համար։

Ազգային Ժողովոյ կեդրոնի խմբակցութեան մէկ քանի անդամները միաբերնին կը գտնեն անպատճառ Պատրիարք մը եւս հրաժարեցնել, որովհետեւ ջղային է եղեր. Դիւանն ալ որոշած է այդ մէկ քանիներուն խելապատակը Տօքթ. Պօղոսեանի քննութեան ենթարկել, որովհետեւ մտային խանգարման նշաններ կ'երեւին անոնց... աչքերուն վրայ։

Կառավարութիւնն ալ ձանձրացաւ ամէն օր Պատրիարքական ընտրութիւններ վաւերացնելէն, սա փարաարգութեանը թախավիտիյէ տալէն։



# ԴԵԿՏԵՄԲԵՐ

Ցուրտ է և ամէն մարդ փայտ դարձած է։ Հայ-լայֆ ընտանիք մը իր մալիֆաթուռաճի տղուն համար ոսկիով ադամանդներով և ամէն ձիրքերով օժտուած աղջիկ մը կը փնտռէ իր տղուն սէրմայէ դնելու համար և չի գտներ։ Ո՞ւր է սանկ գելեփիր մը։

Մեր ընկեր Խաժակ՝ կը պարպէ բաժակ...։

Վարժապետական սնտուկ մը կը հաստատուի ապագայ ծեր ու կարօտ ուսուցիչներու՝ նպաստելու համար. անդին Միհրան Աշճեան ծեր ու աչազուրկ հինաւուրց ուսուցիչ մը — կը պարտաւորուի Փոխանորդարանէն իր կարօտ վիճակը հաստատող թուղթ մը ձեռք ձգել ու փողոցները դեգերել... երկու օխա հաց տուն տանելու և իրմէ աւելի ծերացած մայրը խնամելու համար։ Փա՛ռք Հայ Ուսուցչութեան։

Սինոդի օրակարգի առաջին խնդիրներէն է այս անգամ կղերաամուսնական էն կարեւոր հարցը։ Տէր մի՛ արասցէ եթէ Սինոդը սանկ սխալ մը գործելու հարկին մէջ գտնուի կրնաք երեւակայել թէ առաջին ամուսնացողը ո՛վ կրնայ ըլլալ։

— Կղերներուն մէջ էն ճգնաւոր կարծուած թարթիւֆը։

Բայց սարկաւագը կ'ըսէ թէ «Ներկայ լուսաւորեալ դարուն մէջ ճգնաւոր մարդ չկայ բարեբաղդաբար»։

Կղերներուն նորութիւնն ալ վարդապետանալէ վերջ եպիսկոպոսանալ է՝ օր մը Պատրիարք ընտրուելու նպատակաւ, վերջն ալ ազգին գործերուն բնա՛ւ չխառնուելու համար...

Նորաձեւութիւնը քանի մը կանգուն ալ առաջ գացած է. կիներ ու օրիորդներ բանթօլօն հագնիլ սկսան, մեր երիտասարդներն ալ չրջազգեստ հագնելու որոշում տուած են...։

# ՂԵՒՈՆԴԵԱՆ ԵՒ ԱՃԵՄԵԱՆ

Այն օրէն երբ Ս. Յակոբեանց վանքին մէջ կարգ մը հաշուապահանջներ հաշիւ պահանջել ելան, նախկին ելեւմտից տեսուչ Ս. Յակոբեանց վանուց Ղեւոնդ վրդ. Մաքսուտեանէ՝ Ղեւոնդեան անունն ալ այն օրէն ծնաւ և տակաւ սկսաւ հռչակ հանել աշխարհի չորս ծայրեր: Ղեւոնդ վրդ. տեսնելով որ հաշիւ չը տալ անկարելի է՝ քանի մը արբանեակներ սկսաւ ճամբել, նախ իր հայրենակից Սուրբեացիներէն որպէս զի զինքը ատդին անդին գովաբանեն թէ ան իր հաշիւներուն մէջ արդար է. թէ ա՛ն մեռնող միաբաններու կալուածներու եկամուտները իւրացուցած չէ. թէ ա՛ն Ալեքսանդրիոյ գետինը 28000 ոսկիի վաճառելով՝ վանքին պարտքը վճարած է (մեծագործութի՛ւն) թէ Երուսաղէմի մէջ և այլուր իր անձնականին եղած հողերն ու գետինները, վանքէն խորուած ոսկիներով գնած չէ, թէ ինք վանքին ներքին խռովածութեանց թելադրիչը եղած չէ թէ ինք գրգռիչ նամակներ գրած չէ. թէ ինք օթէլներ կառուցած է պարտքով, կարեւոր գետիններ պարապ տեղը առանց պատճառի և ինքնագլուխ ծախած չէ, թէ վերջապէս ինք իբրև ելեւմտից տեսուչ և տնօրէն ժողովոյ անդամ, ատենապետ, համառուի և համարատուի հանգամանքով երբեք պատասխանատու չէ ու 11000 ոսկի ազգին պարտք չունի, այլ առնելիք ունի, և անոնք որ այսպէս կը դաւանին «Ղեւոնդեան» կը կոչուին, իսկ անոնք որ հակառակը կը պնդեն՝ «Աճէմեան». այսինքն հաշուապահանջ խումբին մէջէն մարդ մը, որուն խելքէն միտքէն չէր անցներ երբեք որ օր մը Ղեւոնդ վրդ.ի շնորհիւ ինք ալ անուն ու համբաւ պիտի հանէր ու անմահանար վանական տարեգրութեան մէջ:



Ղեւոնդ վրդ. լաւ ըմբռնած է սակայն որ ազգեր ու տէրութիւններ կուսակցութեամբ միայն կրնան յառաջդիմել, ու ինք ալ իր փրկութիւնը անոր մէջ միայն գտաւ, ուստի զարկ տուաւ իր անունով «Ղեւոնդեան կուսակցութիւն» մը հիմնելու և յաջողեցաւ, ինչպէս յաջողած են Դաշնակցական, Հնչակեան, Ռամկավարական, Կեդրոնական, Ապակեդրոնական, և Ազատական, յորջորջուած կուսակցութիւնները: Միթէ կրօնքներու հիմնադիրներն ալ այս դրութեան հետեւեցա՞ն:

Մովսէս՝ իր եղբայրը՝ Ահարոնն ու Անէր պապը առաջ քաշեց, Պուտտան ու Պրահման իրենց ազգականները. Քրիստոս Տեառն եղբայր և իր հայրենակիցները և այսպէս կարգաւ ուրիշներ:

Սակայն Ղեւոնդեանք բաւական տարի կարողացան իրենց պետին ներկայութիւնը վայելել վանքին մէջ և անոր բարի սովորութիւններէն օգտուած՝ ոմանք խանութի, ոմանք Բռեսի Ֆօնսիքներու տէր եղան, շատեր ալ՝ իրենց հարստութիւնը Յունաց վանք կամ դրամատուններ պահեցուցին 100/3 100/6 տոկոսով: Սարկաւագ չը մասնակցեցաւ սակայն այս շահաւէտ կուսակցութեան, Աճէմեան կուսակցութեան պատկանող մէկ քանի անձեր իրենց անցուկ վիճակին պատճառաւ հակեցան անոր և մկրտուեցան Ղեւոնդեան:

Բայց երբ մէկ օր Ղեւոնդ վրդ. իր հոգեկան հիւանդութիւնը դարմանելու համար ստիպուեցաւ Երուսաղէմ ուխտի եկող պատուական անձնաւորութիւններու (դուք հասկցէք Ազգ. քննիչներու) խորհուրդով Պոլիս օդափոխութեան գալ, աւելի ճիշդը Կայսերական հրովարտակով Պոլիս հրաւիրուեցաւ, 905ին Ղեւոնդեանք տխրեցան, որ իրենց պետին ներկայութենէն պիտի զրկուէին. անանկ որ տակաւին անիկայ Երուսաղէմէն չը մեկնած՝ շատեր խելագարեցան, և սկսան ատոր անոր գլուխը պատռել, ալ ամէն օր ծեծ ծեծկըռուք կար վանքին մէջ, որով ստիպուեցաւ կառավարութիւնը նոյնիսկ իրենց պետին՝ Ղեւոնդի խորհուրդով վանքին ներքին խնդիրներուն ալ միջամտել.., բայց օգուտ մը չունեցաւ...:

Եւ վերջապէս Ղեւոնդ վարդապետ օրին մէկը մեկնեցաւ Երուսաղէմ, Ղեւոնդեաններու սիրտը հոգին մէկտեղ տանելով։

Այդքան անսիրտ մարդիկներով բնականաբար վանք կարելի չէր կառավարել, ուրտեղ մարդ մըն ալ չը գտնուեցաւ դժբախտաբար որ այդ անսիրտ մարդիկը ի կարգ հրաւիրէ։

Մինչ Ղեւոնդ վարդապետ այս անգամ ստիպուեցաւ Պոլսոյ աշխարհականներէ կուսակցութիւն մը կազմել եւ յաջողեցաւ

Բնա՛ւ չէր կրնար երեւակայել Սարկաւագը թէ մէկ օր Սաղիմական Ղեւոնդեաններէ խուսափելով Պոլսական ղեւոնդեաններու պիտի հանդիպէր այսօր

Սարկաւագ Երուսաղէմի Ղեւոնդեան կուսակցութեան ապօրինութիւններէն գայթակղած՝ Պոլիս եկած էր առանց յիշելու անշուշտ Թրքական այն առածը թէ «Եաղմուրտան գաչան տօլույա թութուլուր։

Սարկաւագը չոքնաւ մը կը նետէ՝ Ղեւոնդեանի մը կը հանդիպի. ճաշարան կերթայ՝ կառսօնը Ղեւոնդեան, լրագրավաճառէն լրագիր մը պիտի առնէ, կը տեսնէ ան ալ Ղեւոնդեան, Քահանայի մը պիտի խոստովանի՝ թունդ Ղեւոնդեան, Բերայի Մուխթար Կարապետէն հողային խնդրոյ մը համար իլմիւխապէր մը կ'ուզէ՝ կէս մէճիտ տալով հանդերձ, երեք տարիէ ի վեր չի յաջողիր որովհետեւ այն մարդն ալ կատարեալ Ղեւոնդեան է եղեր (նման զնման սիրէ) դեղարան կերթայ լուծողական մը առնելու. դեղագործն ալ Ղեւոնդեան. բժիշկին կ'երթայ Ղեւոնդեան, տուն մը Գատըգիւղ հիւր կերթայ, ուրիշ հիւրեր կուգան այր և կին, օրիորդ մըն ալ հետերնին. Այրը Անեմեան կուսակցութեան կը պատկանի կինը Ղեւոնդեան։ Սարկաւագ Անէմեան պատրիարքի մը օրով ուսուցչական վկայական մը կստանայ և Անէմեան երեսփոխան էֆէնտիէ մը յանձնարարական կը տանի. ուղղեալ Գում-գափուի և Եսայեան վարժարաններու անօրէններուն, թէև ատոնք հակաղեւոնդեան՝ բայց Թաղական աղաներ Ղեւոնդեան ըլլալնուն կը մերժուի. և Սարկաւագ կ'ափսոսայ որ ինչո՞ւ ժամանակին Ղեւոնդեան կուսակցութեան անդամ չէ գրուած։ Երու-



սաղէմի պատրիարքի պաշտօնակութեամբ երբ ազգային ժողովը Տեղապահ մը կարգեց, ու երբ այս վերջինը Վեհափառ Կայսեր ներկայացեր էր, ու համակրալիր ընդունելութիւն մը գտած էր Նորին Վեհափառութենէն, Ղեւոնդեանք չհանդուրժելով ատոր, Երուսաղէմի վանքին մէջ թէ Պոլիս՝ ըսին որ Կայսրը Անէմեան է եղեր, թերեւս կը փափաքէին որ ան ալ Ղեւոնդեան ըլլար... ինչպէս Երուսաղէմ այցելող Միւթէսարըֆները նուէրներով և անոնց ընտանիքները ադամանդակուռ պռօշներով Ղեւոնդեան կ'օծուէին։

Հիմա չափազանցութիւն թող չնկատուի, երբ ըսեմ թէ Ղեւոնդեան կուսակցութիւնը հոս՝ Պոլսոյ մէջ՝ Դաշնակցութենէն ալ, Սօցիալ Տէմօկրատէն ալ, և աշխարհի բոլոր կուսակցութիւններէն ալ սաստիկ մեծամասնութիւն կը կազմէ։ Այո՛, հիմա Պոլսոյ մէջ.

Փոխանորդ Հայր Սուրբը Ղեւոնդեան.
Կրօնական Ժողովը վերէն վար Ղեւոնդեան.
Պատրիարքարանի քարտուղարները Ղեւոնդեան.
Ազգ. Ժողովին կէսէն աւելին Ղեւոնդեան.
Ունկնդիրներուն մեծագոյն մասը Ղեւոնդեան.

Անէմեան երեսփոխաններէն ոմանք ուխտերնին դրժելով Ղեւոնդեան մկրտուած են։

Հայ դատաւորներ Ղեւոնդեան Հայ բժիշկներ Ղեւոնդեան, դեղագործներ Ղեւոնդեան, վաճառականներ Ղեւոնդեան, նպարավաճառներ Ղեւոնդեան. խմբագիրներ Ղեւոնդեան, տպարանապետներ Ղեւոնդեան, գրաշարը Ղեւոնդեան, մեքենավարը Ղեւոնդեան, ելեկտրական թրամվէյներու տոմսակավաճառը Ղեւոնդեան, Շիշլիի ապարդըմաններու տէրերը Ղեւոնդեան.

Պոլսոյ հայ-լայք դասակարգի մարդիկներուն 1/4 մասը Անէմեան, իսկ կիներուն ամբողջութիւնը Ղեւոնդեան են։

Եւ չխակը մարդ կը զարմանայ թէ անհատ մը ինչպէս Պոլսոյ մէջ կարողացած է մէկ օրէն միւսը այսքան ստուար բազմութիւն մը ժողվել իր շուրջը և Ղեւոնդեան կուսակցու-

Թիւնը կազմել, կուսակցութիւն մը որուն միակ նպատակն է իրենց պետը գովել ու փառաբանել։ Արդարեւ Գրիգոր Լուսաւորիչ այնքան յարգուած ու պատուուած չէ մեր մէջ սակայն։ Պիտի արժէր ուրեմն որ այս Սուրբին անունը մասնաւոր խաչանիշով մը դասուէր Սուրբերու կարգին ու օրացոյցի մէջ անցնել երկրորդ Տօն Ղեւոնդեանց կամ Ղեւոնդ վրդ. Մագսուտեան Սուրիացի։

Գրիգոր Խօսքանց
Դիզած ոսկի զա՛նձ...
Արուեստն է բուն իր,
Փորագրիչ ընտի՛ր,
Մատներովն իր սուրբ,
Ոսկերչի այն նուրբ.
Ձեռն ըսեր կատակ,
Ռուսահպատա՛կ...
Պոլսոյ մէջ է ա՛ն,
Թիփ մը պատուական,
Բայց իր մականուն՝
Յակոբեան չէ՛ բուն,
Տեսէ՛ք իր պապեր,
Բոլորակ, ինք՝ գէր,
Այդ յորջորջուի ան
Հ. Կարապետեան,
Մեծ արուեստագէ՛տ,
Այս կէտ ուղղենք գէ՛թ։

# ԳՐՈՂՆԵՐԸ

Բուն Քրոնիկագիր
Համեստ մինակն իր,
Որ զարնէ ծափիկ՝
Մուպահեա Աբիկ.

Գանկ մը հրաշակերտ,
Հօրը աշակերտ,
Առատ իր սէ՛ր, ՝սոյր,
Քէչեան մեր Պարոյր...։

Ակնոցը քըթին,
Չը նայիր ետին,
Կը գործէ յուշիկ;
Այն Վահան Թօշիկ։

Մինչ ծնած հո՛ս ան՝
Կարգուած Լօզան,
Քաշէ թէ՛ հիմակ...
Այն Ռուբէն Սեւակ։

Ինք ակնոյաւոր
Տժգոյն, վիրաւոր...
Որ դէմք ելնէ հէ՛նց՝
Նոյն Լեւոն Լարենց։

«Ապագայապա՛շտ»
Ներկային հետ հա՛շտ,
Թո՛ղ չառնէ նազար՝
Իմ Հրանդ Նազար։

Մէկ չքնաղակերտ,
Անմաշելի բերդ.
Արձակէ մա՛շ հոտ,
Մեծակերտ Ակօս։

Թունդ Ղեւոնդապա՛շտ
Խղճին հետ անհաշտ,
Միաքդ ի զուր մաշես
Գալֆազ Արտաշէս...։

Պեխեր սայր ի վեր,
Հոգին կարեվեր.
Արդեօք ո՞ր Զարմէն
Ինք Ենովք Արմէն։

Թերթավար դա՛, պե՛տ
Երբեմն վարդապետ,
Խորհող իմ ներսէս
Փափազեան Ներսէս.

Ռոստոմթոյագիր
Ինք ակնոցակիր
Գիտէ լաւ բարգում
Համեստ Համբարձում։

Գիշերաշրջիկ.
Իր պէս ուշիմ չէ՛ք
«Բերա»ի մէջ հոն
«Հովարտա» Լեւոն . . .։

«Նոր քաղաքագէտ»
Բան մը գիտնայ գէթ,
Կը գործէ սուսիկ
Այն Տիգրան Սուգիկ . . .

Զաննիր ո՛չ, անտես,
Երբեք պար-հանդէս,
Առատ սէր ունի
Սիրուն Սիրունի։

# ԽԱՍԳԻՒՂՑԻ ՕՐԻՈՐԴԸ

Առտուն կանուխ արշալոյսին,
Հազիւ տեսնես դէմքն Հայ կոյսին,
Լսես սրտէն իր կը խուսին
Խուլ հառաչանք մը «ա՜հ, ամուսին»:

Ան օրն ի բուն, գիշերն ի բուն,
Ծախած է իր հանգիստն ու քուն
Չարխին դէմը ծաղկապատիկ,
Կոչրէ փիւսկիւլ հատիկ հատիկ:

Կ'երգէ նա միշտ ձայնով կերկեր,
Մինչեւ վերջն իր ցաւն ու վէրքեր,
Ու Խասգիւղի այն ահաւոր
Ջարդի զոհերն հարիւրաւոր:

Մեծ մասն արդէն խիստ հալ ու մաշ
Անխուն հազիւ ողջ կէս քաշ
Ան գայարին իր սիրտն, աղիք
Դուք Հայ եղէք մի կողկողիք:



Սա միամիտ խիստ ժամանէր
Միշտ կ'օրօրէ իր սին յոյսեր
Բայց քեզ պահէ մարդու մ'ըսէր
Շատ կը սիրէ գեղ, փայլ ու սէր:

Երբ որ կ'ըլլայ շաբաթ գիշեր,
—Հայ-լայֆ կա՞ն հոն՝ լաւ չեմ յիշեր —
Կ'երթայ կոտրել ան նուշ ընկոյզ
Խըոխտահիվէսին Արտաշին կուզ:

Ոմանք կ'իջնեն նաւահանգիստ,
—Շաբաթ մէկ օր ըլլեն հանգիստ—
Հայրն Օղլու այն կազինօն,
Ուր շոկ խօսի կըրամօֆօն . . .

Մէկ մասն կ'երթայ Գարա Աղան,
Լոկ դիտելու հոն հայ ու լաճ
Ու աչքերովն իր հայերէն
Մէկտեղ սիրել բայ խոնարհեն . . .

Երկուշաբթի առտու, նորէն,
Մեծ հաւասքով, սրտին խորէն
Իր չարխին դէմ ան կ'աղօթէ
Սնանելով յաճախ օդէ . . .։


## Տօքթ. ԼԵՒՈՆ ԷՖ. ՍԱՐԱՃԵԱՆ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
ԾՈՎԱՅԻՆ ԿԵԴՐ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ

Կլորիկ, գիրուկ
Սեփ սեւ մօրուք,
Այտեր կարմիր,
Ընտիր զարմ իր:
Խիստ կարող յոյժ,
ԱՏԱՄՆԱԲՈՅԺ:
Դիմեն անոր
Մարդիկ բոլոր,
— Եւան, ադամ —
Շինել ատամ:

Բերա, Թիւնէլ Պաշի
Թէքքէ Ճատտէսի 585 Թիւ
Ֆրիտման Աբարթըման

# ՍԱՐԿԱՒԱԳԻՆ ՏԱՐԵՑՈՅՑԻՆ
## ՎԵՐՋԱԲԱՆԸ

*Աշխարհ ցաւի, վիշտի, սուգի, չ՛կ աշխարհ,*
*Ուր տառապանք ու հեծեծանք ո՛ղբ աշխա՛ր.*
*Կեանքն՝ երազ մ՚է, իսկ ապրիլը՝ տառապանք,*
*Մինչեւ սիրտը զերեզմանին կը ծըփանք...։*

## ԱՌ ԱԶՆԻՒ ԸՆԹԵՐՑՈՂՍ

Սարկաւագին այս անգին,
Տարեցոյցը արդ կրկին՝
Սխալական իբրեւ մարդ,
Ներողութիւն խնդրէ արդ,
Ընթերցողէն անհամար,
Սխալներուն իր համար.
Որ իր կամքէն իսկ անկախ,
*Վրիպակներ* կան լիք, ա՛խ...։
Շնորհաւոր ամանոր.
Բարեբաստիկ օրեր նոր.
Ու տարիներ իսկ անվիշտ,
Լիաշուրթն մաղթէ միշտ.
Օրհներգներով անհամա՛ր,
Ձեզ ամենուդ իսկ համար։

Գին 5 Ղրշ.

2001
0022475
2013
5245
NL0022475